AZG NEW SHABAT.QXD 06/06/2019 22:02 Page 1

31 ՄԱՅԻՍ 2019 ՈՒՐԲԱԹ 21(5568)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Նիդեռլանդների օրենսդիրներն արձագանքում են Էրդողանի ժխտողականությանը

Հաագայից հունիսի 6- ին թվագրված մամլո հաղորդագրության մեջ Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիան հաղորդում է, թե արձագանքելով իր համառ պնդմանը, Նիդեռլանդների խորհրդարանում բանաձեւ է ներկայացվել, որը վերաբերում է Թուրքիայի նախագահ Էրդողանի՝ 2019- ի ապրիլի 24- ի առիթով Հայոց ցեղասպանության ժխտողականությունը վերահաստատող նողկալի արտահայտությունների դատապարտմանը: Քրիստոնեական միության խմբակցության անդամ պատգամավոր **Ջոել Վորդեվինդի** ներկայացրած բանաձեւի տակ ստորագրել են տարբեր կուսակցությունների պատգամավորներ, իսկ արտգործնախարար **Բլոկի** կարծիքը բացասական չի եղել: Խորհրդարանում բանաձեւի քվեարկությունը կկայանա հաջորդ շաբաթ: Հոլանդահայերը ենթադրում են, որ մեծամասնության հավանությանն արժանացած բանաձեւը կհաստատվի:

Ան. Հ.

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Անհապաղ լիցքաթափել Երեւան-Ստեփանակերտ լարվածությունը

Երեւան-Ստեփանակերտ հարաբերություններում ամիսներ շարունակ տիրող երբեմն գաղջ, երբեմն սառը ու հազվադեպորեն ջերմ մթնոլորտը չորեքշաբթի օրը հասավ լարվածության գագաթնակետին, երբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը լրագրողների հետ զրույցում, վկայակոչելով Արցախից տարածված ֆեյսբուքյան ինչ-որ գրառում, մեղադրեց արցախյան կողմին դավադրությունների միջոցով պատերազմ հրահրելու, հողեր հանձնելու եւ, ապա, այդ հանձնման մեղքը Երեւանի իշխանությունների վրա բարդելու մեջ: Ընդունենք՝ փաստորեն դա աննախադեպ ամբաստանություն էր՝ ազգային դավաճանության բոլոր մեղսագրումներով հանդերձ: Աննախադեպ՝ նույնիսկ 1998 թ.ին Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի ճառի հետ համեմատած, երբ ՀՀ առաջին նախագահը զգուշացնում էր բոլորին, որ իր իշխանությանը գալիս է փոխարինելու «պատերազմի կուսակցությունը»...

Վերեւի ակնարկս բոլորովին պատահական չէր: Արդարեւ, ստեղծված ներկա իրավիճակը իր շատ կողմերով հիշեցնում է 1998 հունվարի 7-8-ի ՀՀ Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստին հաջորդած մթնոլորտը, որը հանգուցալուծվեց Առաջին նախագահի հրաժարականով: Միայն մեկ՝ էական տարբերությամբ, որ եթե այն ժամանակ ներիշխանական կոնֆլիկտի հիմքը Արցախյան հիմնահարցի լուծման եւ բանակցային գործընթացի նկատմամբ սկզբունքային դիրքորոշումներն էին, հարցի այսպես կոչված «փուլային» եւ «փաթեթային» տարբերակների շուրջ, ապա այժմ մեր զույգ մայրաքաղաքների միջեւ լարվածության հիմքում ընկած է, իմ տպավորությամբ, համատարած՝ ՀՀ-ից մինչեւ ԱՀ միանձնյա իշխանություն ստեղծելու մարմաջը, որի առաջին դրսեւորումներից մեկը եղավ, նախորդ տարի, Արցախի պաշտպանության բանակի հրամանատարի փոփոխության պահանջը, իսկ վերջինը՝ 2016-ի Ապրիլյան պատերազմի թղթածրարը վերաբացելու առաջադրանքով կազմված հատուկ հանձնաժողովի ստեղծումը: Բոլորս հիշում ենք, որ Քառօրյա պատերազմին հաջորդած օրերին նման քննություն, թեեւ ոչ առանձին հանձնաժողովի ստեղծմամբ, կատարվեց ՀՀ Անվտանգության խորհրդի նիստում, որին հաջորդեցին ոչ քիչ թվով հրամանատարների եւ ենթասպաների պաշտոնազրկումներ, մեր բանակի սպառազինության բարելավմանը ուղղված քայլեր, թեկուզ անբավարար: Հետեւաբար, երեք տարի հետո նույն կամ նման «դոսիեի» բացումը, դարձյալ իմ տպավորությամբ, անբաղձալիներին պաշտոնազրկելու եւ պատժելու, ինչպես նաեւ Հայոց բանակի սպաներին սաստելու նպատակ է հետապնդում: Անշուշտ, միշտ էլ կարելի է վերաբացել կարեւոր դեպքերի ու մանավանդ ռազմական իրադարձությունների թղթածրարները, սակայն դատելով հանձնաժողովի ստեղծման ցուցադրական-հրապարակայնացման ներկա գործելաձեւից, այդ քննությունը չի կարող լուրջ լինել, մանավանդ որ, լուրջ լինելու դեպքում հատուկ հանձնաժողովի եզրակացությունները չեն կարող ենթակա լինել հրապարակայնացման՝ ռազմական-պետական գաղտնիքներ չբացահայտելու նկատառումներով:

Վերեւում շարադրվածին հավելյալ հիմնավորումը կարելի է գտնել լրագրողների հետ վարչապետի նույն զրույցում արտահայտած կցկտուր մի քանի մտքերը՝ բանակցային գործընթացների մանրամասներից Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության տեղյակ չլինելու եւ միայն իր միջոցով բանակցությունների վերաբերյալ փաստաթղթերին ծանոթացած լինելու մասին: Այդ պնդումներից կարելի է հետեւցնել, որ Արցախի իշխանությունները ՀՀ նախկին իշխանության կողմից փաստորեն արհամարհված եւ անտեսված են եղել: Նույնիսկ նախագահ Բակո Սահակյանը, որի «պարընկերը», ինչպես բնութագրում է վարչապետը Սերժ Սարգսյանին, նրան անտեղյակ է պահել բանակցային գործընթացներից: Անհավատալի՞ է, անշուշտ: Բայց վարչապետը դրանով չի բավարարվում: Նա փաստորեն, առանց անունը նշելու, անտեղյակության մեջ մեղադրում է Բակո Սահակյանին, որ անգամ իր քթի տակ չի նկատում, թե հենց Արցախում ովքե՞ր են ուզում դավադրությունների միջոցով պատերազմ հրահրել ու հողեր հանձնել, ապա այդ հանձնումը վերագրել ՀՀ իշխանություններին: Ամենավառ երեւակայության մեջ անգամ չտեղավորվող այս պնդումը կարող է հուշել, որ այժմվանից փորձ է կատարվում հետագա, Աստված մի՛ արասցե, պարտությունների համար «քավության նոխազ» գտնելու...

Իրերի այս մտահոգիչ կացության մեջ հազիվ թե մխիթարական լինի նախագահ Սահակյանի նույն օրը Արցախպրես գործակալությանը տված ողջախոհ եւ լրջախոհ պատասխանը ՀՀ վարչապետին, քաղաքակիրթ հերքելով նրա ասածները բանակցային գործընթացից արցախյան կողմի անտեղյակության վերաբերյալ եւ, միաժամանակ, կոչ անելով «չխարխլել մեր միասնականությունը» ու բոլոր հարցերը, ընդհուպ դավադրությունների վերաբերյալ կասկածները, համատեղ քննարկել փոխադարձ հարգանքի մթնոլորտում:

Նույնը պիտի մաղթեին Հայաստանի, ամբո՛ղջ Հայաստանի բոլոր ողջախոհ մարդիկ: Ներքին լարվածությունը պետք է լիցքաթափել անհապաղ:

«Կարթագենը մեր դռանն է»:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Բեռլինում Ադրբեջանի դեսպանի բողոքի պատասխանը՝ խաղաղ, հյուրընկալ Արցախի մասին ամենօրյա գրառումներ

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա




Ի հեճուկս Ադրբեջանի բողոքի, Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի կենտրոնական մարզադաշտում հունիսի մեկին հանդիսավորությամբ բացվեց ԿՈՆԻՖԱ-ի Եվրոպայի առաջնությունը, որին ուշադրություն սեւեռեցին նաեւ գերմանական լրատվամիջոցները: Մասնավորապես հեռուստատեսության առաջին ալիքի՝ ARD- ի «Մարզական համայնապատկեր» ծրագիրը հունիսի 4- ին 2.29 րոպեանոց ռեպորտաժով անդրադարձավ ֆուտբոլային այդ իրադարձությանը: Լրագրողական զգուշավորությո՞ւնն էր պատճառը, թե՞ անփութությունը, կամ՝ ուրիշ մի բան, որ եթերի հենց սկզբում Ստեփանակերտի մարզադաշտում Բակո Սահակյանին եւ նրա տիկնոջը ցուցադրելով, բացման տոնակատարության վառ պատկերների ֆոնին հնչեց հետեւյալ մեկնաբանությունը՝ անցկացվում է ԼՂ- ում՝... Ադրբեջանում: Նույնիսկ եթե գերմաներեն հնչած տվյալ ապատեղեկատվությունը հաղորդվում էր ի գոհացում Բեռլինում Ադրբեջանի դեսպանի, ենթադրաբար՝ թե սա լսելուց հետո, ռեպորտաժն էլ չի դիտի, արդարացված չէր կարող լինել, քանի որ հետագա ողջ ընթացքը՝ թե՛ հայագիր ու անգլագիր «Արցախ. Բաց դռներ, անուր դարպաս» ցուցադրվող ազդագրերը, թե՛ մեկնաբանի հետագա տեղեկատվությունը Բաքվի համար «հիասթափեցնող» կարող էին լինել:

⇨5

## Հայտարարություն

Ռամկավար Ազատական կուսակցությունը արդեն պաշտոնապես հայտարարել է, որ այս տարվա սեպտեմբերի վերջին Երեւանում տեղի կունենա կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովը, որի ընթացքում էլ կկայանա Կենտրոնական վարչության նոր կազմի ընտրությունը եւ կուսակցության քաղաքական ու տնտեսական նոր պլատֆորմի ընդունումը:

Ներկա հիշեցման պատճառ է հանդիսացել փաստը, որ վերջերս Երեւանում տեղի է ունեցել հավաք, մասամբ Սփյուռքը ներկայացնող որոշ մարդկանց մասնակցությամբ, որոնք համախմբվելով ՌԱԿ նախկին կենտրոնական վարչության նախկին ատենապետ Մայք Խարապյանի շուրջ՝ իրենք-իրենց հռչակել են նոր կենտրոնական վարչություն եւ հայտարարում են, որ իբր ներկայացնում են ՌԱԿ-ը:

Քանի որ այս անձանց մասնավոր հավաքը որոշակի շփոթ էր առաջացրել հայ հանրության շրջանակներում, ցանկանում ենք շեշտել, որ Ռամկավար Ազատական Կուսակցությունը ՀՀ-ում գործում է 1990թ-ից, իսկ պաշտոնապես գրանցվել է 1991թ հունիսից ( Երեւան, Կորյունի 19/ա) եւ իր քաղաքական գործունեությունը առանց ընդհատումների շարունակում է մինչ օրս, այսօր արդեն Երեւան, Հանրապետության 47 հասցեում:

Պաշտոնապես հայտարարում ենք, որ ՀՀ Պետռեգիստրում գրանցված՝ Ռամկավար Ազատական Կուսակցությունը ոչ մի առնչություն չունի ոչ վերը նշված անձանց եւ ոչ էլ նրանց կազմակերպած հավաքի հետ:

Նշված անձանց կատարած արկածախնդրության ցավալի կողմն այն է, որ նրանք չարաշահելով Սփյուռքի նկատմամբ առկա վստահությունը եւ ներկայանալով աշխարհասփյուռ ՌԱ-Կուսակցության անունից, ընդունելության են արժանացել ՀՀ վարչապետի եւ ՀՀ Ազգային ժողովի նախագահի, ինչպես նաեւ Արցախի Հանրապետության նախագահի կողմից: Նրանք, չներկայացնելով իրական ՌԱԿ հայաստանյան եւ սփյուռքյան կառույցներին, կեղծել եւ խաբել են, որպեսզի արժանան ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների ընդունելությանը եւ դրանով իսկ փորձ անեն՝ այսպես ասած լեգիտիմացնելու իրենց անօրինական լինելը:

ՀՀ-ում գործող եւ պաշտոնապես գրանցված Ռամկավար Ազատական կուսակցության Կենտրոնական վարչությունը դիմելով ՀՀ եւ ԱՀ պետական ղեկավարության, խորհուրդ է տալիս վերջիններիս, որպեսզի այսուհետեւ չհայտնվեն նմանատիպ իրավիճակում եւ կապվեն ՌԱԿ՝ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից գրանցված եւ կայուն տեղավայրում գտնվող գրասենյակի հետ եւ ճշտեն՝ արդյոք տվյալ անձը կամ անձինք ներկայացնում են Ռամկավար Ազատական կուսակցությունը, թե՞ ոչ: Նշված անձինք իրենց գործունեությամբ փորձում են վարկաբեկել Ռամկավար Ազատական կուսակցության անունը, նրա հարյուրամյա պատմությունը:

ՌԱԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ատենադպիր՝ Սուրեն Սարգսյան

Ատենապետ՝ Հակոբ Ավետիքյան



**Հրապարակային քննարկումներ Եվրասիական ինտեգրման հեռանկարների մասին ԵԱՏՄ-ում Հայաստանի նախագահության տարում**

էջ 10



**Փամուքի լուսանկարները «Բալկոնում»**

էջ Դ

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Հակասութիւններ

Որ հակասութիւններով լեցուն է Հայաստանը, արդէն ամէն մարդ գիտէ. նորին կողքին հինը տեսնելը, արդիական նորակառոյց շէնքին հարեւանութեամբ փլփլած տնակ մը նկատելը, կամ դաստիարակուած, շրջահայեաց մարդու մը կողքին անդաստիարակ ու անկիրթ մէկը տեսնելը սովորական դարձած երեւոյթներ են, եւ նման շատ բաներ:

Սարդարապատի յաղթանակի օրուան եւ Առաջին հանրապետութեան տարեդարձին առթիւ կազմակերպուած պաշտօնական եւ ժողովրդական հանդիսութիւններն ու տօնակատարութիւնները անգամ մը եւս եկան փաստելու, որ մեր ժողովուրդը գիտէ գնահատել, փառաբանել ու պահպանել մեր սխրագործութիւններն ու պատմական փայլուն էջերը հայրենասիրական ճառախօսութիւններով, երգերով, պարերով, ցնծալով, դիմատետրը լուսանկարներով ու վիտիօնկարներով հեղեղելով: Ապրի՛նք մենք:

Բայց քանի՞ հոգի գիտէ անունները հերոսամարտի ղեկավարներուն: Ո՞ւր են Սարդարապատի յաղթանակը մեզի կտակած հերոսները. Թանգարանի՞ն մէջ, որպէս արձան ու նկա՞ր: Ո՞ւր են անոնց անուններով փողոցներն ու դպրոցները: Բանակին մէջ արդեօք կա՞ն անոնց անուններով ռազմական դպրոցներ ու հաստատութիւններ, կամ վաշտեր ու գունդեր...

Կայ Սարդարապատի հոյակերտ յուշահամալիրը իր զանգակատուներով, ցուլերով ու արծիւներով, աննման, մեծապէս տպաւորիչ, սակայն... սակայն՝ ինչո՞ւ ան հայկական անուն չի կրեր: «Սարդարապատ»ը պարսկական անուն է. ինչո՞ւ արդեօք:

Սա եռեակին առաջինն է, հապա երկրորդն ու երրորդը՝ Բաշ Ապարանն ու Ղարաքիլիսա՞ն... երկուքն ալ թրքական: Թէեւ անոնք անուանափոխուած են հիմա եւ դարձած Արմաւիր եւ Վանաձոր, սակայն Սարդարապատը մնացած է նոյնութեամբ: Չեմ գիտեր, այդ վայրը ունեցա՞ծ է հայկական անուն, երեւի պատմաբանները պատասխանեն այս հարցին:

Մեր Արցախը երկար տարիներ «Ղարաբաղ» էր, մինչեւ որ թօթափեցինք անոր սեւանունը, թէեւ տակաւին միջազգայնօրէն կը մնայ «Karabagh», ինչպէս տակաւին կը շարունակեն իրենց թրքական անունները պահել շատ մը տեղանուններ Հայաստանի եւ Արցախի մէջ:

Անցնինք Առաջին հանրապետութեան տարեդարձի տօնակատարութեանց, որը պատմական մեծ իրադարձութիւն է, Բագրատունեանց թագաւորութեան անկումէն մօտ 900 տարի եւ Կիլիկեան Հայկական թագաւորութեան անկումէն ալ մօտ 600 տարի ետք պատմական Հայաստանի մէկ տասներորդ բեկորին վրայ անկախ Հայաստան մը հիմնուեցաւ, աղքատ, տկար, սակայն մե՛րն էր վերջապէս:

Այստեղ ալ զգացական մեր զեղումներուն հետ խոտոր համեմատողը Առաջին հանրապետութեան կառավարական շէնքին ներկայ վիճակն է. մէկ մասը փիցցայի ճաշարան, միւս մասը՝ դրամատուն... Կարելի չէ՞ր ազգայնացնել եւ թանգարանի վերածել: Իսկ հանրապետութեան կերտիչին, Արամ Մանուկեանի տունը, ամօթ չէ՞ որ ցարդ լքուած ու անմխիթար վիճակի մը մէջ կը գտնուի: Մարդուն գովքը կը հիւսեն, զինք սուրբերու կարգին կը դասեն, անոր արձանը կը կանգնեցնեն, սակայն տունը կը մնայ որպէս որբացած յիշատակ իր անունը կրող փողոցին վրայ:

Մեր խելայեղ տօնակատարութեանց ու ցնծութեանց զուգահեռ պէտք չէ մոռնանք աւելի կարեւոր բաներ: Այս վիճակը կը նմանցնեմ այն պատանիներուն, որոնք իրենց մեծ մօր տարեդարձը շնորհաւորելու եկած են, սակայն անոր հետ խօսող չկայ, քանի որ ամէն մէկը իր հեռախօսը բացած, մէջը թաղուած է, իսկ խեղճ մեծ մայրը ձեռնածալ նստած՝ ափսոսանքով կը նայի անոնց:

**Խմբ. կողմից.-** *Ցանկանում ենք մեր աշխատակցին հիշեցնել, որ միջազգային պատմագիտության մեջ ընդունված է նշանավոր ճակատամարտերը, կարեւոր ժողովներն ու համաձայնագրերը կոչել այն տեղանունների անունով, ուր տեղի են ունեցել դրանք՝ անկախ հետագայում այդ տեղանունների փոփոխությունից: Սրա լավագույն օրինակներից մեկը Ստալինգրադն է, «Ստալինգրադի ճակատամարտ», եւ ոչ թե Վոլգոգրադի...*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ
Թուրքագետ

# Ամերիկյան պատժամիջոցների բուն նպատակը Իրանում վարչակարգի փոփոխության նախադրյալների ստեղծումն է

Լարվածության հետեւողականորեն սրումը մշտական գործոն է դարձել Մերձավոր եւ Միջին Արեւելքում: Դրա հետեւողականության պատճառով սրվում է նաեւ մեծ տերությունների տարածաշրջանային պետություններով միջնորդավորված անհաշտ մրցապայքարը, ինչի արդյունքում տարածաշրջանում ստեղծվում են առկա հակամարտությունների հետագա ծավալման անհրաժեշտ պաշարները, որտեղ անկայության հետ մշտապես խորանում է առկա քաոսը: Այս ամենը, ինչ խոսք, խիստ ողբերգական հետեւանքներ է ունենում չհայտարարված պատերազմի մեջ ներքաշվելու պատճառով ապակայունացած եւ քաոսային իրավիճակում հայտնված երկրների, մասնավորապես Սիրիայի, Իրաքի, Եմենի, Լիբիայի տառապյալ ժողովուրդների համար:

Ժողովուրդների տառապանքը, ինչ խոսք, չի հետաքրքրում տարածաշրջանում ռազմաքաղաքական գերակայության ձգտումով միմյանց հետ անհաշտ մրցակցության մեջ մտած միջազգային ուժերին: Քաոսի տեւականությունը, սակայն, մեծապես հետաքրքրում է նրանց: Ուստի եւ նրանք տեւականության ապահովման նկրտումով ամեն կերպ ջանում են խորացնել այդ քաոսը, պայմանով, որ դա վերահսկելի լինի:



Թեեւ 2015-ի սեպտեմբերին Ռուսաստանի իրականացրած ռազմական միջամտությունը Սիրիային զգալիորեն դուրս բերեց ԱՄՆ-ի վերահսկողությունից, սակայն աշխարհի միակ լիարժեք գերտերության խնդիրը սոսկ Սիրիան չէ, այլ ողջ տարածաշրջանը, այդ իսկ պատճառով էլ նա վճռականորեն փորձում է սրել տարածաշրջանի քաոսային իրավիճակն ամբողջությամբ: Այսպիսով հերթական անգամ ԱՄՆ-ի ոտնձգությունների թիրախն է դառնում Ռուսաստանի եւ Չինաստանի աջակցությունը վայելող, Սիրիայից զատ նաեւ Լիբանանում, Եմենում ու Պաղեստինի Գազայի հատվածում ազդեցիկ դիրքեր ունեցող Իրանը:

Ոտնձգությունների պարագայում խոսքը վերաբերում է «Միջուկային պայմանագրով» չեղյալ հայտարարված պատժամիջոցների վերականգնմանը: Հատկանշական է, որ ԱՄՆ-ը Իրանի դեմ պատժամիջոցներ կիրառելով չի սահմանափակվում, պահանջում է, որ դրանք դաշնակիցների գլխավորությամբ կիրառեն նաեւ մյուս երկրները: Պատժամիջոցներին զուգահեռ ԱՄՆ-ն ուժեղացնում է քաղաքական ճնշումները Իրանի վրա եւ ռազմական ուժեր է կուտակում Պարսից ծոցում, որ սպառնալիքի տակ պահի վերջինին, բայց ապարդյուն:

Ինչո՞ւ: Մինչ հարցին պատասխանելն ասենք, որ միջուկային այդ պայմանագիրը կնքվել էր դեռեւս 2015 թ. հուլիսի 14-ին եւ ուժի մեջ էր մտել 2016-ի հունվարին: Դա միջազգային շրջանակներում համարվում էր արտաքին քաղաքականության մեջ նախագահ Բարաք Օբամայի խոշորագույն ձեռքբերումը: Ընդորում պայմանագրի տակ ստորագրել էին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամները՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Չինաստանը, ինչպես նաեւ Գերմանիան, այն էլ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության՝ ՄԱԳԱՏԷ-ի եզրակացության հիման վրա, թե Իրանի միջուկային ծրագիրը բացառապես խաղաղ նպատակներ է հետապնդում:

Դոնալդ Թրամփը, սակայն, անտեսեց այս ամենը. 2018 թ. մայիսի 8-ին որոշեց ԱՄՆ-ին դուրս բերել այդ պայմանագրից, որին նա դեռեւս ընտրարշավի օրերին համարել էր «աղետալի»: Չնայած Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, նույնիսկ Կանադայի հակազդեցությանը, ԱՄՆ նախագահը նույն թվի նոյեմբերին սկսեց Իրանի դեմ կիրառել նախքան պայմանագրի ստորագրումը կիրառվող բոլոր պատժամիջոցները, փորձելով դրանց կիրառումը պարտադրել այնպիսի երկրներին, ինչպիսիք են Թուրքիան, Հարավային Կորեան եւ Ճապոնիան, էլ չենք խոսում Ռուսաստանի, Չինաստանի եւ Հնդկաստանի մասին, որոնք դժվար թե ենթարկվեն Թրամփի պարտադրանքին:

Ակնհայտ է, որ այդ դեպքում պատժամիջոցները չեն ծառայի Իրանի տնտեսությունը հիմնովին քայքայելու Թրամփի նպատակներին, որպես ճնշման լծակ կնվազի դրանց արդյունավետությունը եւ դրանք չեն կարող Թեհրանին ցանկալի հունով ուղղորդելու միջոց հանդիսանալ Վաշինգտոնի համար: Ըստ երեւույթին, Իրանի սառնասիրտ քաղաքականությունը նմանապես նվազեցնում է ամերիկյան քաղաքական ճնշումների, ռազմական սպառնալիքների եւ տնտեսական պատժամիջոցների արդյունավետությունը, որ ԱՄՆ-ի բարձրագույն ղեկավարներն անընդմեջ իրարամերժ հայտարարություններ են անում: Ավելին, նրանց ձեռնարկած գործողությունները միանգամայն հակասում են հայտարարությունների ոգուն:

Դրանում համոզվելու համար բավական է անդրադառնալ նախագահ Թրամփի հայտարարություններին, որոնց մշտապես ձայնակցում է պետքարտուղար Մայք Պոմպեոն: Մայիսի 20-ին ԱՄՆ նախագահը հայտարարել էր. «Եթե Իրանը պատերազմի է ձգտում, թող իմանա, որ դա նրա վերջը կլինի: Այլեւս Իրանը չպետք է փորձի սպառնալ ԱՄՆ-ին»: Այս սպառնալից հայտարարությանը մայիսի 22-ին հաջորդել էր Թրամփի տրամագծորեն հակառակ հայտարարությունը. «Ես Իրանի դեմ պատերազմ չեմ ուզում: Սակայն, պետք չէ ինքներդ ձեզ խաբեք, այս երկրում գոյություն ունի ռազմարդյունաբերական կոմպլեքս»:

Իրանի դեմ պատերազմ չուզելը, սակայն, ամենեւին չէր խանգարել, որ Թրամփը ռազմական ուժեր կուտակի Պարսից ծոցում եւ այնտեղ գործուղվի «Աբրահամ Լինկոլն» ավիակիրը: Մինչ Թրամփը իրարամերժ հայտարարություններով փորձում էր ապակողմնորոշել միջազգային հանրությանը, ԱՄՆ պետքարտուղար Պոմպեոնն էլ բանակցություններ սկսելու կոչերով իրանական կողմին էր դիմում: Նրան մայիսի 21-ին, ինչպես նշում է «Հաբեր թուրք» կայքէջը, պատասխանել է Իրանի նախագահ **Հասան Ռոհանին**, մասնավորապես ասելով. «Հակառակորդն ուզում էր, որ լարվածությունը սրի Իրանը: Եթե մենք ենթարկվեինք նրա սադրանքներին, ապա այսօր մեր դեմ, բացի ԱՄՆ-ից, պատժամիջոցներ կկիրառեին միջազգային հանրությունն ու ՄԱԿ-ը: Անցյալ տարի ՄԱԿ-ի համաժողովում 5 մեծ տերության ղեկավարներն առաջարկեցին միջնորդել, որ հանդիպեմ Թրամփին: ԱՄՆ պետքարտուղարը 8 անգամ բանակցությունների առաջարկ արեց մեզ: Սակայն հիմա ոչ թե բանակցությունների, այլ դիմադրության եւ պայքարի ժամանակն է»:

Հունիսի 1-ին պետքարտուղար Պոմպեոն, առանց նախապայմանների, բանակցություններ սկսելու կոչով վերստին դիմեց իրանական կողմին: Նրա դիմումն էլ հաջորդ օրը մերժեց Իրանի արտգործնախարարության մամուլի քարտուղար **Աբբաս Մոսեւին**: Իրանի նախագահ Ռոհանիի պատասխանից եւ Մոսեւիի մերժումից ակնհայտ է դառնում, որ ԱՄՆ-ն իրականում Իրանի դեմ պատերազմելու մտադրություն չունի: Այդ դեպքում հարց է առաջանում, ինչո՞վ բացատրել քաղաքական ճնշումներն ու մշտապես հնչող սպառնալիքները: Թվում է՝ Իրանին սեփական նախաձեռնությամբ բանակցությունների մեջ ներքաշելու ամերիկյան հաշվարկներով: Մանավանդ որ 2018-ի մայիսին «Միջուկային պայմանագրին» ԱՄՆ-ի մասնակցությունը կասեցնելուց հետո, պետքարտուղար Պոմպեոն արտահայտվել էր Իրանի հետ նոր պայմանագիր կնքելու անհրաժեշտության մասին, առաջադրելով 12 նախապայմաններ, ըստ որոնց Իրանը Սիրիայից պետք է դուրս բերեր իր բոլոր զորամիավորումները, դադարեցներ ամեն տեսակի օժանդակությունը Հզբոլլահի, Համասի եւ Իսլամական ջիհադ շարժման պես «ահաբեկչական» կազմակերպություններին Մերձավոր եւ Միջին Արեւելքի ողջ տարածքում, հրաժարվելով Եմենում հութիներին ռազմական օգնություն տրամադրելու գայթակղությունից: Որքան էլ պետքարտուղարի նախապայմանները հիմնավորեն Իրանին բանակցությունների մեջ ներքաշելու տեսակետը, չմոռանալ, որ դրանք տարածաշրջանում ակնհայտ մեկուսացում են ենթադրում: Հետեւաբար բանակցությունները չեն կարող ամերիկյան ճնշումների եւ սպառնալիքների վերջնական նպատակը լինել: Դրանք, ամենայն հավանականությամբ, առաջադրվում են Իրանում իսլամական վարչակարգի փոփոխության նախադրյալներն ստեղծելու հեռագնա նպատակով:

Որպես երկրի իշխանությունների դեմ ժողովրդական զանգվածների դժգոհությունն առաջացնելու միջոց, նույն նպատակին են ծառայում նաեւ պատժամիջոցները: Ի վերջո Սիրիայում, Լիբանանում, Գազայի հատվածում եւ առհասարակ ողջ տարածաշրջանում Իրանի վարած քաղաքականությունը, ի տարբերություն պատժամիջոցների, բնույթով տնտեսական չէ, այլ ռազմավարական: Կնշանակի Իրանին բանակցությունների մեջ ներքաշելու առումով նպատակին չեն կարող ծառայել նաեւ այդ պատժամիջոցները:

AZG NEW SHABAT.QXD 06/06/2019 22:02 Page 3



ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
դ.գ.թ.

# Հայաստանը եւ փոփոխվող աշխարհառազմական իրավիճակը



Աշխարհը փոփոխվում է շատ արագ: Այդ ամենի պատճառը տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական սրընթաց զարգացումներն են, որոնք նոր օրակարգ եւ ապահովական նոր իրավիճակ են թելադրում:

Աշխարհը թվայնանում է, այսինքն թվային է դառնում մեր տնտեսությունը, քաղաքականությունը, մեր իրականությունը: Մենք արդեն չենք կարող մեր օրը պատկերացնել առանց ժամանակակից տեխնոլոգիաների՝ խելացի հեռախոսների, համացանցի, սոցցանցերի ու այսպես շարունակ:

Այս ամենը ազդում է նաեւ պետությունների ռազմական ու ռազմաքաղաքական օրակարգերի վրա: Մենք կարիք ունենք նոր տեխնոլոգիաների, նոր՝ թվային լուծումների, ու այսպես շարունակ:

Աշխարհի ապագան արհեստական ինտելեկտն է. ով տիրապետեց նրան, նա էլ կգերիշխի աշխարհում, պնդում են շատ մասնագետներ: Արհեստական ինտելեկտը կարեւոր է նաեւ ռազմական ու ռազմաքաղաքական լուծումների՝ թվայնացման ու զարգացման համար:

Այդ լուծումները արագացնում են գործընթացները, որոշումների, խելացի ու հիմնավորված, ընդունման ժամանակահատվածը եւ այլն: Իսկ այդպիսի որոշումների ընդունման արագությունից է կախված ապագա պատերազմում քո հաղթելու հավանականությունը:

Արհեստական ինտելեկտը եւ թվային լուծումները նաեւ կարող են հեշտացնել ու սինխրոնացնել կառավարման ու ղեկավարման խնդիրները ռազմական գործողությունների ժամանակ, որն այդքան անհրաժեշտ է բանակին: Ներկայումս մեծաքանակ բանակներին ու զենքի հսկայական պաշարներին կարելի է հակադրել միայն թվային լուծումները՝ արհեստական ինտելեկտը, որը կարող է վճռական գործոն լինել ապագա պատերազմներում:

Այս նախաբանը որոշեցի գրել, քանի որ Հայաստանի շուրջ ընթանում են զարգացումներ, որոնք, մեղմ ասած, ոչ մի կերպ չեն նպաստում տարածաշրջանում երկարատեւ խաղաղության, այլեւ այն հրում են դեպի նոր պատերազմի: Ադրբեջանը եւ Թուրքիան օգտվելով ներհայաստանյան խառնակ իրավիճակից, նորելուկ իշխանավորների կառավարման անփորձությունից, ավելացրել են ոչ միայն ռազմական հռետորաբանությունը, այլեւ ռազմական զորավարժությունների թվաքանակը:

Միայն վերջին երկուսուկես ամսում Ադրբեջանը իրականացրել է 4 ռազմական զորավարժություններ, որոնցից 2-ը Թուրքիայի հետ համատեղ: Վերջին զորավարժությունը կսկսվի այսօր, եւ կտեւի մինչեւ հունիսի 11-ը, այն տեղի է ունենում Նախիջեւանի տարածքում:

Օգտվելով վերջին մեկ տարվա ընթացքում ՀՀ իշխանությունների անատամ քաղաքականությունից, հատկապես տարածաշրջանում ընթացող ռազմաքաղաքական իրողությունների մասով Ադրբեջանը ավելացրել է թե՛ զենքի ներկրումը, թե՛ սահմանների ամրացման ինժեներական աշխատանքները եւ թե ռազմական զորավարժությունների իրականացման հաճախականությունը: Ինչպես իրենց պաշտոնական հաղորդագրություններում է նշվում, համատեղ զորավարժությունների նպատակն է ավելացնել զորքերի համատեղ կառավարման հմտությունները:

Ադրբեջանը չի թաքցնում, որ պատրաստվում է պատերազմի, չի էլ թաքցնում, որ այս գործը պատրաստ է իրականացնել համատեղ Թուրքիայի հետ, ինչի ապացույցն են երկու ամսում իրականացված երկու համատեղ զորավարժությունները: Այս գործընթացում՝ զորքերի կառավարման համար կարեւոր է հենց զորավարժությունների ֆակտորը, քանի որ միայն այդպես է հնարավոր ձեռք բերել համապատասխան հմտություններ:

Ու այս ամենը տեղի է ունենում Հայաստանում, ներքաղաքական դիսկուրսում ատելության քարոզի ֆոնի վրա, որի հիմնական «շարժիչ» ուժը գործող իշխանություններն են: Հայությանը բաժանում են սեւերի ու սպիտակների, նիկոլականների ու հականիկոլականների, քոչարյանականների ու հակաքոչարյանականների, հայաստանցիների ու ղարաբաղցիների, եւ այսպես շարունակ:

Սա դեռ քիչ չէ, պետական մակարդակով վարկաբեկում են պատերազմում հաղթած գեներալներին ու ընդհանրապես այդ պատերազմը հաղթած բոլոր հերոսներին: Առաջ են մղվում նոր, այսպես կոչված անձեր, որոնք իրենց ձեւով՝ անցած կյանքով ու կենսագրությամբ, միայն վարկաբեկում են հայի տեսակը, նրա դավանած արժեքները՝ կրոնը, ընտանիքը, բանակում ծառայած լինելու փաստը եւ այլն:

Հիշեցնեմ, որ նույն այդ ժամանակ ՀՀ-ի ու ԱՀ-ի սահմաններին երկու շաբաթը մեկ թշնամին իրականացնում է հերթական ռազմական զորավարժությունը, ամեն անգամ ընտրելով այնպիսի ռելիեֆ, որը հատուկ է Հայաստանի Հանրապետությանը ու Արցախին: Այսպիսով հստակ կերպով մեսիջ ուղարկելով ու այդպիսով փորձելով ճնշում գործադրել հայկական կողմի վրա, բանակցություններում որոշակի առավելություն ստանալու ակնկալիքով:

Հիշեցնենք, որ նախկինում Ադրբեջանը չէր փորձի նման «լեզվով» խոսել Հայաստանի հետ, սակայն ներկայումս, տեսնելով հասարակության պառակտվածությունը, փորձում է դա օգտագործել իր դիրքերի ամրապնդման ու զորքերի մարտունակությունը բարձրացնելու համար: Վտանգը մեր դռների հետեւում է, սա այն ճշմարտությունն է, որ պետք է այսօր հասկանալ ու փորձել ազգովին միավորվել: Մեր միասնությունը արդեն իսկ պատճառ կարող է լինել, որ թշնամին մեկ անգամ եւս մտածի՝ արդյո՞ք արժե սկսել ռազմական արկածախնդրություն մեր սահմաններին, թե ոչ:

Տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակը փոխվում է, ռազմաքաղաքական հավասարակշռությունը խախտվում ամեն վայրկյան: Այս ամենին հնարավոր է դիմակայել ոչ միայն միասնությամբ, այլեւ հայկական զինված ուժերը ռազմական կառավարման նոր մակարդակների բարձրացնելու շնորհիվ:

Հնարավոր ռազմական բախման դեպքում առավելությունը նրանն է լինելու, ով կկարողանա թվային արդի լուծումները ճիշտ ու գրագետ ձեւով օգտագործել: Դասական աշխարհաքաղաքական լուծումները, մոտեցումներն ու վերլուծությունները այլեւս օրակարգային չեն: Ներկա աշխարհում նույնիսկ մանր պետությունները ռազմաքաղաքական փոփոխություններ իրականացնելու գայթակղություն ունեն: Հետեւաբար ասել, թե միայն մեծ պետություններն են որոշում աշխարհի բախտը, այլեւս ակտուալ չէ: Հարավային Կովկասի տարածաշրջանում սահմանային մի փոքր արկածախնդրությունը կարող է ռազմաքաղաքական լայնատարած ու նոր իրողության սկիզբ հանդիսանալ:

## Լեւոն Ա.ն եւ Կիլիկիայի թագավորությունը




«Ութ հարյուր տարի առաջ վախճանվեց հայոց պատմության եւ մշակույթի բնագավառներում անջնջելի հետք թողած (այլ պետությունների հետ հարաբերությունների զարգացման առումով) Կիլիկիայի թագավոր Լեւոն Ա-ն, որ երրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ ցուցաբերած աջակցության համար թագ էր ստացել Ֆրիդրիխի հաջորդից՝ գերմանացի կայսր Հենրի Դ-ից: Նա թագադրվել էր 1199-ի հունվարի 6-ին Տարսոնի Մայր տաճարում՝ Ռուբինյան, Հեթումյան տոհմերի եւ խաչակրաց ազնվականների ներկայությամբ: Գերմանական Հալլե քաղաքը մայիսի 17-ին եւ 18-ին նշեց այս տարելիցը մի շարք հանդիսություններով, որոնց մաս էր կազմում նաեւ Գերմանիայի եւ Հայաստանի միջեւ մշակութային համաձայնության ստորագրման 20-ամյակը: Նախ բացվեց ցուցահանդես Մորիցբուրգ պետական թանգարանում, որը շարունակվելու է բաց մնալ մինչեւ հուլիսի 29-ը, եւ հաջորդ օրը կազմակերպվեց միջազգային գիտական խորհրդակցություն Մարտին Լութեր համալսարանում», «Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթում տեղեկացնում է **Մուրիել Միրաք-Վայսբախը**:

Խորհրդակցությանը մասնակցել են ականավոր գիտնականներ Հայաստանից, Միացյալ Նահանգներից եւ Ֆրանսիայից: Ողջույնի խոսքերով հանդես են եկել Լեոպոլդինայի գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ պրոֆ. **Գունար Բերգը**, Արեւելյան ուսումնասիրությունների ինստիտուտի պրոֆ. **Կոռնելիա Հոռնը** եւ Հայաստանի դեսպան **Աշոտ Սմբատյանը**: Ուղերձ է հղել նաեւ Մեծի Տանն Կիլիկիայի կաթողիկոս **Արամ Ա**-ն: Հ.Ծ.

## Ալբերտ Ծաղիկյան: «Չփառաբանված հերոսներ»



«Այս գիրքը կարեւոր է ոչ միայն այն առումով, որ սերունդներին է հանձնում 20-րդ դարի հայոց պատմության վերաբերյալ պահպանված բանավոր տեղեկություններ, այլեւ մանրամասնություններ Արեւմտյան Հայաստանի Քաչխար լեռան ստորոտին (Էրզրումի վիլայեթի գավառակում) գտնվող Խոտորջուր ինքնավար համայնքի (XVI-XX դդ) բնակիչների ճակատագրի մասին, որոնք հանգամանքներից դրդված (սակավահողություն, տեւական պայքար թուրք ավազակախմբերի դեմ) ստիպված են եղել պանդխտության դիմել եւ մեկնել Կովկաս, Ղրիմ, Ուկրաինա, եւայլն», գրում է «Միրոր-Սփեքթեյթրում» **Արամ Արքունը** գրախոսելով Ալբերտ Ծաղիկյանի վերջերս լույս ընծայած «Unsung Heroes» (Չփառաբանված հերոսներ) գիրքը, որի 43 էջերում ոգեկոչվում են մոռացված հերոսներ Արտաշես Գալուստ Գեւորգյանը, Թորգոմ Գալուստ Գեւորգյանը, Օննիկ եւ Գուրգեն Յանիկյանները եւ Ասատուր Մելիք Հասան-Ջալալյանը:

Գրքույկը ակադեմիական լուրջ ուսումնասիրություն չէ, այլ պարունակում է ընտանեկան լայն շրջանակի կապակցված իրադարձությունների շարադրանքը: Ծաղիկյանը ներկայացրել է Ահմեդ Ջեմալ փաշայի, ռուսական պետական գործիչ, իշխան Գրիգորի Գոլիցինի եւ այլոց սպանությունները: Նրա մորական կողմի տատիկի ավագ քույրը՝ Արփենիկ Ռոստոմյանը ամուսնացած է եղել Արտաշես Գեւորգյանի հետ: Իսկ հորական կողմից պապուպապի եղբայրը եղել է Ասատուր Հասան Ջալալյանը: Գուրգեն Յանիկյանի հայրը Խոտորջուրի գյուղապետ Վարդանի եղբայրն է: Իսկ Վարդանի որդին՝ Օննիկ Յանիկյանը ամուսնացած է եղել վերոնշյալ գրքույկի հեղինակի տատիկի ամենաավագ քրոջ հետ:

«Հույս ունեմ, որ գրքույկս նպաստելու է, որ Յանիկյան ընտանիքի ամերիկացի հետնորդները կապը վերահաստատեն իրենց հայկական արմատների հետ», նշել է հեղինակը: Հ.Ծ.

AZG NEW SHABAT.QXD 06/06/2019 22:02 Page 4



# Եկեղեցի-պետություն հարաբերությունները Հայաստանում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Դետրոյթ-Երեւան

Հայոց եկեղեցին կենտրոնական, առանցքային դեր է խաղացել մեր պատմության մեջ։ Երբ Հայաստանը կորցրեց իր անկախությունը, եկեղեցին պետության դերը վերցրեց իր ուսերին։ Դա ակներեւ է հատկապես Օսմանյան դարաշրջանում։ Սուլթանները ճանաչեցին հայոց եկեղեցուն վերապահված հատուկ դերը եւ գտան, որ եկեղեցին հարմար միջոց է կառավարելու համար հայ միլլեթի ներքին հարցերը։

Այսպիսով, Սուլթանը ճանաչեց եւ վավերացրեց 1863-ին հայ ազգային սահմանադրությանը։ Ռուսաստանի ցարը նույնպես «Պոլոժենիան»՝ սահմանադրությունը օգտագործեց կառավարելու համար հայոց եկեղեցու խնդիրները ռուսական կայսրությունում։ Նույնիսկ այսօր այդ ժամանակաշրջանից մնացած որոշ ուղեցուցային սկզբունքներ օգտագործվում են սփյուռքահայ համայնքներում։

Խորհրդային ժամանակներում, հոգեւորականությունը հետապնդվում էր եւ եկեղեցապատկան կալվածները առգրավվում էին։ Այդուհանդերձ խորհրդային ղեկավարները հասկանալով, որ հայոց եկեղեցին կարող էր կամրջել հարաբերություններ հայրենիքի հետ, ստեղծեցին հատուկ մի հաստատություն կանոնավորելու կամ վերահսկելու համար հայոց եկեղեցու խնդիրները։

Երբ խորհրդային վարչակազմը սկսեց գործի դնել «խորհրդային մարդու» ձեւավորելու իր ծրագրերն ու սկզբունքները, առաջին հերթին անհրաժեշտ էր կազմաքանդել անհատի բարոյական եւ կրոնական արժեքները, եւ փոխարենը քաղաքացիներին ներարկել նոր արժեքներ։ Խորհրդային կարգերի փլուզումով, փլուզվեց նաեւ սոցիալական այդ փորձարկումը։ Հայաստանի քաղաքացիների մեծ մասի համար եկեղեցին, կամ կրոնը ընդհանրապես, ուներ լոկ մակերեսային նշանակություն, ինչպես խորհրդային համակարգի տարիներին։ Այդ պատճառով էլ այսօր հասարակությունը Հայաստանում խոցելի է ամեն տեսակի կրոնական աղանդների գայթակղությունների առաջ, որոնք ամեն ինչ խոստանում են եւ հայոց եկեղեցին, եւ եկեղեցական իշխանությունները չեն կարողանում համապատասխան քայլերով արձագանքել դրանց։



Հայաստանի քաղաքացիների համար կրոնական հոգեւոր առաջնորդի կերպար է հանդիսանում Վազգեն Ա. կաթողիկոսը, որին, ըստ նրանց ըմբռնմամբ, ոչ մի ուրիշ առաջնորդ չի հավասարվել իր բարոյական կերպարով։

Քանի որ հայոց եկեղեցին դեռեւս պարտավորված է վերականգնել իր պատմական դերակատարությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում, այն հարկադրված է վերակազմավորել իրեն եւ կանոնակարգել իր հարաբերությունները պետության հետ։

Արդեն մի քանի տասնամյակ է, որ սահմանադրությունը կամ հայոց եկեղեցվո կանոնադրությունը վերջնականորեն չի ձեւավորվել, մի բան, որ իր բացասական ազդեցությունն է թողնում նրա դերակատարության վրա, որպես բարոյական իշխանություն։

Անկախությունից ի վեր Հայաստանի իշխանությունները նույնպես, քաղաքացիների մտածելակերպին համապատասխան, մակերեսային, կամ երկրորդական նշանակություն են տվել եկեղեցու դերակատարությանը, համարելով այն ոչ առաջնային կարեւորության խնդիր։

Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը միամտորեն հավատացած էր, որ կախարդական փայտիկի միջոցով կկարողանա լուծել մեր եկեղեցու երկփեղկվածությունը։ Նա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ին Էջմիածին հրավիրեց դառնալու Ամենայն Հայոց կաթողիկոս՝ Գարեգին Ա. անվամբ։ Նրան հաջորդած նախագահները ավելի լավ բան չկարողացան անել։ Նրանք փորձեցին օգտագործել երկփեղկվածությունը հօգուտ իրենց քաղաքական նպատակների։

Չնայած ձեւական համաձայնություն գոյություն ունի 1990-ականներից սկսած եկեղեցու եւ պետության միջեւ, ներկա վարչակազմը կարիք է զգում թավշյա հեղափոխությունից հետո նորը ձեւավորելու։ Հայաստանի ներկա սահմանադրության մեջ հատուկ հոդված կա (N163-2), որ ճանաչում է հայոց առաքելական եկեղեցու հատուկ տեղը, նրա հոգեւորականները միակն են, որ ծառայում են հայոց բանակում։

Այս կարգավիճակը քննադատում են Հայաստանում գործող վարձկան «ունիվերսալիստները», որոնք սահմանադրությանը հակառակ, որ դավանանքի ազատություն է սահմանում, պահանջում են, որ Առաքելական եկեղեցին հռչակվի պետական կրոն։

Անկախությունից ի վեր Հայաստանի իշխանությունները պատշաճ վերլուծական մոտեցում չեն իրականացրել սփյուռքահայության վերաբերյալ, ուստի եւ չեն կարողացել երկկողմ համաձայնությամբ քաղաքականություն մշակել, այդ թվում նաեւ եկեղեցական հարցերի վերաբերյալ։ Հայոց եկեղեցին դեռեւս մնում է, Հայաստանի քաղաքացիների համար, սփյուռքյան երեւույթ կամ կառույց։

Եկեղեցու վերաբերյալ վարչապետի կողմից արտասանված մի անզգույշ հայտարարություն բավական մեծ աղմուկ եւ շփոթ առաջացրեց։ Նա առաջ քաշեց եկեղեցին պետությունից անջատելու գաղափարը, որը նշանակում է, որ պետությունը հրաժարվում է եկեղեցուն պաշտպան հանդիսանալու իր դերից։ Այդ հայտարարությունը խրախուսեց իրենց անձնական հաշիվները ունեցող մարդկանց, որ արշավ ծավալեն ընդդեմ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի։ Փաշինյանը, բարեբախտաբար, շուտ անդրադարձաւ իր արտահայտության ազդեցությունը եւ փորձում է ներկայիս հարթեցնել խնդիրները կաթողիկոսի հետ։ Երկու կողմերն իրականում աշխատում են այդ ուղղությամբ։ Մայիսի 3-ին վարչապետն ու կաթողիկոսը համատեղ հանդիպում ունեցան կարգավորելու համար եկեղեցի-պետություն հարաբերությունները։ Իրենց ելույթներից կարելի է ենթադրել, որ դեռեւս որոշ տարաձայնություններ կան, բայց երկու կողմերը շարունակելու են երկխոսությունները հասնելու համար միասնական համաձայնության։

Կաթողիկոսի եւ վարչապետի ելույթներին անդրադառնալով կարելի է մաղթել, որ համապատասխան հանձնախմբերը համալրված լինեն ավելի մասնագիտացած անձերով։

Կաթողիկոսի ելույթում երեք սկզբունք էր հնչում։ Ճանաչել Հայոց առաքելական եկեղեցին որպես Հայաստանի ազգային եկեղեցին, Սկանդինավյան երկրների ազգային եկեղեցիների օրինակով, եկեղեցին եւ պետությունը, ճիշտ է, անջատ կառույցներ են, բայց ոչ երբեք իրար հակամարտ, եւ վերջապես պետությունը պարտավոր է եկեղեցուն վերադարձնել այն կալվածները, որ առգրավված են եղել խորհրդային ժամանակաշրջանում։

Այս վերջին խնդիրը երկու հարց է պարունակում իր մեջ. մեկը կալվածներ, որոնք եկամտաբեր են, մյուսը՝ հինավուրց եկեղեցիներ եւ վանքեր, որոնք հսկայական ներդրումների կարիքն ունեն պահպանելու համա իրենց պատմական նշանակությունը։

Իսկ Փաշինյանի շատաբանությունից կարելի է առանձնացնել երկու հիմնական գաղափարներ։ Մեկը, որ պետությունը պարտավոր է եկեղեցական ունեցվածքից եւ բիզնես գործունեությունից հարկեր հավաքել եւ մյուսը՝ որ համընդհանուր քրիստոնեական արժեքներին աջակցելը ավելի կարեւոր է, քան հայոց առաքելական եկեղեցու հատուկ դերն ու նշանակությունը ընդունելը։

Վերջին այս գաղափարը առաջ է քաշվում արտասահմանյան կրոնական աղանդների ոչ-կառավարական կառույցների կողմից, որոնք Հայաստանում ակտիվ գործունեություն են ծավալում ժողովրդի շրջանում՝ նվաստացնելու համար ավանդական արժեհամակարգը։

Կոմունիզմը պաշտպանում էր զանգվածների համընդհանուր իրավունքները, բայց ի վերջո խորտակեց առանձին վերցրած մի շարք երկրներ։ Նույնը կարող է տեղի ունենալ, եթե մենք շեշտը դնենք հայոց Առաքելական եկեղեցու փոխարեն համընդհանուր քրիստոնեական արժեքների վրա։ Վարչապետը նաեւ խոստովանեց, որ վերջերս Ավետարանը վերընթերցելով հաստատել է, որ Սուրբ գրքում նշված արժեքները համահունչ են իր քաղաքական կուսակցության՝ «Իմ քայլի» արժեհամակարգի հետ։

Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

ՅՈՎԻԿ ԱՖՅԱՆ

## Սեւ սատանա

Եւ ուրեմն քաղաքում սատանա կա։ Ավելի ճիշտ՝ սատանաներ։ Հագնվում են սեւ շորեր, հավաքվում են խմբերով ու ոչ թե մայթերի տակով են քայլում, այլ դրանց վրայով, ինչի իրավունքը ոչ մի սատանա չունի։ Ավելին, ունակ են նույնիսկ հեռվից հեռու կամ էլ սոցիալական ցանցերի միջոցով ազդել սպիտակ մարդկանց հոգեբանական նուրբ թելերի վրա՝ դրդելով նրանց եւս սեւանալ ու երկրով մեկ տարածել սեւը։ Այդ խմբերն, ի դեպ, այնքան զիլ են, որ միայն ոստիկանությունը բավարար չէ, որպեսզի արմատախիլ արվեն, հետեւաբար գործին միացել է ԱԱԾ-ն եւ դա տեղի է ունեցել անձամբ վարչապետի՝ Արագածից էլ բարձր հրամանով։ Ցավոք պարզ չէ, թե հատկապես օրվա ո՞ր ժամերին եւ քաղաքի կոնկրետ ո՞ր փողոցներում են վխտում սատանայական այդ խմբերը, բայց վարչապետը գիտի բոլոր սեւազգեստների անունները եւ զարմանում է, թե ինչո՞ւ համապատասխան մարմինները նրանց չեն մեկուսացնում սպիտակ հասարակությունից, թիթեռնիկ չեն կապում նրանց սեւ զգեստի վրա ու չեն ուղարկում գրողի ծոցը, ցանկալի է, որ գրողը Օրուելը լինի, որի գրքերում նույնիսկ հույսը մեռնում է։

Հիմա, տրամաբանում են, որ հանրապետությունով մեկ հայտարարված է տագնապ. բոլոր այն քաղաքացիները, որոնք կտեսնեն սեւազգեստների կուտակումներ, կարող են դիմել համապատասխան մարմիններին, որոնք էլ սեւ համազգեստներով ու դիմակներով կգան եւ վարչապետի հրամանն ի կատար կածեն՝ երկիրն ամբողջովին սպիտակեցնելով, ինչն իմիջիայլոց, երկիրը սեւացնելու ճանապարհներից մեկն է։

Չի բացառվում, որ շուտով ԱԺ փոխնախագահներից մեկը հանդես գա հայտարարությամբ, որով կոչ անի Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ավելորդ թյուրիմացությունից խուսափելու համար եկեղեցականների սքեմի գույնը փոխել՝ դարձնելով այն, օրինակ, դեղին կամ էլ կապույտ, որոնք համարվում են 2019-ի ամենանորաձեւ երանգները։ Սրանից հետո Բաց հասարակություններ-Հայաստան հիմնադրամը, նույն նպատակով, կոչ կանի աշխարհի բոլոր սեւամորթներին Հայաստան չգալ, իսկ ովքեր որ արդեն եկել են, անհապաղ լքել երկրի տարածքը։ Միացյալ Նահանգների դեսպանատունը, անշուշտ, կսատարի այս հայտարարություն-կոչերին՝ ընդգծելով, որ դրանք միմիայն բխում են Հայաստանի ժողովրդավարացման բուռն եւ կրքոտ գործընթացից, որն սկսվել է հատկապես անցյալ տարվա՝ ապրիլ-մայիսյան իրադարձություններից հետո, եւ որի ամբողջ ընթացքում Միացյալ Նահանգները կանգնելու ու նույնիսկ քայլելու է Հայաստանի՝ վճռական բարեփոխիչ կառավարության կողքին եւ նրա հետ։

Եւ միայն այս հույժ կարեւոր գործընթացից հետո, երբ սեւազգեստները կվերադառնան իրենց բնակության մշտական վայր՝ մայթերի տակ, Հայաստան կժամանեն օտարերկրացի գործարարներն ու առատորեն ներդրումներ կանեն մեր ժողովրդավարական երկրում, որտեղ ամենեւին էլ կարեւոր չէ, թե մարդիկ ինչ են խոսում, առավել եւս՝ ինչ են հագնում, քանի որ երկրով մեկ բազմակարծություն է, ինչը ժողովրդավարության սյուներից մեկն է։

Եւ ուրեմն, որպեսզի ներդրումները գան, պետք է սեւազգեստները գնան։ Իսկ երբ ներդրումները գան, մենք կսկսենք լավ ապրել, կկարողանանք սեւ մեքենաներ գնել ու սեւ կոստյումներ կրել։

⇨1 «ԿՈՆԻՖԱ-ին անդամակցող երկրների համար սա հնարավորություն է իրենց գոյությունը փաստելու, սեփական մշակույթի մասին խոսելու եւ աշխարհին հայտնելու, թե այսպիսի երկիր գոյություն ունի: Ամեն բան՝ դրական շեշտադրմամբ», ասում է ԿՈՆԻՖԱ-ի գլխավոր քարտուղար **Սաշա Դյուրկոփը**՝ Ստեփանակերտից, ARD- ի եթերում: Միջազգայնորեն չճանաչված ԼՂ-ի համար ԿՈՆԻՖԱ-ն հնարավորություն է. 6000 հանդիսական տեղավորող՝ առաջնությու-թյան գլխավոր քարտուղար, մաթեմատիկայի դոկտորական թեզը սուղ ժամանակի, ֆուտբոլին նվիրվածության պատճառով մի կողմ դրած, գերմանացի 32- ամյա տնտեսագետ Սաշա Դյուրկոփն իրենց կառույցը ՖԻՖԱ-ին մրցակից չի համարում, այլ՝ դրա լրացնող գործառույթն է շեշտում: Ի վերջո՝ ֆուտբոլ խաղալ կարող են բոլորը: ԿՈՆԻՖԱ-ն քաղաքական դիրքորոշում արտահայտելու միավորում չէ, համոզված է գլխավոր քարտուղարը, որի ղեկավարած կազմակերպությունը սակայն միշտ առաջնության մասին իր ծավալուն հոդվածում: ԼՂ արտգործնախարարության տրամադրած թվերը ներկայացնելով, թերթը գրում է, թե արտերկրից 3000- 4000 հյուր է արձանագրվել, դրանց թվում՝ ներառված են նաեւ հայրենի ՀՀ- ի քաղաքացիները:

Այն, որ այս օրերին Արցախը ներկայանում է որպես հյուրընկալ, խաղաղ մի վայր, փաստում է նաեւ ԿՈՆԻՖԱ-ի գլխավոր քարտուղարի թվիթերյան էջը, որ ամեն օր թարմացվում է: Այսօր ֆուտբոլ չկա, փոխարենը՝ ակ-

# Բեռլինում Ադրբեջանի դեսպանի բողոքի պատասխանը՝ խաղաղ, հյուրընկալ Արցախի մասին ամենօրյա գրառումներ



նը հյուրընկալող 4 մարզադաշտերը Ղարաբաղի համար զբոսաշրջության, միջազգային ուշադրություն բեւեռելու առիթ են, պատմում է ռեպորտաժի հեղինակը: Այնուհետ ԼՂ բնակչուհի **Անժելիկա Ավագյանն** է հայտնվում կադրում: Անշուշտ սա կխթանի Արցախի զբոսաշրջությանը, ասում է նա ու շարունակում՝ կնպաստի մեր երկրի ճանաչմանը: Առաջնության համար տարբեր երկրներից Արցախ եկած մարդիկ իրենց հետ դրական տպավորություն, հիշողություն են տանելու, համոզված ասում է Արցախի երիտասարդ բնակչուհին: Նրա անգլերեն խոսքն ու դրա բովանդակությունը տպավորում է նույնքան, որքան օպերատորի սիրուն կադրերը՝ բնապատկերի փարթամ կանաչը, տոնակատարության հյուրընկալ շունչը: Այն, որ Բեռլինում Ադրբեջանի դեսպանը ԿՈՆԻՖԱ-ի գլխավոր քարտուղարին բողոք էր հայտնել ֆուտբոլի առաջնությունը ԼՂ-ում անցկացնելու վերաբերյալ, հաղորդվեց ռեպորտաժի վերջում: Միգուցե սա էլ ռազմավարություն է: Ու այս պարագայում Բաքվի անզորությունն առավել ընդգծված է դառնում:

ARD- ի եթերում ճշտվեց նաեւ, թե 2013 թվականին հիմնված ԿՈՆԻՖԱ- ն ( Անկախ ֆուտբոլային ասոցիացիաների կոնֆեդերացիա CONIFA (Confederation of Independent Football Associations) ոչ թե 47, այլ 50- ից ավել թիմ է միավորում: Թիմերը ներկայացնում են այն երկրները, որ միջազգայնորեն չեն ճանաչվել, բայց անկախ են, կամ՝ որեւէ փոքրամասնություն, պետականազուրկ ազգային միավոր, պատմական շրջան են ներկայացնում եւ ՖԻՖԱ-ին չեն անդամակցում: Կազմակերպու- հայտնվում է քաղաքականության սարդոստայնում:

Իսկ Բաքվի ճնշման մասին իրազեկ ենք դառնում նաեւ 2018-ին գերմանական թերթերից մեկի՝ WZ- ի մայիսյան հոդվածներից նաեւ. 2014 թվականին, երբ Լեռնային Ղարաբաղը ԿՈՆԻՖԱ-ի ֆուտբոլի աշխարհի առաջնությանն էր մասնակցում, ՖԻՖԱ-ի անդամ Ադրբեջանը, որ շարունակում է ԼՂ- ն իր երկրամասը համարել, սիրով չէր հետեւում դրան: «Նրանք ամեն տեղ բողոքում էին», պատմում է Դյուրկոփն ու ծիծաղում, «իսկ մենք նրանց բողոքն ի գիտություն էինք ընդունում»: Այն ժամանակվա ՖԻՖԱ-ի ղեկավար Բլաթթերն Ադրբեջանի քննադատությանը չարձագանքեց, իսկ դա նշանակում էր, թե անուղղակի սատարում է ԿՈՆԻՖԱ-ին:

ԿՈՆԻՖԱ-ի գլխավոր քարտուղար Սաշա Դյուրկոփին ուղղված՝ Բեռլինում Ադրբեջանի դեսպանության բողոքի մասին գրում է նաեւ «Թագեսշպիգելը»: «Այս առաջնությունը մեզ համար փոքրիկ երազանք էր, մայիսի 28-ին «Կովկասի փոքր երազանքը» հրապարակման մեջ 61- ամյա մարզիչ **Սլավա Գաբրիելյանի** խոսքն է փոխանցում թերթի հոդվածագիրը՝ Արցախում մինչեւ հունիսի 9- ը անցկացվող ֆուտբոլային նառու մշակույթի օր՝ Շուշիում: Գորգի, արվեստի թանգարաններ, եկեղեցի՝ ամենուր շշմեցնող տպավորություն, նաեւ՝ պար ու խորոված, գրում է Սաշա Դյուրկոփը՝ նույնը ներկայացնելով նաեւ փոքրիկ տեսանյութով: Նրա արցախյան թվիթերյան օրագրությունը նկատել է տալիս, որ կա՝ Դադիվանք, Ասկերանը արվեստի դպրոց ունի, Ստեփանակերտի մարզադաշտն օրեցօր առավել գեղեցիկ տեսք է ստանում, Մարտունի քաղաքում հանդիպել է Արմենին, որ ներկայացրել է իր մշակութային կենտրոնը, տեղի արվեստի դպրոցի սաների աշխատանքները:

Բեռլինում Ադրբեջանի դեսպանության կայքէջից անշուշտ չի երեւում, թե Ադրբեջանի քարոզչությանը լծված 20 հոգանոց թիմն ինչպիսի դողէրոցքով է հետեւում ԿՈՆԻՖԱ-ի գլխավոր քարտուղարի Արցախից տպավորություններ փոխանցող թվիթերյան գրառումներին: Հիշում եմ՝ «Ազերթաջի» Բեռլինի թղթակիցը մի անգամ ռուսալեզու մի լրատվամիջոցի հաղորդել էր, թե Բեռլինում հեշտ է աշխատել՝ «իրենց քաղաքն է», իսկ գերմանացիները՝ մեծ հաշվով՝ բարեկամներ:

Սաշա Դյուրկոփը հաստատ տեղյակ էլ չէ, թե բարեկամություն է խախտում:

# Ջուդի Չուն ծանոթացավ հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ

Մայիսի 24-ին տեղի ունեցավ ԱՄՆ ներկայացուցիչների տան անդամների ներկայացուցիչ Ջուդի Չուի հանդիպումը հայկական կազմակերպությունների հետ: Հանդիպումը հովանավորել էր Թեքեյան մշակութային միության Կալիֆոռնիայի մասնաճյուղը: Հանդիպմանը ներկա էին դատավոր Արմենուհի Աշվանյանը, ՀԲԸ Միության Արեւմտյան ափի վարիչ տնօրեն Հրանդ Վարձապետյանը, Սահակ-Մեսրոպ վարժարանի տնօրեն Մարալ Բոյաջյանը, Մերտինյան վարժարանի հոգաբարձուների խորհրդի ատենապետ, դոկտոր Վահե Նալբանդյանը եւ այլք:

Հանդիպման ընթացքում դոկտոր Չուն հայտարարեց, որ կանի ամեն հնարավոր բան, որպեսզի ԱՄՆ կառավարությունը ավելացնի նյութական օժանդակությունը՝ Հայաստանին եւ Արցախին:

# Բաքվում պատրաստվում են, Երեւանում՝ «բռնցի» խաղում

**2019 թվականը հարեւան Ադրբեջանը դիմավորել է զորավարժություններով, օրերս մաշեցնում է զորավարժություններով, եւ դեռ հստակ չէ՝ կճանապարհի ինչով: Այս մասին դիտարկումները շատ են եղել, շատ լուրջ մարդիկ են հայտնել իրենց տեսակետները, որոնք, ցավոք սրտի, այնքան էլ մեծ հնչեղություն չեն ստացել ու զանգվածների ուշադրությունը չեն գրավել:**

**Հուսով եմ՝ ոչ ոք չի մտածում, որ Հայաստանի ու հայերի վախճանի ծրագիրն ամեն օր կատարելագործող թյուրք Իլհամ Ալիեւի բանակն ուղղակի է զորավարժություններ անում, հենց այնպես, ավելորդ էներգիա ծախսելու համար՝ միլիոնավոր դոլարներ ծախսելով դրա վրա: Այդ գործընթացի ամբողջ ընթացքում, հատկապես այս տարի, Ալիեւի մեծ եղբայր Ռեջեփ Թայիփ Էրդողանն՝ իր բանակով կանգնած է, ինչպես թուրքերն են ասում, «Ջան Ազերբայջանի» թիկունքին: Ավելին՝ մինչ ես գրում եմ այս տողերը, այդ երկու եղբայրական երկրները մեր մայրաքաղաքից մի մեկ-երկու արկաչափ հեռավորության վրա լայնամասշտաբ զորավարժություններ են իրականացնում՝ ոչնչացնելով պայմանական թշնամուն ու գրավելով նրա պաշտպանական բնագիծը: Պարզ է, չէ՞, որ այդ պայմանական թշնամին շատ հստակորեն մենք ենք եւ մեր հայրենիքը:**

**Ինչեւէ, գլուխը քարը, մեր բանակն էլ ձեռքերը ծալած չի նստում, եւ եթե մեր ՊՆ-ն ամեն օր չի խոսում մեր բանակի մարտունակության մասին, դա վերջինիս բացակայությունը չի ենթադրում. ճտերն աշնանն են հաշվում: Բանակն իրենը կանի, ես դրանում մազաչափ անգամ կասկած չունեմ, իսկ քաղաքական ղեկավարությո՞ւնը: Նրանք չե՞ն պատրաստվում իրենց համերաշխությամբ կանգնել բանակի թիկունքին, հարկ եղած դեպքում՝ օրինակ ծառայել նրան, զենքը ձեռքին խրամատում կանգնել զինվորի կողքին: Կարծես՝ ոչ: Որովհետեւ, ոմանք, որքան էլ տարօրինակ հնչի, կարծես՝ սահմանից այն կողմ թշնամիներ չունեն, նրանց թշնամիները ներսում են, ազգությամբ հայեր:**

**Սա ծանր հարց է, եւ դժվար է միանշանակ պատասխան տալ: Բայց մի բան հաստատ է, պատերազմական իրավիճակում գտնվող երկրում, ինչպիսին մերն է, աթոռակռիվները երբեք լավ բանի չեն հանգեցրել: Դրա դասական օրինակը հայոց պատմությունն է՝ գրեթե իր բոլոր շրջափուլերով:**

**Տպավորություն է, որ 2018թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխության նպատակը ոչ թե պետության վիճակը կայունացնելն էր, այլ՝ «հին հաշիվները մաքրելը»: Ես քաջ գիտակցում եմ, որ այդ դիտարկումները կարող են կատաղության նոպաներ առաջացնել իրենց հեղափոխական պատկերացնող մեր որոշ քաղաքացիների մոտ, բայց սա մաքուր ճշմարտություն է, որքան էլ վերջիններս փորձեն ժխտել դա: Արդեն մեկ տարուց ավելի է անցել, բայց, լայն առումով, ժողովուրդը նույն կերպ է սնվում, նույն կերպ հանգստանում, նույն կերպ աշխատում ու նույն կերպ վարձատրվում, չնայած՝ փոփոխություն կա. մարդիկ սկսել են խմբերի բաժանվել ու մինչեւ հոգու խորքը ատել իրար, հանուն այս կամ այն չինովնիկի, որը թքած ունի բոլորի վրա: Հիմա ձեռնարկատերերից ապօրինի մասնաբաժին պահանջող նախագահի եղբայր չունենք, բայց մարդիկ էլի մեկին «հարկ» են տալիս. ինքներդ պարզեք՝ ով է այդ մեկը:**

**2019թ. ցույց տվեց, որ Ադրբեջանի ղեկավարությունը միջոցներ չի խնայում տարբեր ամբիոններում արված ռազմատենչ հայտարարությունները նյութականացնելու համար: Այս ընթացքում մեր երկրի իշխանությունները տարված են նախկին իշխանավորների է «բռնցի» խաղալով: Իշխանությունները ժողովրդի մոտ այնպիսի կարծիք են ձեւավորել, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության զարգացման գլխավոր խանգարողները Ռոբերտ Քոչարյանը, Մանվել Գրիգորյանը, Սերժ Սարգսյանն ու նրանց համակիրներն են, եւ նյութական ու բարոյական ոչ մի միջոց չեն խնայում դա ապացուցելու համար: Սրանով միտում չունեմ արդարացնելու վերոհիշյալներին, բայց այս գործելաոճն ինձ հիշեցնում է հայտնի տան մասին հումորային պատմությունը. տանիքից ջուր է կաթում, պատը խոնավ են, հատակը հողից է, բայց դուռը «մի փեշ փող արժե»: Կրկին ներողություն, բայց սա ճշմարտություն է:**

**Այն, ինչ այսօր կատարվում է մեր երկրում, վաղը կարող է դժվար լուծելի խնդիրների առաջ կանգնեցնել մեզ: Հայաստանի Հանրապետությունը ոչ թե խանություն է կամ ամիրայություն, ինչպես պատկերացնում են ոմանք, այլ՝ պետություն, որի գերխնդիրն այս պահին թուրքական օժանդակությամբ ադրբեջանական ագրեսիան կանխելը, ճնշելն ու տնտեսությունը զարգացնելն է, բայց ի հեճուկս այս կարեւորության, մեզ մոտ, որպես պետության համար թիվ մեկ խնդիր՝ որդեգրված է մի քանի հոգու հետապնդումն ու կալանավորումը, հետո՝ դատապարտումը. պետական շահի հերն էլ անիծած: Իսկ Ադրբեջանում ճիշտ հակառակն է, այնտեղ պատրաստվում են: Ես չէի ասի, թե այդ պատրաստությունը կարող է ճնշել մեր հզոր բանակին, բայց, ինչպես վերը նշեցի, բանակին թուլացնող-չթուլացնողը թիկունքն է: Նույնիսկ Մեծն Ալեքսանդրի բանակը չկարողացավ դիմանալ օրեցօր ալեկոծվող թիկունքի տված հոգեւոր դավադրություններին: Ասածներիս վառ ապացույցն է նաեւ 1993թ. Ադրբեջանում տեղի ունեցած կարճատեւ ռազմական հեղաշրջումը, որից, անհերքելի է, օգտվեց հայկական զինուժը: Եվ հիմարություն կլինի մտածելը, թե Ադրբեջանը չի օգտվի մեր ներքին պառակտություններից, ավելին՝ ես հակված եմ մտածելու, որ այս ակտիվ զորավարժություններին ու դրանցից հետո սպասվող հավանական ռազմական զարգացումներին տեղիք են տվել նաեւ հենց մեր քաղաքական խժդժությունները, որտեղ, ինչպես ասում են՝ «բոլորը խաներ են, եւ շունը տիրոջը չի ճանաչում»:**

**Եվ այս իրավիճակում, երբ թշնամին պատրաստվում է ոչնչացնել քեզ, խաղաղության մասին խոսելը ավելի շատ օգնում է նրան, քան՝ պաշտպանում մեզ:**

**Ես հույս ունեմ, որ մեր իշխանությունը օր առաջ հաշվի կառնի ստեղծված վտանգավոր իրավիճակը եւ հնարավորինս արագ կանցնի բուն օրակարգին՝ պաշտպանել հայրենիքը վերահաս վտանգներից, իսկ գողերի, ավազակների ու արդարամիտների դասը՝ հընթացս...**

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 06/06/2019 22:02 Page 6



ԱՐՏԱԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

տնտեսագետ

# Ինչպե՞ս է տնտեսության վրա ազդում «անցումային արդարադատությունը»

Արդեն խոսվել է եւ դեռ շատ կխոսվի անցումային արդարադատության դրական կողմերի մասին: Ցավոք, այդ դրական կողմերի մասին վկայող միջազգային հաջողված փորձի մասին խոսել չենք կարող, ոչ էլ այն մասին, թե ի՞նչ սկզբունքներով պետք է կիրառվի անցումային արդարադատությունը եւ ովքե՞ր պետք է դա անցկացնեն:

Ցանկանում եմ անդրադառնալ ներդրումային միջավայրի վրա արդարադատության համակարգի եւ մասնավորապես՝ անցումային արդարադատության ունեցած ազդեցությանը:

Դասագրքային ճշմարտություն է, որ արդարադատության համակարգը հսկայական ազդեցություն ունի տնտեսության վրա՝ հատկապես օտարերկրյա եւ տեղական ներդրումների ներգրավման առումով: Օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը 2018թ.-ին նախորդ տարվա համեմատ աճել է ընդամենը մոտ 1,8%-ով, կազմելով շուրջ 250 մլն ԱՄՆ դոլար (աղբյուրը՝ http://cedi.am/wp-content/uploads/): Ներդրումների կառուցվածքն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ այս աճը գրանցվել է ՀՀ տարածքում գործող օտարերկրյա կապիտալով ընկերությունների կողմից գումարների վերաներդրման արդյունքում: Այս ցուցանիշը 2018թ.-ին 2017թ.-ի նկատմամբ աճել է ավելի քան 36 անգամ: Մինչդեռ, ակնհայտ է, որ կարեւոր են ոչ միայն վերաներդրումների ծավալները, այլեւ նոր ներդրողների եւ նոր ներդրումների ներգրավումը:

Նոր ներդրումների ներգրավման համար էական է, թե ինչպիսի արդարադատության որակ եւ մակարդակ ունի երկիրը, քանի որ տնտեսական վեճերի արդարացի եւ արագ լուծումներն են հանդիսանում ներդրումների իրական երաշխիքները, եւ ո՛չ թե պետական բարձրաստիճան պաշտոնատար անձանց անձնական երաշխավորությունները (որոնք գործել են մինչ 2018թ.-ի քաղաքական փոփոխությունները): Ներկայումս, երբ այլեւս պետք է գործեն միայն ներդրումների իրավական երաշխիքներ, ապա հավասարապես կարեւոր են դառնում ինչպես դատաիրավական համակարգի ապակոռումպացվածությունը, այնպես էլ առավելագույնս անկախությունը իշխանության մյուս ճյուղերից, հատկապես՝ գործադիրից: Հետեւաբար, ինչպես Արեւելյան Եվրոպայի եւ հետխորհրդային շատ երկրներում, այնպես էլ մեր երկրում՝ յուրաքանչյուր ներդրողի համար համար, ներդրում կատարելու որոշման ընդունումը (իհարկե՝ տնտեսական հիմնավորվածությունից բացի) կախված է վերն առաջադրված երկու խնդիրների արդյունավետ լուծման աստիճանից:

Ընդ որում, կոնկրետ մեր երկրի պարագայում էական է ինչպես այդ երկու խնդիրների միաժամանակյա կամ զուգահեռ լուծումը, այնպես էլ այդ լուծումների տեւողությունը: Որպես օրինակ՝ շուրջ 10 ամիս է, ինչ քննարկվում է «Հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը, որի որոշ դրույթներ կառավարության եւ իշխանական կուսակցության բազմաթիվ ներկայացուցիչների կողմից համարվել են անհետաձգելի եւ նախատեսվել է հետադարձ գործողության ուժ տալ՝ հաշված տարեսկզբից, սակայն հինգերորդ ամիսն արդեն լրանում է, իսկ օրինագիծը դեռ ընդունված չէ:

Սակայն չշեղվենք: Ի՞նչ կտա մեզ անցումային արդարադատության իրականացումը այդ խնդիրների լուծման տեսանկյունից: Այո, միգուցե վետտինգի (լյուստրացիայի) միջոցով հնարավոր է հասնել դատական համակարգի կոռումպացվածության մակարդակի նվազման: Իսկ ո՞վ եւ ի՞նչ սկզբունքներով պետք է իրականացնի այդ վետտինգը: Որտե՞ղ են այն երաշխիքները, որ դատավորների փոխարինումների արդյունքում նոր համակարգը չի հայտնվի նոր կախվածության մեջ՝ բայց արդեն նոր իշխանություններից: Որքա՞ն է տեւելու այս գործընթացը: Բոլորս հասկանում ենք չէ՞, որ գործընթացն արագ անելու դեպքում կարճ ժամկետներում պարզապես անհնարին կլինի գտնել անհրաժեշտ թվով բանիմաց մասնագետներ, որոնք կապահովեն արդար դատական որոշումների ընդունման պատշաճ մակարդակ: Վստահ եմ, գիտակցում ենք, որ գործընթացը երկարելու պարագայում էլ պոտենցիալ ներդրողները (եթե այդպիսիք կան) կկատարեն համապատասխան ընտրություն՝ սպասել անորոշ ժամանա՞կ, թե՞ ներդրում կատարել այլ երկրում: Ի՞նչպես կարձագանքեն պոտենցիալ ներդրողները իրավական ցածր կամ անորոշ որակի արդարադատություն ունեցող երկրի ներդրումային միջավայրին. կարծում եմ այս հարցերի պատասխաններն են մեզ հուշելու՝ գնալ նկարագրված ճանապարհով, թե՞ ոչ:

Առանձին ուսումնասիրության առարկա է ոչ միայն օտարերկրյա, այլեւ տեղական ներդրումների համար բարենպաստ միջավայրի առկայությունը: Ցավոք, տեղական ներդրումների ծավալը հաշվառող առանձին վիճակագրություն չի վարվում, կամ եղած տվյալները հատվածական են ու իրական պատկերը չեն արտացոլում: Սակայն երկու ցուցիչներ ի հայտ են բերում այս ոլորտի միտումները: Դրանք են բանկային ավանդների եւ բացառապես ֆիզիկական անձանց իրացման ենթակա խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի մեջ կատարվող ներդրումներում տեղի ունեցած փոփոխությունները 2018թ.-ին՝ 2017թ.ի նկատմամբ: Այսպես, ռեզիդենտ ոչ պետական հատվածի անձանց կողմից 2018թ.-ին ձեւակերպված ժամկետային ավանդները (ե՛ւ արտարժույթով, ե՛ւ ՀՀ դրամով) աճել են 2017թ.-ի համեմատությամբ մոտ 4%-ով, 2017թ.-ի դեկտեմբերի 1,414 մլրդ դրամից 2018թ.-ի դեկտեմբերին հասնելով 1,472 մլրդ դրամի (աղբյուրը՝ https://www.cba.am/am/ sitepages/statmonetaryfinancial.aspx): Մինչդեռ, նույն աղբյուրը վկայում է, որ ավանդների ներգրավման միջին տարեկան տոկոսադրույքները թե՛ ՀՀ դրամով եւ թե՛ արտարժույթով էապես նվազել են 2017թ.-ին 9,01% եւ 3,91%-ից 2018թ.-ին



դառնալով համապատասխանաբար՝ 8,66% եւ 2,84% (նվազումը ՀՀ դրամով միջինում կազմել է մոտ 4%, իսկ արտարժույթով՝ ավելի քան 27% ! ! !):

Իր հերթին՝ մոտ 80%-ով աճել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի շրջանառության ծավալները՝ 2017թ.-ի դեկտեմբեր ամսվա 3,168 մլրդ ՀՀ դրամից 2018թ.-ի դեկտեմբերին դառնալով արդեն մոտ 5,741 մլրդ դրամ (աղբյուրը՝ http://www.minfin.am/hy/page/gandzapetakan–paharui–teghekagir): Նույն պատկերը նաեւ այս դեպքում է՝ պարտատոմսերի աճին զուգընթաց ընկել է դրանց եկամտաբերությունը, մինչեւ մեկ տարի մարման ժամկետով պարտատոմսերինը՝ 10,36%-ից դառնալով 8,55%, մեկից-երկու տարի մարման ժամկետով պարտատոմսերինը՝ 12,48%-ից - 10,11% եւ երկուսից-երեք տարի մարման ժամկետով պարտատոմսերինը՝ 13,01%-ից - 11,47%:

Բերված տվյալները վկայում են միայն մի բանի մասին՝ Հայաստանում շատ ազատ փող կա եւ անընդհատ ավելանում է, բայց որպես ներդրման առավել ապահով ոլորտ՝ տեղական ներդրողը նախընտրում է ֆինանսական շուկայի գործիքները:

Հավաստիացնու՛մ եմ, հենց վետտինգի արդյունքում ձեւավորված նոր դատական համակարգը ձեռնամուխ լինի անցումային արդարադատության կիրառմանը՝ այդ փողը մեծ արագությամբ փախչելու է երկրից: Ընդ որում, այդ «փախուստը» տեղի է ունենալու թե՛ կանխիկ եւ թե՛ անկանխիկ եղանակներով: Ոչ թե այն պատճառով, որ բոլոր ֆինանսական միջոցները ձեւավորվել են «հանցավոր ճանապարհով», այլ այն պատճառով, որ ձեւավորվել են անսկզբունք եւ անորոշ տեւողությամբ «զտումների» կամ «ստուգումների» սպասումներ:

Ի՞նչպես կարելի է չեզոքացնել այս ազդեցությունները ֆինանսների ոլորտի վրա այս պարագայում: Իրավիճակը շատ նման է նրան, որ մարդը «տանը մնացած» աղջիկ ունենա եւ ի լուր ամբողջ աշխարհի հայտարարի, որ աղջիկը պատվազրկված է: Իսկ հետո անկեղծորեն զարմանա, թե ինչո՞ւ պոտենցիալ փեսացուներ չեն հայտնվում: Հավատացեք, արդեն բավականին ուշ է դեղատոմս առաջարկելու համար: Նշեմ, որ առանց հանրային ակցիաների, առանց հայտարարված «վետտինգների» եւ «անցումային արդարադատությունների»՝ թերեւս հնարավոր էր հասնել թե՛ արդար դատական համակարգի վերականգնմանը եւ թե՛ միաժամանակ ապահովել կապիտալի «չփախչելու» պայմաններ՝ եթե այդ նպատակներին հասնելու համար վարվեր չհայտարարված եւ քողարկված պայքար:

Մի ելք, այնուամենայնիվ, կարծում եմ հնարավոր կլիներ գտնել ստեղծված իրավիճակից փոքր կորուստներով դուրս գալու համար: Դա, հայտարարված ճանապարհներից ետ քայլ կատարելն է եւ որոշակի պայմաններով «ֆինանսական համաներում» իրականացնելը: Սակայն, ցավոք, միայն ոչ պոպուլիստ կառավարություններն են ունակ գնալ այդ ճանապարհով:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի վաստակավոր լրագրողՄոսկվա

# Խայտառակ «արդարամտություն»

Ողջ շաբաթ մոսկովյան հեռուստալիքները իրենց լսարանների լարվածության մեջ էին պահում այսպես կոչված Կոսովոյի Հանրապետությունից ստացված մի բավական արտառոց փաստի առթիվ ստեղծված պայթյունավտանգ իրավիճակի մասին լուրերով: Ինչո՞ւ «այսպես կոչված»: Որովհետեւ Կոսովոյի Հանրապետությունը (ալբանական) գտնվում է Սերբական Կոսովոյում: Դեռ 1077 թվականին Կոսովոյի դաշտում (Կոսովո Պոլե) սլավոնական ազգության մարտիկները կենաց-մահու ճակատամարտ են տվել մուսուլման զավթիչներին:

Արդեն մոտ հազար տարի այդ դաշտը սերբերի համար նո՛ւյնքան սրբազան է, որքան, ասենք, մեզ համար՝ Ավարայրի դաշտը: Երկրորդ աշխարհամարտից հետո երբեմնի Հարավսլավիայի խորվաթ առաջնորդ Իոսիպ Բրոզ Տիտոյի թույլտվությամբ Կոսովոյում բնակություն հաստատեց շուրջ 50 հազար ալբան փախստական: Մի քանի տասնամյակի ընթացքում արագ աճելով՝ նրանք Կոսովոյում անցյալ դարավերջին արդեն սերբերի համեմատ բացարձակ մեծամասնություն էին կազմում՝ 2 միլիոն իրենք էին, 600 հազար՝ սերբերը: Եվ երբ երբեմնի միասնական Հարավսլավիան փլուզվում էր, Կոսովոյի ալբանացիները, համախմբվելով իրենց դաշտային հրամանատարների, գլխավորապես արյունարբու առաջնորդ Հաշիմ Թաչիի շուրջը, պայքար սկսեցին Սերբիայից անջատվելու եւ ալբանական երկրորդ պետությունը՝ Կոսովոյի Հանրապետությունը հռչակելու համար: Սերբիայի այն ժամանակվա նախագահ Սլոբոդան Միլոշեւիչը փորձեց ուժով ճնշել Կոսովոյի ալբանացիների այդ անջատողական շարժումը, բայց քանի որ Սերբիան իրեն համարում էր (եւ մինչեւ հիմա էլ համարում է) ռուսների հետ սլավոնական միեւնույն արմատից ծագած եղբայրական պետություն՝ ամբողջ արեւմտյան աշխարհը, ԱՄՆ-ի գլխավորությամբ, միավորվեց սերբերի դեմ:

Միլոշեւիչին մեղադրեցին Կոսովոյի ալբանացիների ցեղասպանություն անելու մեջ (հետագայում նրան Հաագայի միջազգային բանտում մահվան հասցրին), 78 օր շարունակ ռմբակոծեցին Սերբիայի մայրաքաղաք Բելգրադը, ի վերջո՝ պարտության մատնեցին սերբական զորքերին եւ հասան այն բանին, որ Կոսովոյի ալբանացիները հռչակեցին իրենց անկախությունը Սերբիայից: Մինչեւ արմունկները սերբական արյան մեջ թաթախված ձեռքերով Հաշիմ Թաչին հռչակվեց Կոսովոյի ալբանական Հանրապետության նախագահ: Այժմ արդեն 110 պետություն ճանաչել է Կոսովոյի անկախությունը, եւ ոչ մեկի հոգը չէ, որ սերբական հողում ստեղծված երկրորդ ալբանական պետության մեջ ապրող 600 հազար սերբ բնակիչներից այսօր իրենց բնօրրանում մնացել է ընդամենը 28 հազար հոգի: Փաստորեն, ալբան եկվորները ոչնչացրել կամ հարազատ վայրերից գրեթե լիովին դուրս են վռնդել երկրամասի բնիկ տերերին:

Մուսուլման ալբանները ավերում, այրում ու ոչնչացնում են սերբերի քրիստոնեական եկեղեցիները, վերացնում են քրիստոնեական մշակույթի բոլոր հետքերը: Եվ միջազգային հանրությունը անամոթաբար... լռում է: Որովհետեւ ամերիկացիները մոլագարի համառությամբ ամենուրեք ռուսական վտանգ են տեսնում, ուստի ամեն ինչ անում են ոչ միայն ռուսներին, այլեւ նրանց նկատմամբ բարեկամաբար տրամադրված բոլոր մյուսներին, այդ թվում սերբերին վնասելու համար:

Օրերս էլ ալբան ոստիկանը Պրիշտինայում հրազենի խզակոթով հարվածել էր ՄԱԿ-ի մանդատով այնտեղ գտնվող ռուս դիվանագետներից մեկի դեմքին՝ կոտրելով դիմոսկրը: Նույնիսկ ՄԱԿ-ը չհամարձակվեց դատապարտել ալբան ոստիկանի այդ չլսված-չտեսնված լկտիությունը, ով ռուս դիվանագետին հարվածել էր միայն այն բանի համար, որ նա իր հետ խոսել էր... սերբերեն: Միջադեպից հետո սերբերը Կոսովոյի սահմանագլխին զորքեր կենտրոնացրին, սակայն հազիվ թե համարձակվեն հարձակման անցնել, քանի դեռ Կոսովոյի ալբանացիների թիկունքում այնպիսի «արդարադա՜տ» ուժ է կանգնած, ինչպիսին Վաշինգտոնն է:

«Արդարադա՜տ» ամերիկացիներին կուզենայի հարցնել՝ այդ ինչպե՞ս է, որ դուք սերբական հողում եկվոր ալբանացիների արյունարբու պետության գոյությունը ընդունում եք, իսկ իր բնօրրանում միլիոնապատիկ ավելի ժողովրդավարական Արցախի Հանրապետության գոյությունը «չե՞ք տեսնում»: Որովհետեւ ձեզ համար ամենագլխավորը ոչ թե միջազգային իրավունքն է, գոնե՝ տարրական պարկեշտությունը, այլ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ամեն կարգի մերկապարանոց շա՛հը: Այսքանից հետո սրտանց կուզենայի թքել ամերիկյան խայտառակ «արդարամտության» վրա:

AZG NEW SHABAT.QXD 06/06/2019 22:02 Page 7



# Ես իմ անուշ Հայաստանի...

## *Եվ թե ինչ չպետք է անի եւ ասի հայը*

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**

**Կումայրի**

Հայ դասին, մեր ազգային խնդիրներին անդրադառնալիս սովորաբար վերլուծում, մտորում, խորհում եւ դեռ խորհելու ու մտածելու ենք, թե մենք այսօր, վաղը, հետագայում ինչ քայլեր, ինչ պետք է անենք: Այստեղ կցանկանայինք ուշադրություն հրավիրել մի երկու այնպիսի բաների վրա, որոնք մենք՝ հայերս չպետք է անենք:

...Այն լեռնակուտակ, բարձրաբերձ բնաաշխարհագրական կամ ֆիզիկաաշխարհագրական տարածքը, որի հիմնական մասում դեռ վաղնջական ժամանակներում կազմավորվել, ձեւավորվել ու դարերում իր հավերժության ուղին է գծել աշխարհի հին քաղաքակրթություններից մեկը ստեղծած հայ ժողովուրդը, ժամանակին իրավացիորեն կոչվել ու աշխարհագրական քարտեզներում ամրագրվել է որպես Հայկական լեռնաշխարհ, Հայկական բարձրավանդակ: Իսկ մեր երկիր-հայրենիքը՝ Հայք- Հայաստան-Արմենիա, որն ինքներս կոչել ենք նաեւ Հայոց աշխարհ: Եկեք նախ չմոռանանք եւ Հայկական լեռնաշխարհ, Հայկական բարձրավանդակ, Հայոց լեռներ, Հայոց աշխարհ, Հայոց երկիր մեր այս հպարտության արժանի աշխարհագրական հատուկ անունները՝ մեր ազգի բնօրրանի ու մեր երկիր-հայրենիքի անունները գրենք միշտ ու միմիայն մեծատառ: Դրանց առաջին բառերը: Ցավոք, մեր որոշ հայրենակիցներ երբեմն կամ մոռանալով, կամ չիմացությամբ փոքրատառ են գրում: Իսկ դա հարկ կա՞ ասելու, որ ընդամենը գրության խնդիր չէ: Փոքրատառ գրելիս դրանք նաեւ մեր գիտակցության մեջ դադարում են աշխարհագրական անուններ, տեղանուն, երկրանուն լինելուց ու որպես այդպիսիք պահպանվելուց, ինչը թեկուզ ակամա աջակցություն է դրանք վերացնելու, ջնջելու մեր հակառակորդների հետեւողական ջանքերին: Չէ՞ որ, ինչպես ճիշտ նկատվել է, տեղանունը ժողովրդին նաեւ «սեփականատիրոջ իրավունք է տալիս» (Համլետ Դավթյան, «**Ազգ**», 2014-10-17):

Մի քանի տարի առաջ Գյումրիում տեղի ունեցող արվեստի թեմաներով գիտաժողովում հերթական զեկուցմամբ կամ հաղորդումով հանդես եկող տիկինը խոսքի մեջ գործածեց «Թուրքիայի Վան քաղաքում» արտահայտությունը, եւ խոսքի ավարտին նրան ռեպլիկի կարգով խնդրեցինք այլեւս երբեք այդպես չասել... Արվեստաբան տիկինը նայեց, մի ակնթարթ կարծես մտքի թելով անցկացրեց ու ասաց. «Այլեւս չեմ ասի»: Իսկ ահա մեկ այլ, Գյումրի-Կարս թուրք-հայկական տնտեսական ոչ մեծ համաժողովում էլի մեր համաքաղաքացի մի երիտասարդ գործարար տիկին իր չգիտես ինչ ասող ելույթում թուրք գործարարներին «ուրախացրեց» մի «կարեւոր» տեղեկությամբ, թե ինքը վերջերս եղել է Անատոլիայում... Եվ մեկ նախադասության մեջ առնվազն երկու անգամ կրկնեց այդ անունը: Ակնհայտորեն նա եղել էր Արեւմտյան Հայաստանում... Այստեղ են ասել՝ գիտունին գերի եղիր, անգետին սիրելի մի լինիր: Լավ, եթե այդ լսարանում նպատակահարմար չէր Արեւմտյան Հայաստան ասելը, գոնե կարիք չկար անտեղի վեր կենալու եւ... դե արի ու մի՛ ասա:

Ինչպես հայտնի է, Անատոլիան (հունարեն անատոլե՝ «արեւելք» բառից) իրականում Փոքր Ասիա թերակղզու արեւմտյան մասն է, ժամանակին հույներն այդպես են կոչել իրենցից արեւելք գտնվելու պատճառով: Մեր հայրենիքի մեծագույն մասին տիրացած եւ նրա իսկական տերերին ցեղասպանած ու հայրենազրկած թուրքերն ու նրանց սատարող-ձայնակցողները որոշ ժամանակից ի վեր այդ անունն արհեստականորեն տարածել են նաեւ Արեւմտյան Հայաստանի ողջ տարածքի վրա, այն կոչել «Արեւելյան Անատոլիա»՝ հայկական հետքն ու հիշողությունն այնտեղից իսպառ ջնջելու մտայնությամբ: Սակայն եթե ամբողջ աշխարհն իսկ սկսի այդպես կոչել, մի՞թե խելքը գլխին որեւէ հայ կարող է կամ իրավունք ունի նույնը անել:

Ի դեպ, հետխորհրդային շրջանում չգիտես ում որոշմամբ մեր եւ հարեւան երկու նախկին խորհրդային հանրապետությունները ներառող Այսրկովկասն էլ սկսել է կոչվել Հարավային Կովկաս, ինչը եւս, շատ մասնագետների վկայությամբ, սխալ է: Այստեղ, անշուշտ, կան նաեւ որոշ մանրամասներ, որոնց հստակեցման հարցով պետք է զբաղվեն հենց մասնագետները: Մի բան աներկբա է՝ Հայաստանը աշխարհագրորեն գտնվում է ո՛չ ինչ-որ Հարավային Կովկասում, ո՛չ էլ առավել եւս կապ կարող է ունենալ Անատոլիայի հետ: Հայաստանը գտնվում է Հայկական լեռնաշխարհո՛ւմ, եւ սրանով ամեն ինչ ասված է:

Այս առումով ուշագրավ էր թեման ուսումնասիրելիս համացանցում մեզ հանդիպած մի հրապարակում՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրենության 2012 թ. սեպտեմբերի 11-ի մի նիստի արձանագրությունը: Դրա հիմնական մասի բառացի մեջբերվող հետեւյալ բովանդակությունը, կարծում ենք, մեկնաբանության կարիք չունի. «**Լսեցին**- 2012 թ. հոկտեմբերի 10-13-ը Էրզրումում կայանալիք «Արեւելյան Անատոլիայի եւ Հարավային Կովկասի մշակույթներ» գիտաժողովին ինստիտուտի մասնակցության մասին: **Որոշեցին**.- Գիտականորեն Փոքր Ասիայից դուրս ոչ մի Անատոլիա չկա, ինչպես նաեւ Հարավային Կովկաս գոյություն չունի՝ Կովկասի (որը գտնվում է Կուր գետի ավազանից հյուսիս) երկրաբանական եւ աշխարհագրական համակարգից հարավ: «Արեւելյան Անատոլիա» անվան՝ Փոքրասիական թերակղզուց դուրս սխալ օգտագործման դեպքում այն ինչում է «Արեւելյան Արեւելք», ինչն անհեթեթություն է: Ուստի նման «գիտաժողովի» ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակիցները չեն մասնակցի»:

Թուրքերը մեծամասամբ փոխել են ոչ միայն մեզնից դատարկված մեր հայրենի բնակավայրերի, լեռների, գետերի եւ այլնի մեծ մասի, այդ թվում՝ անգամ աշխարհին հայտնի բիբլիական Արարատ լեռան բնիկ հայկական անունները, այլեւ հասցրել են իրենց մռայլ կնիքը թողնել Արեւելյան Հայաստանի բնակավայրերից շատերի անունների վրա: Չնայած նրանց դրած կամ ձեւափոխած անունները խորհրդային տարիներին հիմնականում վերահայացվել են, չգիտես ինչու մենք մինչեւ հիմա հաճախ կարծես մեր պարտքն ենք համարում ՀՀ այս կամ այն բնակավայրի անվան կողքին դեռ կրկնել, պահել նաեւ օտարադիր ու չարամիտ «հին անվան» հիշողությունը՝ Ղարաբուռուն ու Դարաչիչակ, Դուզքյանդ ու Քյափանակ, Բոզյոխուշ ու Մոլլամուսա, Ղոնախղռան, Ուզունլար ու Չոռլի... Էլ չենք ասում դեռ պահպանվող, օրինակ, Ալավերդի քաղաքանվան ու հայրենի քաղաքիս անվան վերականգնված եւ չգիտես ինչու շատերին գոհացնող թրքահունչ Գյումրի տարբերակի մասին, որն, ըստ ամենայնի, նրա սկզբնական անաղարտ Կումայրի անվան հնչյունափոխություններով ժամանակին դարձել է Գումրի (առանց յ-ի), իսկ յ-ն, արդեն վստահաբար, ավելացվել է թուրքական «շփմամբ»: Ու մենք հանգիստ «վայելում» ենք այն: Մինչեւ ե՞րբ պիտի այսքան կարճամիտ մնանք...

Հայ Արցախն ի վերջո պաշտոնապես վերականգնեց իր հայեցի իսկական անունը՝ կոչվելով Արցախի Հանրապետություն: Սակայն ինչո՞ւ է մեր հրապարակային խոսքում, այդ թվում պաշտոնյաների խոսքում անվերջ ասվում ու կրկնվում «Հայաստան եւ Արցախ» բառակապակցությունը, որով ինքներս Հայաստանից հեռացնում, օտարում ենք Արցախը՝ ի հակադրություն եւ ի վնաս մեր ամբողջ տեւական պայքարի ոգու ու տրամաբանության... Անշուշտ, այսօր նա առանձին կարգավիճակ ունի եւ հայկական երկրորդ պետությունն է, թեեւ չճանաչված: Դրա համար ըստ տարբեր իրավիճակների կարող ենք ասել Մայր Հայաստան եւ Արցախ, Հայաստանի Հանրապետություն եւ Արցախ կամ ՀՀ եւ Արցախ, ընդսմին ոչինչ չխախտելով եւ ոչ ոքի «չնեղացնելով»: Բայց իրավունք չունենք ինքներս Հայաստան ու Արցախ անունները ո՛չ եւ-ով, ո՛չ ստորակետով անջատելու, ո՛չ առավել եւս կրկնելու օրեր առաջ մի առիթով շրջանառված Հայաստան-Արցախ հարաբերություններ անընդունելի արտահայտությունը: Մինչ ազերի նախագահն ասում է՝ «Իրեւանն» էլ է մերը, մենք մեր անհեռատես արտահայտությամբ մեզնից հեռացնում ենք մեր հարազատը:

Նույնքան անընդունելի պետք է համարել հայ որեւէ ղեկավարի կողմից հնչեցվող այն «փաստարկը» թե՝ գիտե՞ք, ես այստեղ եմ ծնվել, իմ հայրը, իմ պապն էլ են այստեղ ծնվել, ապրել: Այսպես մեզ էլ կարող են ասել, հետո՞...

Ազգային բազում խնդիրների ու մարտահրավերների ներկա պայմաններում մեզնից նաեւ պահանջվում է սթափ եւ ուժեղ լինել, չտրվել մեզ ներսից քայքայելու, բաժան-բաժան անելու առայժմ թեկուզ քիչ հաջողվող փորձերին՝ աղանդավորություն, բարոյազրկություն, ազգային նիհիլիզմ, այսպես կոչված ժողովրդավարական խաղեր, մարդու որոշ կասկածելի «իրավունքներ»՝ հաճախ ի հակադրություն ազգային իրավունքների ու շահերի: Նման խաղերը մեզ համար շռայլություն են եւ մեր ազգային հավաքականության համար տխուր հետեւանքներ կարող են ունենալ: Ինչպես եւ, կարծում ենք, այսօր գեղեցիկ խոսքերի ներքո հանրապետությունում հաճախ զգացվող ատելության ու չարության մթնոլորտը:

Մեր հասարակության որոշակի մասի տրամադրությունների արտահայտման, իսկ որոշ ուժերի կողմից նաեւ սադրանքների ասպարեզ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում վերջերս մեկը գրել էր, թե ինչո՞ւ են դպրոցում երեխաներին տանջում՝ ստիպելով բանաստեղծություններ անգիր անել: Իսկ տակի մեկնաբանություններում մեկն էլ բողոքել էր, թե ինչո՞ւ են պարտադրում անգիր սովորել... «Ես իմ անուշ Հայաստանի»-ն: Սա արդեն վտանգավոր ահազանգ է:

Հիմա ամեն օր ասում ու լսում ենք՝ մարդու իրավունքներ, տարբեր տեսակ փոքրամասնությունների իրավունքներ, «տոլերանտություն», ընդդիմություն, չգիտեմ ինչ ու ինչ, բայց հրոք, ո՞ւր են նախկինում, անգամ ազգայինը չխրախուսող խորհրդայի՛ն ժամանակներում ամեն օր մեր ականջներին հնչող ու մեր հավաքական եսը, մեր ազգային հպարտությունն ու արժանապատվությունը ձեւավորող հայաղոթք «Ես իմ անուշ Հայաստանի»-ն, «Ով Հայոց սարեր», «Խոսք իմ որդուն (Լսիր, որդիս, պատգամ որպես)», «Քեզ, հայ լեզու, կսիրեմ մրգաստանի մը նման» եւ մյուս-մյուս դաստիարակիչները...

# «Արեւային շքերթը» շարունակվում է

Արեգակի էներգիայի օգտագործումը կարեւոր նշանակություն ունի մեր երկրի տնտեսության հետագա զարգացման, ինչպես նաեւ անկախ էներգահամակարգ ունենալու համար: Արեւային օրերի թիվը մեզ մոտ բավարար է լավ արդյունքներ ունենալու համար: Վերջերս 177,66 կՎտ դրվածքային հզորությամբ 564 բազմաբյուրեղ վահանակներից (72 բջիջ, 315 Վտ) կազմված արեւային էլեկտրակայանը շահագործման հանձնվեց Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Չարբախ թաղամասում:

Անչափ ուրախալի երեւույթ է: Շահագործման է հանձնվել նաեւ Երեւան քաղաքի Արշակունյաց պողոտայում 56.7 կՎտ հզորությամբ արեւային էլեկտրակայան:



Այս էլեկտրակայանների շահագործման դեպքում տարեկան կարող ենք արտադրել մինչեւ 400 հազար ԿՎտժ էլեկտրաէներգիա: Այսքան էլեկտրական էներգիա ջերմային էլեկտրակայաններում արտադրելու դեպքում տարեկան կօգտագործվի ավելի քան 75 տոննա օրգանական վառելիք: Շրջակա միջավայր կարտանետվի ծծմբի եւ ազոտի օքսիդներ,այլ թունավոր նյութեր: Տարակույս լինել չի կարող, որ «արեւային շքերթը» մեր հանրապետությունում օրեցօր շարունակվում է: Անհրաժեշտ է մտածել այս բնագավառում ինժեներական եւ միջին մասնագիտական մասնագետների պատրաստման հարցի մասին: Հակառակ պարագայում առաջիկայում կարող ենք կանգնել լուրջ խնդիրների առջեւ:

**ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ**
**Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, Տեխնիկական գիտությունների թեկնածու**

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Հայցարիա տեսլականը չի ստացվում, փորձենք՝ Հայլանդիան

Տարիներ առաջ գրավոր մտորումներիցս մեկին ինչ-որ առումով մասամբ տարօրինակ վերնագիր էի ընտրել՝ ե՞րբ կապրենք Հայցարիայում: Հասկանալի է, որ երկիր մոլորակի վրա նման անվանումով տարածք կամ երկիր չկա. ակնարկս վերաբերում էր շվեյցարացիների օրինակով հայկական պետության տարբերակին, որն անվարան կարելի է համայն հայության երազանք համարել: Թեեւ սույն անվանման հիմնական արմատը հայկական բառարաններում թարգմանվում է որպես դռնապան ու բարապան, նաեւ՝ շվեյցար, որը պարզ ու հասարակ մասնագիտություն ու աշխատանք է ներկայանում, այսուհանդերձ Շվեյցարիա կոչվող պետությունում են արտադրվում երկիր մոլորակի գերճշգրիտ աշխատող ժամացույցներն ու ամենաորակյալ պանիրները, նաեւ շատ այլ արտադրատեսակներ: Այնպես չէ, որ ճաշակի ու համի զգացում ունեցող հայերս պատահական ենք նպատակ ընտրել, դրա իրականացումը մեր խնդիրը դիտարկել: Տարիների հեռավորությունից գնահատելով այն իրողություն դարձնելու գործընթացը, ստիպված եմ, ավաղ, որակումը հնչեցնել, քանզի շուրջ երեք տասնամյակ առաջ տրված խոստումների համաձայն ՀՀ-ում ժամացույցների շվեյցարական տեսականին գերազանցող արտադրանք էինք թողարկելու, Եվրոպա էլ, չգիտես ինչու հայկական մարգագետիններն ալպյան անվանելով, դրանցում պահվող կովերի կաթից պատրաստվող պանիրներ էինք արտահանելու: Ոչ մեկն ստացվեց ոչ մյուսը, ոչ ոք էլ անգամ նվազագույն բացատրություն-պատասխան չտվեց այդ ձախողումների համար, թեեւ ամեն պահի է խոսվում հայերիս մարդկային ներուժի ու քարից հաց քամելու ունակության, որն է՝ աշխատասիրության մասին:

Այս մասին ակամա մտորեցի իմքայլականների սյունիքյան միջոցառումը դիտելիս, որտեղ պարզվեց ՀՀ-ում կյանքի որակը բարեփոխելու նպատակով խենթ ծրագրեր են անհրաժեշտ: ՀՀ քաղաքացուս կողմից մեկն առաջարկեմ. այնքանով որքանով մեր ու շվեյցարացիների զբաղեցրած տարածքները գրեթե նույնչափ են, սակայն նրանց մայրաքաղաքը երկրի կենտրոնում է, մերը ողջ տարածքի մի տեսակ ծայրամասում, եկեք Հայաստան երկրի մայրաքաղաքը տեղափոխենք, ասենք գեղարքունյաց Վարդենիս բնակավայր: Մեղք չենք գործի, քանզի վարդ բառն է հիմքում, Սեւանի ափը, հարեւանությամբ Արցախն է, մի փոքր անդին Սյունիքը, Շորժայով էլ երկրի հյուսիսային տարածքներ հասնելը՝ ժամերի խնդիր: Ժամանակին Բրազիլիան, վերջերս էլ Ղազախստանը նման կերպ վարվեցին, կարծես սխալների ուղղում չեն նախաձեռնում, ասել է թե քայլը ճիշտ է արված, տեղին է ու արդարացված: Դե մերն ուրիշ է, առանձնահատուկ. այ, կկարգավորենք հերթական միջոցառման միկրոֆոնի աշխատանքը, այն հուսալի աշխատագործիք կդարձնենք, նոր կարելի է ընթացիկ հարցերից խոսել, ծրագրեր կազմելու տրվել: Այնպես որ բարդագույն են մեր խնդիրները, սկսած ժամացույցի ճոճանակի շարժի հաշվարկից մինչեւ պանրի հասունացման պահի ընտրությունը: Կատակ բան չէ, քանզի փորձասենյակներ են անհրաժեշտ, լաբորատորիաներ են պահանջվում, ծրագրավորող մասնագետների պակաս կա, ֆինանսական միջոցների էլ սղություն, այնպես որ Հայցարիայում ապրելու երազանքը թող մնա, դեռ դրա ժամանակը չէ:

Իսկ եթե լուրջ՝ ժամանակն է, մի բան էլ ուշացած: Ընդամենը պետք է տեսնել, որ Եվրոպայի կենտրոնում գտնվող այս պետությունն իր 8 մլն բնակչության աշխատելու ու հանգստի, կրթության ու առողջապահության, մշակույթի ու մարզական օրն ու շաբաթը, ամիսն ու տարին բովանդակալից անցկացնելու ուղղությամբ ինչպիսի քայլեր է իրականացնում, կարեւորում փոքրից մեծի առաջնահերթ առողջ ու մատչելի սննդակարգը: Նրանց ու միլիոնավոր հյուրերի ու զբոսաշրջիկների պարենային ապահովության ու երկրի պարենանվտանգության նպատակով բազմաբնույթ քայլեր է ձեռնարկում, նաեւ 1,6 մլն կով պահում, դրանց լավագույնս կերակրելու համար էլ լիարժեք անասնակեր համարվող հարյուր հազարավոր տոննաներ եգիպտացորենի հատիկ է աճեցնում: Համոզվել են, որ այս բույսի 3 կիլոգրամը 1 կգ հավի, խոզի ու տավարի միս է դառնում, կովերի տարեկան կաթնատվությունը մինչեւ 12 հազար լիտրի հասցնում, բազմալեզու ու բազմակրոն մարդկանց այս հանրությանը վաղվա օրվա հանդեպ հույս ու հավատ ներշնչում: Այդ թվում մեր ոչ սակավ հայրենակիցների, ովքեր այսօր էլ փորձում են հաստատվել Շվեյցարիայում, քանզի տեսնում ու համոզվում են, որ ոչ էապես բարենպաստ հողա-ջրա-ջերմային պայմաններում երկիրը հնարավոր առավելագույնն անում է մարդկանց առօրյան լավագույնս կազմակերպելու նպատակով: Թվերի հետեւից չեմ ընկնի, քանզի մերոնց համար տիպական լոլիկի ու վարունգի, խաղողի ու կեռասի արտադրության ցուցանիշներ այստեղ պարզապես չեն հավաքագրում դրանց ոչ էական լինելու հանգամանքով: Իսկ ահա կաթի, մսամթերքների, հացազգիների մշակության ու արտադրության հանդեպ արտակարգ ուշադիր ու անգամ բծախնդիր են: Կաթի արտադրությունը 4 մլն տոննա, հիմնական մսամթերքներինը մինչեւ 600 հազար տոննա, հացահատիկը 1 մլն տոննայից ավելի, շաքարի ճակնդեղը 1,5 մլն տոննա: Եվ սա՝ 1 բնակչի հաշվով հազիվ 500 քառակուսի մետր 50-րդ հորիզոնականին մոտ վարելահող ունենալու պայմաններում, երբ մերը 1600 քմ է, առավել բարենպաստ 40-րդ հորիզոնականում: Արդեն այս գարնանն էր պարտադիր նվազագույնը 10 հազար, առավելագույնը 15 հազար հեկտար վարելահողերի վրա, որոնք մեր կարողունակության հազիվ 2-3 տոկոսն են կազմում, լիարժեք անասնակեր համարվող մշակաբույսերի արտադրություն կազմակերպել, կանխելու այն գահավիժումը, որում հայտնվել է ՀՀ տնտեսության որոշիչ ոլորտներից մեկը՝ կաթնա-մսամթերքների արտադրությունը: Ծանոթացեք լրջագույնս վտանգված վիճակագրության. 2016-2018 թթ հունվարի 1-ի դրությամբ խոշոր եղջերավորի գլխաքանակը 700 հազարից իջել է 590 հազարի, կովերինը 319 հազարից 267 հազարի: Երբ ՀՀ գյուղնախարարությունում կայացած հանդիպման ընթացքում նախարարի աշխատասենյակն զբաղեցնող ամիսներ առաջ նշանակված փոխնախարարին ներկայացրի երկրին առայժմ անհրաժեշտ 1 մլն տոննա լիարժեք անասնակերի մշակում ծավալելու խնդիրը, տարակուսանք ապրեց: Այն առավել ընդգծվեց, երբ հիշեցրի ոչ մեծ տարածքով Սերբիայում 8 մլն տոննա հիմնականում անասնակերի նպատակով եգիպտացորենի հատիկի արտադրությունը, որը նախապայման է զգալի ծավալներով ՌԴ կաթնամսամթերքների արտահանման համար:



Կարծես բարդ խնդիրների մասին չէ մտահոգությունը: Ասենք, մեր երբեմնի ավտոմոբիլաշինության բազայի վրա ստեղծել ՀՀ-ում էլեկտրամոբիլների նոր սերնդի արտադրություն, մասամբ արտառոց մի գաղափար, որով կարելի է ուշադրության արժանանալ, որն առայժմ փոխարինում ենք հայկական կոնյակով Չինաստանը գրավելու ցանկությամբ: 1990-ականների ՀՀ գյուղնախարար Ա. Գեւորգյանն էր նման մի խնդիր դնում՝ 1 չինացուն 1 ծիրան նպատակ հռչակում, որի համար կպահանջվի մոտ 150 հազար տոննա արտահանման արժանի պտուղ, երբ այս տարվա համար կանխատեսվող բերքի ողջ ծավալը 70 հազար տոննա է: Տարիները տասնամյակներ դառնալով անցան գնացին, 10-ից ավելի նախարարներ միմյանց հաջորդեցին, իսկ հիմնախնդիրները մնացին՝ երկիրը գոյատեւում է անգամ անբարյացակամ Թուրքիայից հագուստի ու կենցաղային իրերի, էլեկտրատեխնիկայի ու պարենի ներկրումների հաշվին, տարբեր խնդիրներ ստեղծելով իրավապահների ու հարկահավաքների համար: Վերջիններս իրենց հիմնախնդիրները թողած զբաղվում են փոքր ու միջին գործարարներին վերահսկելով, նրանց զանցանքները հանցանքների վերածելով, գործարար միջավայրը ցնցելով: Լավ օրից չէ, որ մեր երբեմնի նախագծողներն ու խառատները, մանկավարժներն ու փականագործները ռիսկերի գնալով ու փորձությունների հանդիպելով ապրանքներ են ներկրում, երբ դրանք ՀՀ տարածքում արտադրելու պայմանների ստեղծումը իշխանությունների գործն ու պարտականությունն է, որը շատ հաճախ փոխարինվում է «ՀՀ տնտեսական զարգացումը պետք է հիմնված լինի ՀՀ քաղաքացիների անհատական ջանքերի վրա» ձեւակերպումներ հնչեցնելով: Կարծես այդ անհատներից չեն կազմված Տավուշի ու Արմավիրի մարզերի կարկուտից ու քամուց տուժածները: Նրանց առօրյա խնդիրները հիմնախնդիրների վերածելու գործընթացը ժամ առաջ կանխելու փոխարեն տեսնում ենք, թե ինչպես է մարզպետը Մոսկվայի առեւտրի տաղավարում գովազդում մարզի պտուղն ու բանջարեղենը, չմոռանալով նշել դրանց առայժմ աննշան ծավալների մասին, իսկ ՀՀ նախարարը չինական առեւտրի կենտրոնում հայկական անզուգական կոնյակից ու մեղրից է խոսում: Որտե՞ղ է այդ հայկական մեղրը, որի հետ մեր մարդիկ հիմնականում առնչվում են յուրաքանչյուր տարի գների բարձրացման տեսքով: Քանի՞ մեղվաընտանիք կա ՀՀ-ում՝ 200, 300, 400 հազար, անգամ փեթակից առավելագույնն 15 կգ բարիք հաշվարկելու պարագայում հազիվ 3-ից 6 հազար տոննա մեղր է ստացվում, 1 բնակչի հաշվով՝ 1-2 կգ: Տնտեսագիտական թե տնտեսվարական ի՞նչ մոտեցումների թե գնահատականների արդյունքում է հնարավոր գրեթե զրոյական այս ցուցանիշների պայմաններում արտահանման հնարավորություն տեսնել: Իսկ խոստացվեց որ մեղրը կհայտնվի նաեւ հայ զինվորի ճաշացանկում:

Լավ. ընդունենք որ Հայցարիա պետության տեսլականը չստացվեց, աշխարհի վերջը չէ, այլ տարբերակ փնտրենք. կան չէ՞ հայաստանցիներիս կողմից նախընտրելի այլ պետություններ, ասենք Հայլանդիա տարբերակով: Հասկանալի է, որ խոսքը Հոլանդիա, Զելանդիա, Իռլանդիա, Ֆինլանդիա երկրների ակնարկ է պարունակում: Նշվածներից թերեւս ամենասերտը Ֆինլանդիան է, ՀՀ շուկայում ներկայացված օղիներով ու կարագով: Ինչ-որ առումով տարօրինակ վիճակ է պատկերվում, քանզի երկիրը 60-70-րդ ցրտաշունչ հորիզոնականների մեջ է, 60 տոկոսով անտառածածկ, հուլիսի միջին ջերմաստիճանը 14-17 աստիճան, մի խոսքով՝ ՀՀ-ի համեմատ էապես անբարենպաստ բնակլիմայական պայմաններ: Բայց արի ու տես, որ Ֆինլանդիան յուրաքանչյուր աշուն մինչեւ 4 մլն տոննա հացահատիկ է ստանում, 1 բնակչի հաշվով մոտ 800 կգ, երբ ՀՀ ցուցանիշն անգամ 100 կգ չի կազմում: Վստահ եմ գիտեք, որ ֆինները ցորենի այդ ահռելի քանակներն իրենց հաց-հանապազօրյայի ապահովման նպատակով չեն մշակում, քանզի յուրաքանչյուր տարի նաեւ 400 հազար տոննա տավարի, 200 հազար տոննա խոզի ու 100 հազար տոննա հավի միս են արտադրում 1 բնակչի հաշվով 140 կգ, երբ ՀՀ-ն այս պարենատեսակներով հիմնականում ներկրող է, այդ թվում ֆիննական հացահատիկից ստացվող թանկ գնահատվող օղի ու ֆինների կովերի անարատ կաթից պատրաստվող ոչ մատչելի կարագ: Եվ հարցը՝ սրանցից ո՞րն է մարդ-արարածի մեր տեսակին անհասանելի, ինչում է բնականաբար: Տասնամյակներ շարունակ տեսնում ու զգում ենք, որ ՀՀ հողա-ջրա-ջերմային կարողունակությունն այլոց բանջարա-բոստանա-այգեգործական պահանջներին ու վայելքներին ծառայեցնելը չի նպաստում ՀՀ տնտեսության կայացմանը, բաց դաշտավարության անհարկի խրախուսումը խոչընդոտներ է ստեղծում հայ հողագործի համար, որն անգամ մեծ ցանկության դեպքում պետությունը փոխհատուցել ի զորու չէ, մի խոսքով իսկական տնտեսաշիլաշփոթ, որը տարին տարու վրա շարունակվում է:

ՀՀ նորոգ կառավարությունը ծրագրում է այս վիճակն ուղղել տարեկան 5 տոկոս տնտեսական աճի շնորհիվ: Տողերիս հեղինակն աճը հաշվարկել է 7 տոկոսի պարագայում, որի արդյունքում 2028-ին ՀՀ-ում ստացվում է 25 մլրդ դոլար ՀՆԱ, 1 բնակչի հաշվով 7-8 հազար դոլար, որպիսի ցուցանիշ այսօր արդեն ունեն Գվատեմալան, Լաոսը, Բոլիվիան, որոնց հետ համեմատվելը մեր ծրագրերի մեջ չի մտնում: Անգամ տաղանդավոր մարդկանց երկիր դառնալու հռչակագրային ցանկությունների պայմաններում հնարավոր չէ պատկերացնել, որ ակնկալվող 4 մլն հայաստանաբնակների շարքում չեն լինի համեստ մասնագիտության հարյուր հազարավոր ներկայացուցիչներ, ամենատարբեր ծառայություններ մատուցողներ, որոնց վարձատրությունները հազիվ բավարարեն արտերկրներից ներմուծված առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռքբերմանը, որոնք իր քաղաքացիների սերն ու հարգանքը վայելող պետություններում արտադրվում է սեփական ուժերով, նպաստում աշխատատեղերի ստեղծմանը, երկրի իրական հեղինակության բարձրացմանը:

Վերջին տասնամյակներին Հոլանդիայում, նաեւ այլ երկրներում, ապաստանած ծանոթ-բարեկամներս «Այաքս»-ի խաղերը դիտելու, օպերա ունկնդրելու կամ ցուցահանդեսներ այցելելու նպատակով չէ որ արտերկրներն են բնակավայր ընտրել: Նրանց առաջնահերթերից մեկը մտահոգում է հայրենիքում մնացածների առօրյա հոգսերի թեթեւացումը, համեստ սննդակարգը, որը մասամբ լուծվում է ուղարկված ռուբլիների, եվրոների ու դոլարների միջոցով: Այլապես՝ իրենց կերածը կուլ չի գնա:

Այնպես որ՝ գուցե իրո՞ք առաջնորդվենք Հայլանդիա տեսլականի գաղափարով: Ի՞նչ ենք հիշում այս երկրի անունը հնչեցնելիս՝ պանիր, կարտոֆիլ, ծաղիկ, կով, միայն այլ որակի ու քանակների, որոնք անհասանելի են Հայաստանի Հանրապետության պայմաններում: Ինչո՞ւ հարցը պատասխանի է կարոտ, միայն ոչ՝ շարքային քաղաքացու կողմից, որից շատ բան կարելի է ակնկալել, բայց ոչ՝ ՀՀ տնտեսության կառավարում:

03.06.2019

AZG NEW SHABAT.QXD 06/06/2019 22:02 Page 9



# Տնտեսական ձեռքբերումների ու ձախողումների հայաստանյան դասերը. «թավշյա հեղափոխություն»

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Եվրասիական փորձագիտական ակումբի անդամ

«Թավշյա հեղափոխությունը» բազմաթիվ տեսակետների, ենթադրությունների, դրա իրականացման սցենարների մասին վերլուծությունների ու քննարկումների առիթ է դարձել: Մեր նպատակն է ուսումնասիրել «թավշյա հեղափոխության» տնտեսական ասպեկտները՝ վեր հանելու երեւույթի հնարավոր առանձնահատկությունները, հասկանալու «զուտ հայկական ֆենոմեն» անվանելու հավանական հիմքերը: Միաժամանակ, կարեւորում ենք անաչառորեն գնահատելու «թավշյա հեղափոխության» ձեռքբերումներն, ինչպես նաեւ բացթողումները, որոնք, միասին վերցրած, կարող են ուսանելի լինել ապագա ծրագրերը մշակելիս կամ կանխատեսումներ կառուցելիս:

Մեր դիտարկմամբ, անկախության տարիներին հայությանը մտահոգող հետեւյալ հիմնական խնդիրների շուրջ են եղել քաղաքական եւ տնտեսական զարգացումները.

- արտաքին եւ ներքին անվտանգության ապահովում,
- անկախության, պետականության քաղաքական եւ տնտեսական հիմքերի կայացում,
- արդարության, առաջին հերթին՝ սոցիալական արդարության սկզբունքի արմատավորում,
- աշխատանքի եւ աշխատատեղերի ստեղծման համար բարենպաստ պայմանների ձեւավորում,
- աղքատության մակարդակի կրճատում:

Եթե վերլուծենք անկախության ձեռքբերումից ի վեր Հայաստանի ներքաղաքական զարգացումները, իշխանությունների դեմ զանգվածային բողոքի տարբեր դրսեւորումները եւ, ի վերջո, իշխանափոխությունները, ապա դրանց հիմքում վերը նշված խնդիրների տարբեր «փնջերն» են եղել: Ինչ վերաբերում է «թավշյա հեղափոխության» առանցքային խնդրին, որքան էլ որ մեր կարծիքը տարբերվի արհեստավարժ քաղաքագետների կարծիքներից, օրեցօր ավելացող ՍՈՒՏ-ն ու ԿԵՂԾԻՔ-ն էին, որը ժողովրդի, նույնիսկ իշխանական կուսակցության եւ պետական ապարատում ծառայողների մեծ մասի համար դարձան անընդունելի եւ անտանելի:

Դրա կարեւոր մի դրսեւորում էր նախորդ իշխանությունների կողմից տրված խոստումները ներդրումների եւ որպես հետեւանք՝ նոր աշխատատեղերի ստեղծման մասին: Հիշեցնենք, որ ներդրումների անվան տակ նախորդ Կառավարությունը ներկայացրել էր ընդամենը պետական բյուջեի ծախսային հոդվածները, որոնց մի զգալի մասն ընդհանրապես անմիջական կապ չունեն տնտեսության զարգացման հետ: Այսպես օրինակ, բիզնես ներդրումների անվան տակ ներկայացվել են.

- մանկապարտեզների եւ խնամքի կենտրոնների վերանորոգում եւ հիմնանորոգում,
-քրեակատարողական հիմնարկներում էներգախնայողության միջոցառումների իրականացում,
- օրենսդրության կատարելագործման եւ իրավական հետազոտությունների կենտրոնի ստեղծում,
- աջակցություն Հայաստանի Կառավարությանը հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործում,
- ժամկետանց պեստիցիդների պահեստների ոչնչացումը եւ քիմիկատների կայուն կառավարման շրջանակներում կայուն օրգանական աղտոտիչներով (POPs) աղտոտված տարածքների խնդիրների կարգավորման ծրագիր,
- մարզադահլիճների եւ մարզաառողջարանային համալիրների կառուցում,
- գույքի օտարման ծրագրեր, ինչպես նաեւ բիզնես ներդրումների անվան տակ ներկայացված այլ անհեթեթություններ:

Հետեւաբար, հեղափոխությունը կարելի է ընկալել նաեւ որպես սուտի եւ կեղծիքի հանդեպ անհանդուրժողականության դրսեւորում:

Ինչպես եւ ամեն հեղափոխություն, Հայաստանում տեղի ունեցածին եւս բնորոշ էին բազմաթիվ օրինաչափություններ, որոնց մասին շատ է խոսվել: Քիչ չեն նաեւ համեմատությունները ու ընդհանրությունները Ֆրանսիական հեղափոխության, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության, անգամ՝ Սպարտակի ապստամբության հետ: Այնուամենայնիվ, մեզ ավելի շատ հետաքրքրում է այն, թե ինչո՞վ է այն տարբերվում մյուսներից:

Եվ այսպես, որոնք են հեղափոխության առանձնահատկությունները:

Նախ, հեղափոխությունը կրել է բացառապես խաղաղ, ոչ բռնի եւ խաղաղ բնույթ: Այս իմաստով, այն կարելի է անգամ կոչել «անարյուն իրագործված հեղափոխություն»:

Կարեւոր առանձնահատկություններից մեկն էլ հենց կաշառակերության, կեղծիքների, պետական ունեցվածքի թալանի եւ կլանների, կեղեքողների դեմ քաղաքացիական հանրության համախմբումն է:

Իրականում, «թավշյա հեղափոխության» կարեւոր առանձնահատկությունն ու հաջողության արմատներն ավելի խորն են. Ժողովրդի դժգոհությունը կուտակվել է աստիճանաբար:

Անփոխարինելի նպաստող գործոնի դեր խաղացին սոցիալական ցանցերը, ինչպես նաեւ մեծ մասսայականություն վայելող առցանց լրատվամիջոցները, որոնք ուղիղ հեռարձակմամբ ներկայացնում էին հեղափոխության բոլոր զարգացումները: Նախկինում ընդդիմադիր շարժումներ նախաձեռնող եւ ղեկավարող քաղաքական ուժերը կարող էին միայն երազել նման թափանցիկության եւ իրադարձությունների անաչառ լուսաբանման մասին:

Պետք է նկատել, որ «անարյուն» բնույթը պայմանավորված էր նախորդի՝ իշխող ուժի կամովին հեռացմամբ, առանց առճակատման եւ ընդհարումների, ինչը թույլ տվեց նոր ուժին իշխանության գալ առանց ավանդական ցնցումների: Սա եւս այս հեղափոխության առանձնահատկություններից է:

Կարեւոր ձեռքբերումներից մեկը, թերեւս, այն է, որ տնտեսական անկում չի արձանագրվել, պահպանվել է տնտեսական զարգացման շարունակականությունը եւ ոչ միայն չեն եղել ցնցումներ, որպես այդպիսին, այլեւ առանձին ոլորտներում ավելի առաջանցիկ աճ է գրանցվել, մասնավորապես՝ շինարարության ոլորտում:

Ֆինանսական հատվածում վստահության գործոնով պայմանավորված եւս մեկ ձեռքբերում կարելի է արձանագրել ՝ ազգաբնակչության ավանդների ծավալի աճը: 125 մլրդ դրամով աճել են ավանդները միայն ամռան ամիսների ընթացքում:

Ազգային դրամանիշը կայուն է եւ պահպանում է իր կայուն հետագիծը: Պետական պահուստները 2 միլիարդից ավելին են, ինչը ապահովության եւ անվտանգության բարձր մակարդակ է: Անցյալ մայիս ամսին, ՀՀ ԿԲ-ն ոչ թե վաճառել, այլ գնել է 44 մլն դոլար: Սա նշանակում է, որ առկա են բարենպաստ հիմքեր:

Հուլիսի 1-ից ներդրվել է կուտակային կենսաթոշակային բարեփոխումների պարտադիր բաղադրիչը: Երկարաժամկետ հեռանկարում դրանք այն գումարներն են, որոնք կարող են եւ պետք է օգտագործվեն Հայաստանի տնտեսությունում, հատկապես արդյունաբերական ծրագրերի համար:

Այս ամենն ավելի նման է ոչ այնքան հեղափոխության, որքան աստիճանաբար տեղի ունեցող էվոլյուցիոն զարգացումների, որոնք ինչ-որ հանգրվանում պետք է խտացված դրսեւորվեին նոր որակի ձեւավորմամբ եւ որակական փոփոխություններով, որի մեկնարկը տվեց «թավշյա հեղափոխությունը»: Այլ խոսքով, հայկական իրականության մեջ ձեւավորվեց նոր ֆենոմեն՝ քաղաքական գրադուալիզմ, ինչը կարելի դասել առանձնահատկությունների շարքին:

Մյուս առանձնահատկությունը, թերեւս, այն փաստն է, որ քաղաքացուն փողոց դուրս բերելը եւ առաջնորդելը, պարզվում է, ավելի հնարավոր է, քան տարիներ շարունակ քարոզչություն ծավալելն առ այն, թե որքան կարեւոր է յուրաքանչյուր ընտրողի ձայնը եւ որքան մերժելի է հաշվողականությունն ու կաշառքով քվե տալն այս կամ այն թեկնածուին:

Թեեւ շատերի համոզմամբ «թավշյա հեղափոխության» հիմնական պատճառները, խնդիրները եւ շարժիչ ուժերը հիմնականում տեղական բնույթ էին կրում, այնուամենայնիվ, բազմաթիվ փորձագետների վկայությամբ, ստացավ տարածաշրջանային եւ միջազգային նշանակություն:

Առանձնահատկություններից բացի, կարեւոր է անդրադառնալ նաեւ հեղափոխության հիմնական ձեռքբերումներին եւ ձախողումներին:

**Անաչառությունը պահպանելու համար հեղափոխության ձեռքբերումները կմեջբերվեն իշխանության հայտարարություններից, իսկ բացթողումները՝ ընդդիմախոսների տեսակետներից:**

Եվ այսպես, կարեւորագույն ձեռքբերումներից են.

Ստեղծվել կամ ստվերից դուրս է բերվել 50000 աշխատատեղեր:

2019-ի հունվարին 2018-ի հունվարի համեմատ Հայաստանում գրանցված աշխատողների թիվն ավելացել է 9.9%-ով: Մասնավորապես՝

*ոչ պետական հատվածում `15.8%-ով,
*պետական հատվածում՝0.7%-ով:

10%-ով կբարձրացվեն ուսուցիչների եւ զինծառայողների աշխատավարձերը:

Չարորակ հիվանդությունների վիրահատությունն այս տարվանից անվճար է բոլորի համար: Շուրջ 200 քաղաքացու համար էլ պետությունը կվճարի արագացուցիչներով ճառագայթային բուժման գումարը, որի մեկ կուրսը 1 միլիոն ՀՀ դրամ արժե:

ՀՀ վարչապետի աշխատակազմին ստորադասվող մեքենաների թիվը կտրուկ կրճատվել է: Նախկին 50-ի փոխարեն մնացել են միայն 7-ը: ՊԵԿ-ում հաշվառված ավտոմեքենաների թիվը կրճատվել է 45-ով:

Տարածաշրջանի երկրներից առաջինը Հայաստանում՝ այսուհետ գործում է ուղղաթիռ, որը պետպատվերի շրջանակներում առողջապահական ծառայություններ է մատուցելու:

Մինչեւ 24 միլիոն դրամ իրացման շրջանառությամբ միկրո ձեռնարկությունները կազատվեն շրջանառության եւ եկամտային հարկերից:

Հարկային օրենսգրքի փոփոխությունների շրջանակում շահութահարկի դրույքաչափը կիջեցվի՝ 20-ի փոխարեն 18%:

Հարկային նոր օրենսգրքի նախագծով առաջարկվում է տաքսու անհաս վարորդներին ազատել հարկերից:

Կառավարությունը ստեղծել է գյուղական համայնքներում փոքր եւ միջին «խելացի» անասնագոմերի կառուցման կամ վերակառուցման եւ դրանց տեխնոլոգիական պահպանման պետական աջակցության ծրագիր: Եթե գյուղացին, օրինակ՝ 10 գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար ստեղծի 11.000.000 դրամով անասնագոմ, կառավրությունը գյուղացու 11.000.000 դրամի ծախսած 50% գումարը կանխիկ իրեն հետ է տալիս, իսկ սահմանամերձ գյուղերում 70 տոկոսն է հետ տալիս:

2019թ. հունվար-փետրվար ամիսներին շինարարության ոլորտում գրանցվել է 20%-ը գերազանցող աճ:

Ստորագրվել է ուղիղ համաձայնագիր Երեւանում նոր ջերմաէլեկտրակայան կառուցելու մասին: 250 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ այս ներդրումային նախագիծը կյանքի կկոչվի 26 ամսվա ընթացքում: Նոր ՋԷԿ-ի շինարարության մեջ կներգրավվի 1000-1200 մարդ, իսկ շահագործման ժամանակ կստեղծվի 230 աշխատատեղ:

**Ինչ վերաբերում է ձախողումներին, ապա իշխանության ընդդիմախոսների վկայությամբ, դրանք հանգում են հետեւյալ երեւույթներին.**

Սփյուռքը մինչ օրս ակտիվորեն ներգրավված չէ Հայաստանի տնտեսական բարեփոխումներին:

Կառավարության ծրագիրը ոչ մի կոնկրետություն չունի եւ այն բարելավելու ոչ մի առաջարկ չընդունվեց:

Ամուլսարի հանքի շահագործման հետ կապված բազմաթիվ խնդիրներ կան, որոնք եւս ժառանգվել են նախորդ իշխանություններից:

Տնտեսական աճը երկրում գնալով նվազում է եւ առաջընթացի հստակ ուղղություններ չկան:

Գիտության համակարգը ողբալի վիճակում է եւ որեւէ կերպ չի բարեփոխվում:

Պետական կառավարման մարմիններում համատարած «ինքնա»-պարգեւավճարները հիասթափություն են առաջացրել հեղափոխության առաջնորդների հանդեպ:

Հարկային օրենսգրքի անկատարությունը բացասաբար է անդրադառնում գործարարության եւ քաղաքացիների սոցիալական վիճակի վրա, անընդունելի է այն փաստը, որ մարդու գոյատեւման համար վճարվող նվազագույն աշխատավարձն անգամ հարկվում է:

Ժողովրդին սիրաշահելու համար կասեցվեցին արագաչափերի, կարմիր գծերի տուգանքները, պետական բյուջեի հաշվին չեղարկվեց 150000 տուգանք, իսկ հիմա կրկին վերադարձ է կատարվում հին համակարգին:

Համատարած դժգոհություն է առաջացրել համայնքների բռնի միավորումը՝ գյուղերի խոշորացումը, որը սկսել էր նախորդ իշխանությունների օրոք եւ շարունակվում է այսօր:

Մեկնաբանություններ չենք անի: Դրանք կթողնենք ընթերցողին:

... Վերջերս լրագրողներից մեկը դիպուկ համեմատություն էր կատարել, նշելով, թե մարդիկ փորձում են ընտրել տնտեսական ինչ-ինչ ձեռքբերումներ գրանցած փորձառու հանցագործի, սրիկայի եւ բազմաթիվ սխալներ թույլ տված, պետական կառավարման մեջ անփորձ, բայց չարիքների դեմ անզիջում կռիվ տվող ղեկավարի միջեւ: Ինձ մոտ հարց առաջացավ. Իսկ հնարավոր չէ՞ մեկտեղել դրականը եւ ունենալ վերջապես փորձառու, բանիմաց եւ ժողովրդի համար ապրող ու պայքարող ղեկավարներ: Թե՞՝ անընդհատ պետք է նայենք ու երանի տանք Արեւմուտքի եւ Արեւելքի հաջողության ուսանելի օրինակներին ու այդպես էլ չկարողանանք տեղայնացնել դրանք:

AZG NEW SHABAT.QXD 06/06/2019 22:02 Page 10



# Հրապարակային քննարկումներ Եվրասիական ինտեգրման հեռանկարների մասին ԵԱՏՄ-ում Հայաստանի նախագահության տարում

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

Քաղաքական վերլուծաբան
Եվրասիական փորձագիտական ակումբի համակարգող

***Ինչպես հայտնի է, 2019թ. մեր երկիրը նախագահում է ԵԱՏՄ ղեկավար-մարմիններում: Հայաստանում աշխուժություն է նկատվում եվրասիական ինտեգրման իրողությունների, ընթացքի եւ հեռանկարների քննարկման հարցում: Հունիսի 10-ին Ազգային ժողովի եվրասիական եւ տարածաշրջանային ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը խորհրդարանական լսումներ է անցկացնում «Եվրասիական տնտեսական ինտեգրման իրողությունները, մարտահրավերները ու հեռանկարները» խորագրով: Մասնակցելու է հայակական տնտեսագիտական եւ փորձագիտական հանրության ողջ ընտրանին: Այս տարվա ընթացքում սա հանձնաժողովի նախաձեռնած արդեն երկրորդ հրապարակային քննարկումներն են, ինչը մի անգամ էլ վկայում է, որ իշխանությունները լուրջ են վերաբերվում եվրասիական ինտեգրման վեկտորին եւ փորձում են խթանել ինտելեկտուալ քննարկումներ դրան առնչվող արդիական խնդիրների շուրջ:***

## Եվրասիական ինտեգրման ծավալման տեսանելի հեռանկարները

Մայիսի 29-ին Նուռ-Սուլթան քաղաքում հրավիրվեց Բարձրագույն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հոբելյանական նիստը՝ նվիրված ԵԱՏՄ հնգամյակին: ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինի** առաջարկությամբ **Նուրսուլթան Նազարբաեւն** ընտրվեց խորհրդի պատվավոր նախագահ: Սա Ղազախստանի առաջին նախագահի ծառայությունների գնահատումն էր ԵԱՏՄ ստեղծման ու զարգացման ասպարեզում: Արժե հիշեցնել, որ դեռ 1994թ. Մոսկվայի պետական համալսարանում նա հրապարակային դասախոսություն էր ունեցել, կոչ անելով ետխորհրդային երկրներին ստեղծել Եվրասիական միություն: Այդ տեսլականն էր ընկած Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի նախագահների 2011թ. հրապարակային ելույթներում, որտեղ նրանք հանդես եկան Եվրասիական տնտեսական միություն ստեղծելու նախաձեռնությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մի շարք պատճառներով Նազարբաեւի տեսլականը եվրասիական հեռանկարի հարցում շատ առարկայական եւ իրականացող է լինում, երկու բառ ասենք Նուռ-Սուլթանում նրա ունեցած ելույթի մասին: Ն.Նազարբաեւը պնդում է, որ կազմակերպության հեռանկարը տնտեսական դեռեւս չօգտագործված հնարավորությունները գործարկելու մեջ է, մասնավորապես՝ միության տնտեսական ներուժը միայն տնտեսական բնույթի նախաձեռնություններով ամրապնդելու մեջ: Նազարբաեւը ոչ մի բառ չասաց քաղաքական ինտեգրման հեռանկարի մասին, դրանով ցույց տալով, որ Ղազախստանի սկզբունքային մոտեցումները ԵԱՏՄ հարցում անփոփոխ են: Լայնորեն քննարկելով հոբելյանական նիստի արդյունքները, եվրասիական վերլուծական դաշտի տարբեր ներկայացուցիչներ հանգեցին այն եզրակացության, որ ոչ Բելառուսը, ոչ Ղազախստանը, ոչ էլ Ղրղզստանը առայժմ չեն ուզում գնալ քաղաքական ինտեգրման ճանապարհով: Նրանք կբավարարվեն այս կառույցի տնտեսական ուղղվածությամբ: Ասում են, որ այդ երկրների քաղաքական վերնախավերը չեն ուզում զիջել իրենց լիազորությունները ու ազդեցությունը որեւէ վերազգային կառույցի: Նրանք միաժամանակ գտնում են, որ տնտեսական համագործակցության արդյունքները դեռ պետք է անվիճելիորեն հայտարարեն եվրասիական քաղաքական ինտեգրման հրատապ անհրաժեշտության մասին, ինչը ԵԱՏՄ մայրաքաղաքներում դեռ չեն տեսնում: Ռուս վերլուծաբաններից մեկը գրում էր, որ նկատի ունենալով արեւմտյան ճնշումները, որոնք կան Ռուսաստանի դաշնակիցների վրա եւ որոնք տեսականորեն կարող են հանգեցնել Ռուսաստանից նրանց օտարանալուն, ստիպում են ռուսական քաղաքական վերնախավերին զգուշությամբ եւ զգուշավորությամբ մոտենալ տնտեսական ինտեգրացիոն միավորման հետագա զարգացումներին: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեզանում մինչեւ վերջերս գերիշխում էր այն կարծիքը, որ չարժե քննարկել սխեմաներ, որոնք ընդունելի չեն գործընկեր երկրների կողմից:

Ասում են, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում քննարկման փուլում է ԵԱՏՄ-ի համագործակցության հարցը աշխարհի 40 պետությունների հետ, որոնցից ոմանք ցանկանում են դառնալ նույնիսկ ԵԱՏՄ անդամներ, չլինելով ետխորհրդային տարածքի պետություններ: Ակնհայտ է, որ նրանց գրավում է արտոնյալ առեւտրական պայմաններ ստանալու հեռանկարը եւ այն, որ այս կառույցը չի պատրում քաղաքական դառնալ: Ն.Նազարբաեւը իր վերոհիշյալ ելույթում ասել էր նաեւ, որ անցնում են բարձր ցուցանիշներ արձանագրելու, համագործակցության առաջնային զարգացման տպավորիչ ցուցանիշների ժամանակները եւ միությունը մտնում է ավելի դանդաղ, ավելի ծանրակշիռ ու խորը համագործակցության փուլ:

Հայաստանը վերջին երեք տարիներին ԵԱՏՄ-ում ամենաբարձր զարգացման միտումներն է արձանագրել: Այն, որ Հայաստանի ներքաղաքական դաշտում չկա հակասություն ԵԱՏՄ հարցում, այլ հիմնական քաղաքական ուժերի միջեւ կա տպավորիչ կոնսենսուս, ինքնին ուրախալի է եւ հուսադրող: Բայց ակնհայտ էր, որ նախորդ տարիներին ԵԱՏՄ ուղղությամբ տնտեսական հաջողությունները չէին ուղեկցվում ներքաղաքական, ներհասարակական եւ փորձագիտական դաշտերում կառուցողական քննարկումներով եւ բանավեճերով, ինչը մեզ, անկասկած, կուժեղացներ մեր տնտեսական քաղաքականության մեջ:



## Մի՛ փչացրեք մեր տոնը

Հոկտեմբերի 1-ին Հայաստան է ժամանելու ՌԴ նախագահ Վ.Պուտինը միության մյուս երկրների ղեկավարների հետ միասին: Հայաստանի մայրաքաղաքը ընդունելու է մեծաթիվ պատվիրակություններ, երկու օր դառնալով ԵԱՏՄ մայրաքաղաք: Այս նշանակալից իրադարձությանը մեզանում պատրաստվում են հավուր պատշաճի: Աշխուժանում են հրապարակային քննարկումները եվրասիական շուկաներում Հայաստանի ներկայության տարբեր հարցերի շուրջ: Տեղին է ասելը, որ նախորդ իշխանության ժամանակներում գործընկերների տարբեր ատյաններում տարակուսանք կար այն հարցում, թե ինչո՞ւ են պասիվ եւ ինչո՞ւ են լռում Հայաստանի ներկայացուցիչները: Ինչո՞ւ նրանք ակտիվ չեն, օրինակ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովում ընթացող տարաբնույթ քննարկումներում: Այս տարակուսանքը կարծես սկսում է փարատվել հիմա, երբ մեր երկրում վերջապես ոտք ենք դրել եվրասիական ինտեգրման հեռանկարների իմաստավորման, դրանցում կառուցողական մասնակցության, ծավալվող գլոբալ գործընթացում մեր օգուտն ու շահը հասկանալու, իմաստավորելու եւ արժեվորելու ճանապարհին: Բայց արի ու տես, որ մեր երկրում աշխուժացած քննարկումները համընկել են այն հոռետեսական դատողությունների հետ, որ հնչում են Մոսկվայի, ինչու չէ նաեւ Մինսկի ու Աստանայի շատ պատշտոնյաների կողմից: Այս հոռետեսությունը ձեւակերպվում է մոտավորապես հետեւյալ կերպ. «Եվրասիական ինտեգրումը շռնդալից զարգացման միտումներ մոտակա տարիներին էլ չի արձանագրելու: Մեծ հաղթանակների մասին զեկույցներ չեն հնչելու: Ցնցող հաջողությունների մասին հաղթական վանկարկումներ չեն լինելու (վերը թվարկված պատճառներով)»: Եվ այստեղից արվում է եզրակացություն. «Եվրասիական տնտեսական ինտեգրման թեման, խոշոր հաշվով, դադարել է հետաքրքրական լինել»: Մնում է այսպես մտածողներին ասել. «Եթե ձեզանում դադարել է ստեղծագործ, կառուցողական փնտրտուքը եվրասիական միացյալ հեռանկարի հարցում, գոնե մի՛ խանգարեք նրանց, ովքեր ասելիք ունեն»: Պետք չէ փչացնել աշնանը եվրասիական ինտեգրման ջատագովների համար շատ կարեւոր հանդիսացող Բարձրագույն խորհրդի նիստի մթնոլորտը: Հայաստանի նախագահության տարում հրապարակային քննարկումների դաշտում խայծ գցել, թե եվրասիական ինտեգրման ինտելեկտուալ ընկալումն այլեւս հետաքրքրական չէ, նշանակում է՝ եւս մեկ քայլ անել ԵԱՏՄ տարածքի ազգերին միմյանցից հեռացնելու ուղղությամբ:

## Եթե միասին ձեռնտու է

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան հովանավորությամբ Ֆրանսիայի եւ Գերմանիայի քաղաքական վերնախավերը ձեռնարկում էին հսկայածավալ միջոցառումներ երկու երկրների հասարակությունների միջեւ վստահությունը մեծացնելու, փոխադարձ կապեր ստեղծելու եւ դրանք ամրապնդելու ուղղությամբ: Այդ երկրների ավագ սերունդները հիշում էին պատերազմը եւ դրա թողած ծանր ազդեցության տակ էին: Միջին եւ երիտասարդ սերունդները ստեղծված մեծածավալ հնարավորություններով սկսեցին շփվել միմյանց հետ, ընկերություն եւ բարեկամություն անել, սովորել գործակցել իրար հետ եւ այլն: Հետո նրանց միացան Արեւմտյան Եվրոպայի մյուս երկրների հասարակությունները: Եվ այդպես՝ մոտ 40 տարի: 1991թ. դա հանգեցրեց Եվրոպական Միության ստեղծմանը: Մեր պարագայում, կարծես, հակառակն է: Համագործակցող երկրների ավագ սերունդը հիմնականում դրական հիշողություններ ունի միասնական խորհրդային անցյալից եւ դրական է վերաբերում ետխորհրդային տարածքի ժողովուրդներին: Անկախության պայմաններում ծնված ու մեծացող երիտասարդ սերունդը շատ վատ պատկերացումներ ունի եվրասիական տարածքի ազգերի պատմության, մշակույթի, այսօրվա կյանքի մասին: Եթե ոչինչ չարվի, ապա ժամանակը, ոչ թե հորից-որդի փոխանցելով, կշարունակի մեզ իրար մոտեցնել, այլ կհեռացնի միմյանցից: Այս են վկայում սոցիոլոգիական հետազոտությունների տվյալները: Սա շատ ձեռնտու է նաեւ նրանց, ովքեր չարությամբ են հետեւում ԵԱՏՄ ուժեղացման գործընթացին եւ բոլոր միջոցներով փորձում են խանգարել դրան:

Փոքրիկ Հայաստանում, որտեղ քաղաքական կյանքը իրար կպցրած երկու ափի մեջ է, մենք շատ պարզորեն ենք տեսնում եվրասիական ինտեգրման եւ կողմնակիցներին, եւ՛ հակառակորդներին: Մենք փորձում ենք վերլուծել այդ գաղափարական բախման հետեւանքները եւ անել կանխատեսումներ, որոնք կօգնեն մեր գործարարներին, գիտնականներին եւ երիտասարդությանը կողմնորոշվելու այս դաշտում: Փաստ է, որ եվրասիական ինտեգրման ասպարեզում Հայաստանի գլխավոր ձեռքբերումներն ու մեծ ակնկալիքը դեռ առջեւում են: Ինտեգրման հաջող ընթացքը մեզ նոր-նոր է թույլ տվել լրջորեն մտածելու պատրաստի արտադրանք արտահանող եւ զարգացող երկիր դառնալու մասին: Թույլ չտանք մեր հակառակորդներին ու հոռետեսներին քանդելու դեռ չկառուցված եվրասիական ընդհանուր տարածքը: Հայաստանը ունի բավարար ինտելեկտուալ, մասնագիտական եւ քաղաքացիական ներուժ եվրասիական ինտեգրման ասպարեզում մոտակա տարիներին նոր տպավորիչ ձեռքբերումներ արձանագրելու, նոր հաջողություններ գրանցելու համար: Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր պատրաստ են իրենց նպաստը բերելու այս կարեւոր գործին:

AZG NEW SHABAT.QXD 06/06/2019 22:02 Page 11



# Աբեն կփորձի հաշտեցնել ԱՄՆ-ին եւ Իրանին

## Վաշինգտոնը կարող է փոխել մերձավորարեւելյան քաղաքականությունը

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

Ամերիկյան The Wall Street Journal թերթը, սեփական աղբյուրներ վկայակոչելով, հաղորդում է, որ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը նոր պատժամիջոցներ չի ձեռնարկել Իրանի դեմ: Թերթի տվյալներով, նախատեսվում էին նոր սահմանափակիչ միջոցառումներ, որոնք պետք է ուղղված լինեին կոնկրետ իրանական նավթաքիմիական ընկերությունների դեմ: Նշվում է, որ ԱՄՆ-ի հակաիրանական հռետորաբանության մեղմացման պատճառը եղել է երկկողմ հարաբերություններում լարվածությունը թուլացնելու Թրամփի որոշումը: Սաուդյան Արաբիայի արտգործնախարար **Աբդել ալ-Ջուբեյրի** հայտարարության համաձայն, Էր-Ռիադը իր հերթին «ձգտում է Մերձավոր Արեւելքում ամեն գնով խուսափել պատերազմից: Տարածաշրջանի երկրները ներկայումս դժվարին պահեր են ապրում»: Նախարարը Իրանին կոչ է արել զսպվածություն դրսեւորել, եթե այդ երկիրը ձգտում է կարգավորել իրադրությունը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ Էր-Ռիադը Թեհրանին մեղադրել էր Արաբական Միացյալ Էմիրությունների ափերի մոտ նավթատար նավերի վրա հարձակումներին, ինչպես նաեւ սաուդյան նավթամուղ Saudi Aramco պետական նավթային ընկերության խողովակաշերտերի վրա կատարված հարձակումներին մեղսակից լինելու մեջ: Իրանը կտրականապես հերքել էր դա: Բայց սկզբում ԱՄՆ պետքարտուղար **Մայք Պոմպեոն** հայտարարեց, որ ինքը այդ առնչությամբ տվյալներ չունի: Հետո ամերիկյան զինված ուժերի շտաբների պետերի Միացյալ կոմիտեի ներկայացուցիչ գեներալ **Մայքլ Գիլդեյը** հայտնեց, թե Պենտագոնը իբր հետախուզական տեղեկություններ ունի նավթատար նավերի վրա կատարված հարձակումներին իրանցիների մասնակցության մասին, բայց մտադիր չէ գաղտնազերծել այդ տեղեկությունները: Ուրեմն ինչո՞ւ Վաշինգտոնը դիմեց Իրանի շուրջ իրադրության ոչ թե առավելագույն, այլ չափավոր լարվածությանը:

Թրամփը որոշել է լրացուցիչ կարգով Մերձավոր Արեւելք ուղարկել 1500 զինծառայող, որպեսզի արդյունավետորեն դիմակայի Թեհրանին: Բայց եթե նկատի ունենանք, որ ԱՄՆ-ը առանց այդ էլ տվյալ տարածաշրջանում ունի 70 հազարանոց զորաբաժին, ապա պարզ կդառնա, որ Սպիտակ տունը չի նախապատրաստվում զինված ներխուժում կատարել Իրան, սակայն ծախսի տակ է դրել այդ շրջանում իր որոշ դաշնակիցների: Կարծեցյալ իրանական նախահարձակումը կասեցնելու համար ԱՄՆ վարչակազմը, առանց Կոնգրեսի հաստատման, 8,1 մլրդ դոլարի զենք է վաճառել Սաուդյան Արաբիային, Հորդանանին եւ ԱՄԷ-ին: Ուստի այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ վերջերս Իրանի շուրջը ստեղծված տարօրինակ պատմությունը քողածածկույթ է ծառայել հենց այդ գործարքի համար, իսկ մնացյալը՝ այդ թվում Պարսից ծոցի երկրների եւ Արաբական պետությունների լիգայի օրերս Մեքքայում կայացած արտահերթ գագաթաժողովը, ընդամենը քաղաքական մանեւր է:

Նման պայմաններում Թեհրանն ինքը սկսել է հանդես բերել նկատելի դիվանագիտական ակտիվություն: Իրանի արտգործնախարար **Մուհամմադ Ջավադ Զարիֆը** օրերս այցելեց Իրաք, որտեղից արաբ հարեւաններին առաջարկեց տարածաշրջանի երկրների հետ ստորագրել չհարձակվելու պայմանագիր: Բաղդադը առաջարկեց իր միջնորդությունը Թեհրանի եւ Վաշինգտոնի երկխոսության հաստատման համար, ինչը մամուլում երկու երկրների միջեւ դիվանագիտական շփումների որոնմանը վերաբերող ասեկոսեների առիթ դարձավ: Ինչպես պարզվեց, այստեղ եւս առանց կրակի ծուխ չի լինում: Շուտով հայտնի դարձան ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի եւ Ճապոնիայի վարչապետ Սինձո Աբեի բանակցությունների արդյունքները: Վերջինս մտադիր է որպես միջնորդ հանդես գալ ԱՄՆ-ի եւ Իրանի հարաբերությունների կարգավորման հարցում:



Դա ձեռնտու է Վաշինգտոնին, որը խնդիրներ ունի Իրանի հետ միջուկային բազմակողմ համաձայնագիրը ստորագրած բոլոր երկրների հետ: Չէ՞ որ Տոկիոն մի կողմից պաշտպանում է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը, իսկ մյուս կողմից խուսափում է Թեհրանի հետ հարաբերությունների բարդացումից, որի նավթային մատակարարումները կազմում են Ճապոնիա ներմուծվող վառելիքի նշանակալի մասը: Բացի դրանից, Իրանը, որը միջուկային համաձայնագրի մասնակից եվրոպական երկրներին (Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա), ինչպես նաեւ ամբողջ Եվրոմիությանը նախազգուշացում էր արել, որ եթե նրանք 60 օրվա ընթացքում չվերականգնեն առեւտրային եւ բանկային հատվածների բնականոն աշխատանքը, ապա ինքը կվերսկսի առավել բարձր մակարդակի ուրանի հարստացումը, կկուտակի այդ ուրանի, ինչպես նաեւ ծանր ջրի պաշարներ եւ կվերագործարկի Արաքի միջուկային համալիրի աշխատանքը, բացահայտ դժգոհություն էր արտահայտել ԱՄՆ-ի քաղաքականության հանդեպ այդ երկրների դիրքորոշման առնչությամբ:

Միջնորդի դերում տեսականորեն հանդես գալ կարող էր նաեւ Մոսկվան: Սակայն Թեհրանում նման ազդեր, ըստ երեւույթին, չեն մշակել, կամ էլ հրաժարվում են դրանից: Ճապոնիա կատարած այցելության ժամանակ, ԱՄՆ-Իրան հարաբերությունների մասին խոսելիս, Ռուսաստանի արտգործնախարար **Սերգեյ Լավրովը** հայտարարեց, որ Մոսկվան իբրեւ միջնորդ իրեն չի պարտադրում եւ ընդհանուր առմամբ դեմ է արտաքին հարաբերություններում պարտադրանքի կոշտ միջոցների կիրառմանը:

Ինչ վերաբերում է Թրամփ-Աբե բանակցություններին, երբ դրանց ընթացքում խոսք բացվեց Ճապոնիայի միջնորդական դերի մասին, Թրամփը փոխեց հռետորաբանությունը:

«Իրանը հնարավորություն ունի մեծ երկիր դառնալ նույն ղեկավար կազմով», հայտարարեց **Թրամփը** Ճապոնիայի վարչապետի հետ իր համատեղ մամլո ասուլիսում: «Մենք չենք ձգտում փոխել վարչակազմը, ես ուզում եմ, որ դա հասկանալի լինի: Մենք ձգտում ենք այն բանին, որ չլինի միջուկային զենք: Կարծում եմ՝ Իրանն ունի վիթխարի տնտեսական ներուժ եւ անհամբերությամբ սպասում եմ, թե երբ Իրանը կկարողանա այն ցուցադրել»: Նման իրավիճակում Իրանի դեմ նոր պատժամիջոցների ձեռնարկումն ուղղված կլիներ Աբեի առաքելության դեմ: Դրան հաջորդեց Իրանի արձագանքը: Զարիֆը հայտարարեց, որ Իրանի համար կարեւոր են Թրամփի գործողությունները, այլ ոչ թե խոսքերը: Սա կարելի է ընկալել որպես Ճապոնիայի վարչապետի ջանքերը ընդունելի համարելու Թեհրանի պատրաստակամություն:

Ճապոնական Kyodo գործակալությունը հաղորդում է, որ վարչապետ Աբեն մտադիր է Թեհրան այցելել հուլիսի կեսերին, եւ այդ այցը կարող է առաջինը դառնալ 1978 թվականից ի վեր: Գործակալությունը նաեւ տեղեկացնում է, որ արդեն շփումներ են հաստատվել Ճապոնիայի վարչապետի, ԱՄՆ նախագահի անվտանգության հարցերով օգնական Ջոն Բոլթոնի եւ Իրանի արտգործնախարար Զարիֆի միջեւ: Իրան կատարելիք այցի շրջանակներում Աբեն մտադիր է նախագահ Հասան Ռոհանիին հայտնել, որ Ճապոնիան կշարունակի հետեւել միջուկային համաձայնագրին, թեեւ ինքը դրա անմիջական մասնակիցը չէ: Ամենայն հավանականությամբ, Աբեն կառաջարկի նաեւ ամենաբարձր մակարդակով քննության առնել միջուկային նոր համաձայնագրի կնքման հնարավորությունը:

Ավելի հեշտ կլինի, եթե այն ստորագրեն Իրանը եւ ԱՄՆ-ը, քան եթե դրան մասնակից դառնան մի շարք այլ պետություններ: Ենթադրվում է, որ տվյալ հարցում Աբեի հաջողության դեպքում Վաշինգտոնը զուգահեռաբար ոչ միայն կչեղարկի կամ զգալիորեն կմեղմացնի հակաիրանական պատժամիջոցները, այլեւ կփորձի նոր գաղափարների հիման վրա ներքաշվել Սիրիայի ուղղությամբ Ռուսաստան - Թուրքիա - Իրան դաշինքի մեջ: Իրանը տարածաշրջանային կարեւոր խաղացող է: Եթե Աբեին հաջողվի իրականացնել դիվանագիտական նոր գաղափարները, ապա Մերձավոր Արեւելքում իրադրությունը կարող է լրջորեն փոխվել:

Միեւնույն ժամանակ չպետք է մոռանալ, որ բուն Իրանում կան բանակցությունների ուժեղ հակառակորդներ, որոնք հանդես են գալիս

երկրի միջուկային եւ հրթիռային ծրագրերը սահմանափակելու ԱՄՆ-ի մտադրության դեմ: Այդ պատճառով, Աբեի առաքելությունը Իրանում կարող է ներքաղաքական պայքարի սրման պատճառ դառնալ: Մանավանդ որ, ըստ ամերիկյան Foreign Policy հրատարակության, Թեհրանին կփորձեն գայթակղել ռազմավարական նոր դաշինքների կնքման գաղափարով՝ շեշտելով պատժամիջոցների չեղարկման հեռանկարը:

# ԱՄՆ-ը ԵՄ-ից պահանջում է ամերիկյան զենք գնել

## Վերջնագիր Եվրոմիությանը



Արեւմտյան լրատվամիջոցներին հայտնի են դարձել այն վերջնագրի մանրամասնությունները, որը ԱՄՆ-ը ներկայացրել է ՆԱՏՕ-ի գծով իր մերձավորագույն դաշնակցին՝ Եվրոմիությանը: Պարզվում է, որ Վաշինգտոնի կարծիքով Եվրոպան իրավունք չունի մշակելու սպառազինությունների սեփական համակարգեր, այլ պարտավոր է դրանք ձեռք բերել ԱՄՆ-ից: Նման պատճառաբանության հիմնավորման համար առիթ են ծառայում Ռուսաստանի ագրեսիվության վկայակոչումները: ԱՄՆ-ը պահանջում է, որ Եվրոմիության նոր ռազմական պատվերներն ուղղված լինեն ամերիկյան սպառազինությունների ձեռքբերմանը:

Ըստ երեւույթին, ԱՄՆ-ը վախենում է այսպես կոչված «Airbus-ի էֆեկտի կրկնությունից»: 1969 թվականի մայիսի 29-ին եվրոպական համանուն ընկերությունը A300 օդանավը թողարկեց ամերիկյան Boeing-ի հետ մրցակցելու նպատակով, որն այն ժամանակ ամբողջովին գերիշխում էր առեւտրային թռիչքների համաշխարհային շուկայում: Կես դար անց Airbus-ը Boeing-ից փաստորեն խլեց օդային փոխադրումների շուկայի 50 տոկոսը: Հատկանշական է նաեւ եվրոյի օրինակը, որն իր գոյության 20 տարում դարձավ արժույթի համաշխարհային շուկայում ամերիկյան դոլարի մրցակիցը:

Վերոհիշյալ վերջնագիրը Եվրոմիությանը ներկայացրել է ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական գործերի գծով տեղակալ **Մայքլ Մերֆին**: «Առանց ԱՄՆ-ի մասնակցության եվրոպացիների սպառազինման նախագծերը առաջին հայացքից կարող են փոքր թվալ, բայց իրականում դրանք կարող են լինել անընդհատ մեծացող ձնագնդեր», ասել է Մերֆին: Ամերիկացի պաշտոնյան նկատի է ունեցել այն հանգամանքը, որ եվրոպացիները փորձում են մոլորեցնել անդրօվկիանոսյան տերերին՝ թվացյալ փոքր նախագծերի քողի տակ իրականում նախապատրաստելով սեփական սպառազինությունների խոշոր առաջընթաց:

ԱՄՆ-ի դիրքորոշումը, որի համաձայն ամերիկացիներին պետք է հասանելի լինեն Եվրոմիության սպառազինությունների բոլոր նոր տեսակները՝ անկախ հեղինակային իրավունքից եւ պայմանականություններից, կարելի է լավագույնս բնութագրել ռուսական «քո ունեցածը իմն է, իսկ իմ ունեցածին չդիպչես» ասացվածքով:

Իսպանական El Pais թերթի թղթակից **Բեռնարդո դե Միգելի** խոսքերով, ներկայումս ԱՄՆ-ը գերհզոր տերություն է զենքի արտադրության բնագավառում, ինչը նրան թույլ է տալիս վերահսկել զենքի արտահանության համաշխարհային շուկայի մոտ 80 տոկոսը: 2006-2016 թթ. ընկած ժամանակամիջոցում ԱՄՆ-ը տարեկան վաճառել է միջին հաշվով 150 մլրդ եվրո ընդհանուր գումարի սպառազինություն: Միեւնույն ժամանակ, Եվրոմիության զենքի վաճառքի առավելագույն ցուցանիշն արձանագրվել է 2016 թվականին՝ կազմելով 13 մլրդ եվրո:

Նախագահ Դոնալդ Թրամփը Եվրոմիության սպառազինման նախագիծը պաշտպանել է՝ դա հիմնավորելով Արեւմուտքի երկու գլխավոր մրցակիցների՝ Ռուսաստանի եւ Չինաստանի հզորացմամբ:

Մերֆիի խոսքերով, եվրոպացիները կհիասթափվեն, եթե ճգնաժամի պահին ունենան միայն եվրոպական զենք: Ամերիկացիների դժգոհությունը բացատրվում է նրանով, որ մտավոր սեփականության եւ արտահանության վերահսկման ոլորտներում Եվրոմիության նոր չափորոշիչները սահմանափակիչ բնույթ են կրում եւ խոչընդոտում են եվրոպական սպառազինությունների ոլորտին ամերիկյան ընկերությունների մասնակցությանը:

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 06/06/2019 22:02 Page 12



# Բարեգործական ընթրիք՝ միայնակ տարեցներին ու կարիքավոր երեխաներին աջակցելու համար

Կայացել է «Օրրան» բարեգործական հիմնադրամի հերթական՝ 14-րդ ամենամյա ընթրիքը: Տարիներ շարունակ, գործընկեր կառույցների հետ, հիմնադրամը լուծել է կարեւոր խնդիր. իրականացվել է գործընթաց, որի հիմքում հասարակության խոցելի շերտերի՝ սոցիալապես անապահով ընտանիքների նկատմամբ պատասխանատու մոտեցումն է: Ընթրիքի ժամանակ հանգանակված գումարները ուղղվել են երեխաների շրջանում մուրացկանության կանխմանը եւ տարեցների խնամքին:

Հերթական ընթրիքից գոյացած ամբողջ հասույթը տրամադրվելու է «Օրրանի»՝ Երեւանի եւ Վանաձորի կենտրոններին: Դրանով հնարավոր կլինի հոգալ կենտրոն այցելող շուրջ 100 միայնակ տարեցների եւ կարիքավոր 300 երեխայի սննդի, կրթական, մշակութային, սոցիալական, հոգեբանական, բժշկական համալիր ծառայություններ մատուցելու հարցերը:

Բարեգործական աճուրդի մեկնարկից առաջ ելույթ ունենալով՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը մասնակիցներին հորդորել է ակտիվորեն մասնակցել աճուրդին:

«Այս ընթրիքի նպատակը կարեւոր է: Անհրաժեշտ է մարդկանց հեռու պահել հուսահատության ճանապարհից: Սերունդների վաղվա օրը բոլորիս ձեռքերում է: Այն գեղեցիկ ու ապահով դարձնելու համար փորձենք կյանքին նայել մանկան աչքերով ու մաքրությամբ: Երեխաներն ամեն ինչ տեսնում են հոգով. նրանք աշխարհ են գալիս սիրված ու երջանիկ լինելու համար: Եվ երբ տեսնում են այդ ամենը՝ մեծանում են մարդասեր, սովորում են գնահատել իրական արժեքն ու կարողանում են գտնել իրենց կոչումը՝ կյանքում: Մենք համախմբվել ենք այդ ամենի համար», - ասել է Յիրիկյանը:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն «Օրրան»-ին նվիրաբերել է 20 միլիոն դրամ՝ ի նպաստ երեխաների շրջանում մուրացկանության կանխման եւ տարեցների խնամքի կազմակերպման աշխատանքների:

Բարեգործական միջոցառմանը մասնակցել են ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններ, բարձրաստիճան պաշտոնատար անձինք, հիմնադրամի ամենամյա գործընկերներ, գործարարներ եւ արվեստագետներ: Նրանց համախմբել է աղքատության շեմին հայտնված ընտանիքներին աջակցելու գաղափարը: Սերունդների ապագայով մտահոգ՝ հիմնադրամի տարիների գործընկեր ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրենը ներկաներին հորդորել է միանալ «Օրրանի» պատասխանատու առաքելությանը:

Բարեգործական ընթրիքին մասնակցել են ՎիվաՍել-ՄՏՍ-ը, «HSBC բանկը», «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա»-ն, «Կիլիկիա գարեջուրը», «Արմենիա Մարիոթ» հյուրանոցը, «Մեգերյան Կարպետ»-ը, «Տիգրան Մեծ» հրատարակչությունը, ինչպես նաեւ «FMDK&L», «SOFTConstruct», «INGOARMENIA», «ԱՐՄԱՍ», «CHIVAS», «GRANT THORNTON», «KPMG», «ROSTELECOM», «PRIME», «GRAND HOTEL YEREVAN», «AURORA PRIZE», «AREV PETROSYAN», «TEACH FOR ARMENIA» կազմակերպությունները:

Երեկոն վարել են Լարիսա Հովհաննիսյանը, Արտակ Հերիքյանը եւ Վիկտորիա Ասլանյանը:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում շահագործվող McAfee սարքավորումների եւ ծրագրային ապահովման ուղեկցման արտոնագրերի ձեռքբերման նպատակով կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում շահագործվող McAfee սարքավորումների եւ ծրագրային ապահովումների ուղեկցման արտոնագրերի ձեռքբերման նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ, որոնք մրցույթի հայտը ներկայացնելու պահին չունեն ժամկետանց պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային եւ սոցիալական ապահովագրության վճարների գծով:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյան 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է է 2019 թ. հուլիսի 15-ը ժամը 16-00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2019 թ. հուլիսի 18-ը ժամը 16-00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2019 թ. հուլիսի 25-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. (010) 59-28-02, 59-28-05, ներքին 18-02, 18-05, email - galust.galstyan@cba.am:

**ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ կենտրոնական բանկի կողմից ցանցային տեսագրիչներ ձեռքբերելու, տեղադրելու եւ կարգաբերելու նպատակով մատակարար կազմակերպության ընտրության բաց մրցույթ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց մրցույթ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար ցանցային տեսագրիչներ մատակարարող, տեղադրող, կարգաբերող կազմակերպություն ընտրելու համար:

Բաց մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2. մասնագիտական փորձառություն.
3. տեխնիկական միջոցներ.
4. ֆինանսական միջոցներ.
5. աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2019թ. հուլիսի 18-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2019թ. հուլիսի 18-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2019թ. հուլիսի 25-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05, mail - galust.galstyan@cba.am:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու նպատակով մարդահասակ արգելիչ-պտտաձողեր ձեռքբերելու եւ ներդնելու գործընթաց իրականացնելու համար կազմակերպության ընտրության երկու փուլով կազմակերպվող բաց մրցույթի նախաորակավորման գործընթացի մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը իրականացնում է երկու փուլով կազմակերպվող բաց մրցույթի նախաորակավորման գործընթաց՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու նպատակով մարդահասակ արգելիչ-պտտաձողեր ձեռքբերելու եւ ներդնելու գործընթաց իրականացնելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Նախաորակավորման գործընթացին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Նախաորակավորման գործընթացին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2. մասնագիտական փորձառություն.
3. տեխնիկական միջոցներ.
4. ֆինանսական միջոցներ.
5. աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2019թ. հունիսի 17-ի ժամը 16:00 ,Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկե ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2019թ. հունիսի 17-ի ժամը 16:00:

Նախաորակավորման գործընթացի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2019թ. հունիսի 24-ին ժամը 16-00:

Նախաորակավորման գործընթացին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Նախաորակավորման գործընթացին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

# Մեկ լուսարձակ՝ ամբողջ գյուղում

*Սերս գյուղն ընդգրկվել է Էկոգյուղերի ցանցի զարգացման ծրագրում*

Էներգախնայող համակարգով լուսավորվող բնակավայրերի ցանկն ընդլայնվում է: Դրանում ներառվում են այնպիսի գյուղեր, որոնք, չնայած հիմնադրման վաղեմի պատմությանը, լուսավորության՝ տարիների չլուծված խնդիր ունեն: ՎիվաՍել-ՄՏՍ-ի ու Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) ուշադրության կենտրոնում է հայտնվել նաեւ Վայոց ձորի մարզի բարձր լեռնային, սահմանամերձ գյուղերից մեկը՝ Սերսը:

Սերսին անծանոթ որեւէ մեկը գիշերը գյուղ մտնելու համար պետք է կողմնորոշվի բնակավայրի միակ լուսարձակով: Այն ամրացված է գյուղապետարանի շենքի պատին՝ հեռվից տեսանելի լինելու համար: Գյուղացիները պատմում են, որ բնակավայրը ստեղծման շատ հին պատմություն ունի. առաջին բնակիչներն այստեղ են գաղթել պատմական Հայաստանի Սալմաստ գավառից: Իրենք ձգտում են ժամանակի հետ քայլել, սակայն զարգացման տեմպերը շրջանցել են գյուղը:

Գործընկեր կառույցների՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի ու Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) աջակցությամբ, ընթացիկ տարում կմեկնարկեն սպասված աշխատանքները: Գյուղում կկառուցվի արտաքին լուսավորության էներգախնայող համակարգ, որի տնտեսական ու բնապահպանական արդյունավետության մասին այստեղ շատ են լսել: Նախատեսվում է լուսավորել գյուղի կենտրոնական փողոցները՝ շուրջ 1400մ տարածք, որի համար անհրաժեշտ կլինի տեղադրել սյուներ եւ 39 LED լուսարձակ: Ժամանակակից ենթակառուցվածքի զարգացումը կնպաստի գյուղում կյանքի աշխուժացմանը: Կլուծվի նաեւ երեկոյան ժամերին անվտանգ երթեւեկելու եւ քայլելու խնդիրը: Կարեւոր ձեռքբերումներից կլինի նաեւ ֆինանսական ռեսուրսների խնայողությունը. ներդրվող համակարգը համարվում է լուսավորման ամենաէներգախնայող միջոցն աշխարհում:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960,
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 6.6.2019, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.qxd 06/06/2019 19:18 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 22(434)
7 ՀՈՒՆԻՍ
2019

Նաիր ՅԱՆ

# Լուսինե Զաքարյանի տուն-թանգարանն արդեն իրականություն է









«Իզուր չէ, որ Լուսինե Զաքարյանը ծնվել է հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրը. նա հոգով ու էությամբ մանուկ մնաց միշտ»,-հայ հոգեւոր երգերի անզուգական մեկնաբան, անվանի սոպրանո Լուսինե Զաքարյանի մասին նրա ժամանակակիցներն այսպես են ասել:

Երկար տարիներ Լուսինե Զաքարյանի եւ նրա ամուսնու՝ գրաբարի մասնագետ, շարականագետ, ԵՊՀ դասախոս Խորեն Պալյանի երեւանյան բնակարանի հետ կապված թնջուկը չէր լուծվում: Ազգականների միջեւ անհարթություններն ու անհամաձայնությունները թույլ չէին տալիս, որ արվեստագետ ամուսինների տան ճակատագիրը դրական հանգուցալուծում ունենա՝ տուն-թանգարան դառնա: Դեռ 4-5 տարի առաջ Խորեն Պալյանի եղբորորդին՝ բժիշկ Ռաֆֆի Պալյանը, Լոս Անջելեսից պարբերաբար գալիս էր Հայաստան՝ մեծ հորեղբոր երեւանյան բնակարանի խնդիրը լուծելու: Նա նաեւ հանդիպել է մշակույթի նախկին նախարարներին: Բայց խնդիրը կտակի, ժառանգության հետ էր կապված, եւ մինչեւ հարազատների միջեւ անհարթությունները չլուծվեին, որեւէ քայլ անել հնարավոր չէր: Ի վերջո, Ռ. Պալյանին հաջողվել է խաղաղ ճանապարհով լուծում գտնել: Նրա ֆինանսավորմամբ Լուսինե Զաքարյանի եւ Խորեն Պալյանի բնակարանը վերանորոգվել է, Ն. Ս. Օ.Տ.Տ. Գարեգին կաթողիկոսի ֆինանսական աջակցությամբ էլ սկսվել են տունը թանգարանի վերածելու՝ ցուցադրական աշխատանքները: Ցուցադրության համակարգումն ու ձեւավորումն իրականացրել է «Քվադրում» ճարտարապետական արվեստանոցը:

Հունիսի 1-ին՝ Լուսինե Զաքարյանի ծննդյան օրը, Եզնիկ Կողբացի 42, բն. 3-ում վերջապես բացվեց Լուսինե Զաքարյանի տուն-թանգարանը: Առաջին հարկի երկու սենյականոց բնակարանում տեղավորվել ու ներկայացվել է այն ամբողջ արխիվային նյութը, ինչ մնացել է Լուսինե Զաքարյանից: Իհարկե, ինչպես կյանքում, այնպես էլ հուշապատում-թանգարանում նրանից անբաժան է Խորեն Պալյանը: Ամուսնական համատեղ կյանքի ընթացքում նրանց գործածած իրերը, հագուստը, անձնական պարագաները, անգամ ափսեները, բաժակները, բազկաթոռները կրում են երկուսի դրոշմը: Այդ մասունքներն առանձին ցուցադրված են ճաշասենյակում, որի ձեւավորումը պահպանվել է այնպես, ինչպես եղել է նրանց կենդանության օրոք: Տուն-թանգարանի այցելուին կթվա, թե շնչող, ապրող բնակարան է մտնում, եւ ուր որ է տանտերերը դուրս կգան ու կդիմավորեն իրեն: Համեստ ապրելակերպ են ունեցել հոգեւոր մշակույթի երկրպագու ամուսինները: Ճիշտ է, ասում են, թե սովետական տարիներին մտավորականներն ու արվեստագետներն ընդհանուր առմամբ ճոխ, շռայլ չեն ապրել, շքեղ կահ-կարասի չեն ունեցել, բայց Լուսինե Զաքարյանի եւ Խորեն Պալյանի գործածած իրերից հասկանալի է դառնում, որ նրանք առավել քան ժուժկալ ապրելակերպ ու կենցաղ են ունեցել: Բայց ընդհանուր համայնապատկերում կան չափազանց թանկ արժեքներ՝ հանդիպումներ ժամանակի նշանավոր մարդկանց հետ, որոնք հավերժացել են լուսանկարներում, ձայնասկավառակներ, բեմական զգեստներ, հոգեւոր, վերերկրային կյանքով ապրող զույգի աշխարհից մնացած մասունքներ: Տուն-թանգարանի ձեւավորման գործում մեծ ներդրում ունի Ալէյնա-Մարալ Պալյանը, որն աշխատել է թանգարանային մասունքները մատուցել ժամանակակից ոգով ու շնչով:

Եզնիկ Կողբացի 42, բն. 3-ում 1968-1992 թվականը ապրել է Լուսինե Զաքարյանը, իսկ նրա մահից հետո՝ մինչեւ 2007 թվականն ապրել է Խորեն Պալյանը: Հայտնի է, որ Խորեն Պալյանը կնոջ մահից հետո շատ էր ուզում, որ այդ բնակարանը դառնա Լուսինե Զաքարյանի տուն-թանգարան: Նրա երազանքի մասին բազմիցս են հայտնել նաեւ պատկան մարմինները: Իհարկե, բոլորն էին գիտակցում, որ Լուսինե Զաքարյանի երեւանյան բնակարանը տուն-թանգարան չդարձնելն աններելի սխալ կլիներ: Տուն-թանգարանի բացմանը Ռաֆֆի Պալյանը չթաքցրեց՝ երջանիկ է, որ մեծ հորեղբոր երազանքը վերջապես իրականացավ: Նրա համոզմամբ՝ տուն-թանգարանը շուտով դառնալու է հայ հոգեւոր եւ միջնադարյան երաժշտության կենտրոն: Այդ ուղղությամբ նա դեռ աշխատելու է: Մեմորիալ տարածքից բացի, թանգարանում կա եւս մի սենյակ, որտեղ կարելի է կամերային համերգներ, հանդիպումներ կազմակերպել: Հենց այդ նպատակով էլ բնակարանի այդ հատվածն առանձնացվել է: Թանգարանի ձեւավորումներում մեծ տեղ են զբաղեցնում տեղեկատվական եւ այլ բնույթի տեքստերը, որոնց հեղինակը Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանն է: Նրա մտահղացումն է եղել նաեւ սենյակի պատերին զետեղել մեր մեծերի ջերմ ու բարի խոսքերը Լուսինե Զաքարյանի մասին:

Այսպիսով, երեւանյան կենտրոնական, բայց շատ համեստ մի բնակարանում, որի շրջակայքում մայրաքաղաքային կյանքը եռում է, բացվեց Լուսինե Զաքարյանի տուն-թանգարանը: Երգչուհու քույրը՝ Լենա Զաքարյանը, հուզված ասաց. «Լուսինեի հուղարկավորությունից հետո ես երբեք այս բնակարան չէի մտել: Անցել է 27 տարի. ես մտա այս տուն ու չճանաչեցի այն: Շատ է փոխվել, բայց ամեն անկյունը Լուսինեին է հիշեցնում»:

## Տեղի ունեցավ Հայկազյան համալսարանի տարեվերջյան հանդեսը

**Մայիսի 24-ին տեղի ունեցավ Բեյրութի Հայկազյան համալսարանի տարեվերջյան հանդեսը: Շուրջ 130 ուսանողներ ավարտեցին համալսարանը՝ կազմելով նրա 59-րդ շրջափուլը:**

**Պաշտոնական հանդիսությանը ներկա են եղել Լիբանանի զբոսաշրջության նախարար Ավետիս Կիդանյանը, Լիբանանի խորհրդարանի պատգամավոր Հակոբ Բագրատունին, ընկերային հարցերի նախարար Ռիշար Գույումճյանը, պատգամավոր Ժան Թալուզյանը, Լիբանանի Կաթողիկե հայոց Բեյրութի պատրիարքական թեմի օգնական եպիսկոպոս Գեւորգ Ասատրյանը եւ այլք:**

## Գլենդեյլում փակվել է հայապահպանության կարեւոր կռվաններից մեկը՝ «Գրատուն Պերճը»

**ԱՄՆ-ում լույս տեսնող «Պայքար» շաբաթաթերթի էջերում ցավով կարդացինք Ռուբինա Նազարյանի հոդվածը, որտեղ նա գուժում է, որ փակվում է Գլենդեյլում արդեն 32 տարի գործած, հայության ու հայկականության շունչը համարվող «Պերճ» գրախանութը:**

**Գրախանութի հիմնադիր-տնօրենը Պերճ Տեր-Սահակյանն է, որի հայրը՝ Ավետիս Տեր-Սահակյանը Բեյրութում նույնպես ժամանակին զբաղվել է այդ գործով, որտեղից էլ առաջացել է Պերճի սերը գրքերի հանդեպ:**

**Հույս ունեմ, որ հայրենիքում շատերն իրենց ափսոսանքը կհայտնեն այս երեւույթի վերաբերյալ, մանավանդ որ մեր «սփյուռք-հայրենիք», «ազգ-մշակույթ» կապերի պատասխանատուները չեն պատրաստվում՝ գոնե արձագանքելու տեղի ունեցածին:**



**Հիշեցնենք, որ «Գրատուն Պերճը» Ամերիկայում լավագույն վայրն էր Հայաստանում լույս տեսած գրքերի ընթերցողների համար:**

## Նոր գիրք. «Արդի հայերենի կետադրության հիմնախնդիրներ»

**Լույս է տեսել Երեւանի պետական համալսարանի ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ.գ. դոկտոր-պրոֆեսոր Յուրի Ավետիսյանի «Արդի հայերենի կետադրության հիմնախնդիրներ» (Երեւան, 2019. ԵՊՀ հրատարակչություն, 177 էջ) կարեւոր աշխատությունը: Դրանով հեղինակը միտում ունի՝ լուծելու եւ կանոնակարգելու հայերենի կետադրության մի շարք կնճռոտ հարցեր, որոնք տարիներ շարունակ գիտական վեճերի ու բանավեճերի առիթ են հանդիսացել:**

***Հ.Գ. Հիշյալ գրքի լույսընծայմանը զուգահեռ լույս է տեսել նաեւ հեղինակի մեկ այլ աշխատանք՝ «Դպրոցական մատենաշարի» տասներկուերորդ մատյանը՝ «Կետադրությունը» (Երեւան, 2019, «Զանգակ» հրատարակչություն, 80 էջ): Գիրքը «Դպրոցական մատենաշարի» «Շարահյուսություն» գրքում տեղ գտած «Կետադրություն» բաժնի ավելի ընդարձակ, լրամշակված տարբերակն է:***

AZG NEW MSHAKUIT.qxd 06/06/2019 19:18 Page 2



Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Քրիստինա Ահմաջյան. «Եթե հայերը մնան լավատես, եռանդուն ու համբերատար, «հայկական հրաշքը» կկայանա»



Դոկտոր Քրիստինա Ահմաջյանին ես հանդիպեցի Հայաստանի տնտեսագիտական պետական համալսարանում, որտեղ նա հանդես եկավ «Ճապոնական հրաշք. մարտահրավերներ եւ սերտած դասեր» դասախոսությամբ: Բանախոսուհին, որ Տոկիոյի Հիտոցուբաշի համալսարանի ուսուցչապետ է, ներկայացրեց Ճապոնիայի պատմության երկու տնտեսական «հրաշքները»՝ 20-րդ դարի սկզբին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ ցույց տալով դրանց ծագումը, զարգացումը եւ արդի ճապոնական տնտեսական համակարգի առանձնահատկությունները:

Քրիստինա Ահմաջյանը 2008 թ.-ի սեպտեմբերից Հիտոցուբաշի համալսարանի միջազգային կորպորատիվ ռազմավարության բարձրագույն դպրոցի փոխդեկան եւ ուսուցչապետ է: 1982-ին աշխատանքի է անցել «Միցուբիշի էլեկտրիկ» ընկերությունում, 1987-ին՝ «Բեյն էնդ Կոմփանի» ընկերությունում: 1995-ից եղել է Կոլումբիայի համալսարանի բիզնեսի բարձրագույն դպրոցի դոցենտ: 2004-ից Հիտոցուբաշի համալսարանի միջազգային կորպորատիվ ռազմավարության բարձրագույն դպրոցի պրոֆեսոր է: Քրիստինա Ահմաջյանը տնօրինում է «Սումիմոտո էլեկտրիկ ինդասթրիզ» ՍՊԸ-ն, 2012-ից «Միցուբիշի հեվի ինդասթրիս» ՍՊԸ-ի արտաքին տնօրենն է, աուդիտի եւ վերահսկիչ հանձնաժողովի անդամ, խորհրդի անդամի եւ այլ պաշտոններով համագործակցում է նաեւ ճապոնական այլ ընկերությունների հետ:

Երկար ժամանակ հետազոտելով հայ-ճապոնական պատմամշակութային առնչությունները՝ չէի կարող չօգտվել այս ծանոթությունից եւ հարցազրույց չվարել Քրիստինայի հետ...

**-Ինչպե՞ս պատահեց, որ դուք, լինելով ամերիկացի ուսանող, հայտնվեցիք Ճապոնիայում:**

-Համալսարանի բակալավրիատում որպես մասնագիտություն ընտրեցի արեւելյան ասիական ուսումնասիրությունները՝ մասնագիտանալով չինարենի, Չինաստանի պատմության եւ հասարակության հետազոտման մեջ: Ես շատ հետաքրքրված էի օտարերկրյա մշակույթներով ու լեզուներով, եւ Չինաստանը նոր էր բացվել ԱՄՆ-ի առջեւ: Սակայն, երբ դեռ համալսարանում էի, իմ պրոֆեսորներից մեկը հրատարակեց «Ճապոնիան որպես առաջինը» հայտնի գիրքը: Նա մեզ ասաց, որ Ճապոնիան է ապագան եւ խրախուսեց գնալ Ճապոնիա՝ ուսումնասիրելու ճապոնական հասարակությունը եւ բիզնեսը: Այդ ժամանակ ԱՄՆ-ի տնտեսությունն անկման մեջ էր, իսկ Չինաստանում շատ աշխատանքի հնարավորություններ չկային: Այնպես որ համալսարանն ավարտելուց հետո տեղափոխվեցի Ճապոնիա: Մեկ տարի դասավանդեցի անգլերեն, այնուհետեւ աշխատանք գտա ճապոնական ընկերությունում:

**-Արեւմուտքցու համար ցնցում չէ՞ր այդքան տարբեր աշխարհում հայտնվելը:**

-Այո, շատ մեծ ցնցում էր: Ամենամեծ ցնցումը կանանց ցածր կարգավիճակն էր: Ճապոնական այդ ընկերություն ընդունվելուս առաջին իսկ օրն ինձ խնդրեցին լվալ մոխրամանները: Ես պետք է նաեւ թեյ ու սուրճ մատուցեի իմ գործընկերներին եւ գրասենյակի հյուրերին: Բացի այդ, ես շատ զարմացած եւ ցնցված էի այն ժամանակվա ցածր կենսամակարդակից: Տները փոքր էին եւ վատ էին տաքացվում: Կենցաղային տեխնիկան պարզունակ էր: Հեռախոսային ծառայությունը՝ շատ թանկ: Ճապոնիայում ու նրա սահմաններից դուրս ճանապարհորդելը նույնպես թանկ էր: Այս ամենը հետաքրքրական էր, բայց այնքան էլ հեշտ չէր այնտեղ ապրելը: Մյուս կողմից, թեեւ մարդիկ բարեկամաբար էին տրամադրված, բայց ոչ առանձնապես՝ օտարերկրացիների շրջանակում: Մի քանի տարի անց հասկանալով, որ Ճապոնիան ինձ համար ապրելու լավ վայր չէ՝ վերադարձա ԱՄՆ:

**-Բայց դուք հետո նորից գնացիք Ճապոնիա ու հիմա խոսում ու կարդում եք ճապոներեն: Որքա՞ն եք ներգրավվել ճապոնական հասարակությանը:**

-2000 թվականին կրթաթոշակ ստացա՝ Ճապոնիայում մեկ տարի մնալու եւ կորպորատիվ կառավարում ուսումնասիրելու համար: Նախատեսել էի մնալ մեկ-երկու տարի, բայց Ճապոնիայում իրավիճակը բավական փոխվել էր: Կնոջ կարգավիճակը բարձրացել էր, արտասահմանցիներն ավելի շատ էին ու ավելի լավ էին ընկալվում, կենսամակարդակն էլ ավելի բարձր էր, անգամ շատ ավելի բարձր ԱՄՆ-ից (չնայած որ Ճապոնիայում տները դեռ շարունակում են փոքր մնալ):

Իհարկե, ես երբեք ճապոնացի չեմ դառնա, քանի որ դրա համար պետք է էթնիկ ճապոնացի լինել: Բայց ես աշխատում եմ ճապոնական համալսարանում, ճապոնական ընկերությունների խորհրդի անդամ եմ եւ, անկեղծ ասած, իմ ժամանակի մեծ մասը անց եմ կացնում իմ ճապոնացի ընկերների ու գործընկերների հետ: Տոկիոյում օտարերկրացիների մեծ համայնք կա, բայց ես իրապես դրան մաս չեմ կազմում, թեեւ ընկերներ ունեմ ամբողջ աշխարհում:

**-Հայերը, հանդիպելով միմյանց, սովորաբար հարցնում են միմյանց արմատներից: Բնիկ որտեղացի՞ եք:**

-Մեծ հայրս եղել է Բազմաշենից, Խարբերդից: Նրա հայրը, թողնելով ընտանիքը, մոտ 1890-ին արտագաղթել է ԱՄՆ: Իմ պապը ԱՄՆ է արտագաղթել մոտ 1910-ին: Տատիկիս ընտանիքը նույնպես Խարբերդից է, թեեւ վստահ չեմ, որ նույնպես եղել է բազմաշենցի: Նա եւս նույն ժամանակաշրջանում է եկել Ամերիկա, թեեւ, կարծում եմ, նրա հայրը եկել էր ավելի վաղ: Իրականում, մեր ընտանեկան պատմությունն այնքան էլ որոշակի չէ, քանի որ մեծ ծնողներս այդ մասին այնքան էլ չէին խոսում, եւ որքան գիտեմ, նրանք մի քանի գրառում են թողել այդ մասին: Իմ տատիկն ու պապիկը բնակություն են հաստատել Ուիթինսվիլում (Մասաչուսեթս), ունեցել են վեց որդի, որոնցից հինգը հասել են չափահասության: Թեեւ նրանք գրեթե կրթություն չունեին, եւ պապիկս երբեք էլ չսովորեց անգլերեն, իրենց զավակներին ուղարկել են ամերիկյան լավագույն համալսարանները՝ Մասաչուսեթսի Տեխնոլոգիայի ինստիտուտ, Հարվարդ, Վեսթ Փոյնթ, Բերքլի, Քլարք եւ Բաբսոն: Հայրս ընտանիքում ամենակրտսերն էր եւ հայերեն այնքան էլ չի սովորել: Մայրս հայ չէ, ունի շվեդական ծագում, բայց իմ ընտանիքի հայկական կողմը սիրել եւ ընդունել է նրան:

**-Ճապոնիայում շատ փոքր հայ համայնք կա: Կապ ունե՞ք նրա հետ:**

-Ճանաչում եմ դեսպան Պողոսյանին, դեռ այն ժամանակվանից, երբ նա համալսարանի պրոֆեսոր էր՝ նախքան դեսպան դառնալը: Ճապոնիայում շատ հայերի չեմ հանդիպել, բայց կցանկանայի ավելի շատ կապ ունենալ հայ համայնքի հետ:

**-Անցյալ տարվա հեղափոխությունից հետո Հայաստանի նոր կառավարությունը հաճախ է խոսում տնտեսական հեղափոխության մասին: Նույնիսկ չլինելով Հայաստանի տնտեսության մասնագետ՝ կարծո՞ւմ եք, որ «հայկական հրաշքը» հնարավոր է:**

-Այո, կարծում եմ, որ «հայկական հրաշքի» ժամանակը եկել է: Ես չափազանց տպավորված էի այն բոլոր հայ երիտասարդների վճռականությամբ, եռանդով եւ լավատեսությամբ, որոնց հանդիպեցի իմ այցելության ժամանակ: Եվ տպավորված եմ նոր ծրագրերի խթանմանն ուղղված շատ նախագծերից եւ ԱՄՆ-ի ու եվրոպական բիզնեսների հետ համագործակցության հեռանկարից: Կարծում եմ, որ Հայաստանը ճապոնական բիզնեսի համար շատ կարեւոր գործընկեր կարող է դառնալ: Ճապոնիայում բնակչությունը զգալիորեն նվազում է, ու թեեւ կրթության մակարդակը ընդհանուր առմամբ բարձր է, սակայն երիտասարդները չեն ձգտում կատարելագործվել տեխնիկական բնագավառում: Ընկերությունները պայքարում են ճարտարագետներ գտնելու համար, հատկապես արհեստական ինտելեկտի, կիբեռնետիկական անվտանգության, ֆինանսական տեխնոլոգիաների եւ այլ ոլորտների համար: Կարծում եմ՝ Հայաստանը կարող է օգնել ճապոնացիներին լրացնել մարդկային ռեսուրսների այս աճող բացը:

**-Դուք առաջին անգամ էիք Հայաստանում: Դա շարքային մի ուղեւորությո՞ւն էր ձեզ համար, թե՞ հատուկ մի բան էր:**

-Այս տարի Դավոսում կայացած Համաշխարհային տնտեսական ֆորումի ժամանակ ես հանդիպել էի վարչապետ Փաշինյանին, եւ շատ ոգեւորված էի՝ տեղեկանալով թավշյա հեղափոխության, տնտեսական եւ սոցիալական հետաքրքրական քաղաքականության եւ հայ ժողովրդի ուժի մասին: Դավոսում նախորդ տարի ես հանդիպել էի նաեւ նախկին վարչապետ Կարապետյանին եւ տպավորվել էի նաեւ Հայաստանի տնտեսության աշխուժացման քաղաքականության նրա նկարագրությունից: Ճիշտն ասած, ես երբեք չէի մտածել Հայաստան ճամփորդելու մասին՝ պատկերացնելով այն որպես զբոսաշրջության եւ կոնյակի մի վայր: Նոր Հայաստանի մասին իմանալով՝ ես վճռեցի այցելել: Վարչապետ Փաշինյանի գրասենյակը սիրով օգնեց ինձ հանդիպումների եւ բուհերի դասախոսությունների կազմակերպման հարցում: Դեսպան Պողոսյանը եւս մի քանի օգտակար խորհուրդ տվեց՝ ո՛ւր այցելել:

Անհամբեր եմ, թե երբ եմ վերադառնալու Հայաստան: Հաջորդ անգամ, հուսով եմ, հետս կբերեմ իմ ճապոնացի ուսանողներին: Ճապոնական հրաշքի սկիզբը ավելի քան 100 տարի առաջ էր, երբ երիտասարդ ճապոնացիները տապալեցին սամուրայների գերիշխանությունը եւ վերադարձրին կայսերը: Երիտասարդները ճամփորդում էին արտասահման՝ լավագույն փորձ ձեռք բերելու եւ վերադառնում էին Ճապոնիա՝ ստեղծելու նոր հասարակություն ու տնտեսություն: Այսօր Հայաստանը նման է Ճապոնիայի այդ ժամանակաշրջանին, երբ մարդիկ կառուցում էին նոր երկիր, նոր տնտեսություն եւ նոր հասարակություն: Այսօր մենք տեսնում ենք, թե ի՛նչ հաջողությամբ Ճապոնիան դա իրականացրեց: Կարծում եմ, որ եթե գործընթացը զգուշորեն ղեկավարվի, եւ եթե հայերը մնան լավատես, եռանդուն ու մի քիչ համբերատար, «հայկական հրաշքը» կկայանա...

***Խմբ. կողմից***.- *Ըստ երեւույթին «Ճապոնական հրաշք»ի գովերգու հայուհին այնքան էլ չի տիրապետում հայաստանյան եւ ընդհանրապես հայկական իրականությանը: Օրինակ չգիտի, որ մեր երկիրն ամենից առաջ, ներառյալ Արցախը, կարիք ունի մարդուժի, հետեւաբար մեր երիտասարդները չե՛ն, որ պետք է լրացնեն Ճապոնիայի մարդկային ռեսուրսների բացը: Բոլորովին տարբեր հարց՝ եթե նրանք, մեր երիտասարդները, Հայաստանից աշխատեն լրացնել տարբեր երկրների բացերը, եւ ոչ միայն մարդկային ռեսուրսների, գումար բերելով Հայաստան, միաժամանակ սովորելով զարգացած երկրների փորձը:*

# Նարինե Աբգարյանի «Մանյունյան» մոսկովյան բեմում



Մայիսի 28ին Մոսկվայի Ռուսական ակադեմիական երիտասարդական թատրոնի մեծ դահլիճում «Կեռասի անտառ» փառատոնի շրջանակներում կայացավ «Մանյունյա» ներկայացման պրեմիերան՝ մոսկվաբնակ հայաստանցի գրող **Նարինե Աբգարյանի** համանուն վեպի մոտիվներով: Բեմադրությունն իրականացրել է հայազգի բեմադրիչ **Ռուզաննա Մովսեսյանը**, որը 1996-2000 թթ. ղեկավարել է «Թռչող նավ» մանկական թատրոնը: Ըստ «Ռոսիյսկայա գազետայի» թղթակից **Ալյոնա Կարասի**՝ ռեժիսորին հաջողվել է ինչ-որ անհասանելի կերպով փոխանցել 1970-80-ական թվականների կախարդական եւ արկածալից մանկության մթնոլորտը: «Այդ խորհրդային մանկությունը հայկական գավառային քաղաքում նման չէ ժամանակակից աշխարհի ոչ մի բանին: Սակայն տարօրինակ կերպով մանկական դահլիճը մե՛րթ լրջանում էր, մե՛րթ ուշաթափվում էր ծիծաղից»:

Հոդվածագիրը ներկայացման մեջ պատկերված միջավայրը համեմատել է Ֆելինիի գավառի հետ, որի գլխավոր գործող անձինք են շիկահեր հրեուհի Մանյունյա Շացը (դերակատար՝ **Աննա Կովալյովա**) եւ նրա հայ ընկերուհի Նարինե Աբգարյանը (**Աննա Դվորժեցկայա**): Ներկայացմանը հատուկ փայլ է տվել Մանյունյայի կոլորիտային Ռոզա տատիկի դերակատարուհին՝ թատրոնի եւ կինոյի սիրված դերասանուհի, Ռուսաստանի վաստակավոր արտիստուհի **Նինա Դվորժեցկայան**: Ի դեպ, առաջին գործողության ավարտին հանկարծ հնչում է մի ձայն. Նարինե Աբգարյանը կարդում է Օսիպ Մանդելշտամի՝ Հայաստանին նվիրված բանաստեղծություններից մեկը:

Հիշեցնենք, որ Ռուսաստանի բարձրագույն գրական մրցանակի՝ «Յասնայա Պոլյանայի» դափնեկիր Նարինե Աբգարյանի «Մանյունյան»՝ նրա առաջին գիրքը, լույս է տեսել 2010-ին (երբ հեղինակն արդեն 39 տարեկան էր) եւ արժանացել է աննախադեպ ժողովրդականության Ռուսաստանում, թարգմանաբար հրատարակվել նաեւ հայերեն, ֆրանսերեն, լատվիերեն, էստոներեն եւ բուլղարերեն:

Ա. Բ.

AZG NEW MSHAKUIT.qxd 06/06/2019 19:18 Page 3



# Նվիրում Զառա Տեր-Ղազարյանին

Օլյա ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ

Նրանք հայ երաժշտական աշխարհ եկան միանգամից, ոգեշունչ ու միշտ հետաքրքրական բովանդակությամբ. եկան մտավորականների ընտանիքներից, յուրաքանչյուրը թրծվեց իր ժամանակի կրթական ամուր դպրոցում (առաջինի մինչբուհական դարբնոցը Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական դպրոցն էր, մյուս երաժշտինը՝ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը), ամեն մեկն ամրացավ քաղաքացիական համաժողովրդական զարթոնքի շրջանում (առաջինը Եղեռնի 50-րդ տարելիցից պայթած «Տվեք մեզ մեր հողերը» կարգախոսով՝ 1960-ականներին, մյուս երաժիշտը՝ Արցախյան շարժման ու «Միացում» նշանաբանով 1980-ականների վերջին), նրանք ստեղծեցին երաժշտի իրենց անդավաճան ավանդույթը (առաջինը՝ մանկավարժ- գիտնականի, մյուսը՝ մանկավարժ - կատարողի)...

Ավագ երաժիշտը Զառա Տեր-Ղազարյանն է՝ երաժշտագետ, արվ. թեկնածու, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Կոմպոզիտորների միության եւ Երաժշտական ընկերության անդամ: Նրա կրտսեր ժամանակակիցը Սոնա Հովհաննիսյանն է՝ խմբավար, «Հովեր» պետական կամերային երգչախմբի հիմնադիր-ղեկավար, Երեւանյան կոնսերվատորիայի բազմամյա դասախոսը, պրոֆեսորն ու այսօրվա նորանշանակ ռեկտորը: Նրանք համաքայլ ու համախոհ էին արվեստը սիրել սովորեցնելու շնորհով, երեւակայությունը վառ պահելու անգին առանձնահատկությամբ,նրանք գործի մեջ գաղափարակից երաժիշտներ էին, իսկ մտերմիկ զրույցներում սրտակից մարդիկ, նրանք միատեղ էին մինչեւ 2013 թվականը՝ մինչեւ Զառա Տեր-Ղազարյանի վաղաժամ մահը...

Այս անունները նորից հանդիպեցին 2019 թվականի մայիսի 22-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացած համերգին, որտեղ Զառա Հայկովնայի մտքի ու Սոնա Հովհաննիսյանի ձեռքի կենդանի ձայները նորից միասին հնչեցին. խմբավարը հարգելով վաստակաշատ երաժշտագետի ընտանիքի կորուստի ցավն ու ցանկությունը, միայն տարիներ անց հնարավորություն ունեցավ իրականացնել նվիրումի համերգ ընծայելու իր փափագը:

Խմբերգային երեկոն զգայուն ու բնորոշիչ խոսք էր տարբեր ժամանակների, երկրների կոմպոզիտորական արվեստի միջեւ, որպես կոնսերվատորիայում «Երաժշտության պատմություն» դասընթացը Զառա Հայկովնայի պես մինչ օրս անգերազանցելի ավանդած եւ պատմությունը գիտության նման մեծ ու համապարփակ դասախոսի համար սիրված մի ճամփորդություն: «Հովեր»-ի մտահղացմամբ այդ ընթացքը սկսվել էր դեռեւս համերգային ազդագրի ձեւավորումից, որը քանդակագործության պատմության մեջ լավագույն գործերից մեկի՝ 16-րդ դարի վերջի ֆլամանդացի վարպետ Ջամբոլոնիայի «Սաբինուհու առեւանգումը» մարմարե կոմպոզիցիայի հռոմեացուն պատկերող դրվագն էր՝ թռչնակի համադրությամբ: Համերգին պարզ դարձավ, որ «Թռչունների երգ»-ով պետք է սկսվեր նվիրումի երեկոն: Նշենք, որ ծրագրի յուրաքանչյուր ստեղծագործությունը կամրջվում էր Զառա Հայկովնայի անձի ու ստեղծագործական դիմանկարի հետ: Համերգը շրջանակել էին երաժշտության ու բնության փոխադարձ գայթակղությամբ ծնված ստեղծագործությունները՝ ֆրանսիական 16-րդ դարից մինչեւ ֆիննական, դանիական ու կանադական 20-րդ դար. ծրագրի մուտքը Վերածննդի նշանակալի անուններից մեկի՝ նուրբ քնարերգու, հումանիստ կենսասեր Կլեմենս Ժանեկենի «Թռչունների երգ»-ով լսարանին ուղղված կանչն էր. «Արթնացեք, քնած սրտեր: Թռչունները ձեզ կհիացնեն, քնքուշ երաժշտությունը կերգեն բնական ձայներով, դուք երջանիկ կլինեք...»: Ֆելիքս Մենդելսոնի (Սաղմոս 43, op 78, no 2 ), Անտոն Բրուքների (Ave Maria), Քշիշտոֆ Պենդերեցկու (Sanctus) գործերի ներառումը ամբողջությամբ արտացոլվում է Զառա Հայկովնայի հեղինակած «Արեւմտաեվրոպական երաժշտության պատմություն» ուսումնական ձեռնարկի մի հատվածի հետ. «Եվրոպական պրոֆեսիոնալ երաժշտության արվեստի ձեւավորման ճանապարհը անցնում է հոգեւոր ավանդույթի կազմավորման ուղիներով: Հոգեւոր մշակույթը դառնում է պրոֆեսիոնալ արվեստի ձեւավորման օրրանը» (էջ՝ 53): Նվիրումի երեկոյին «Հովերի» եւ «Լե» իգական կազմի (խմբավար՝ Նարինե Ոսկանյան) մեկնաբանությամբ հնչեցին Կոմիտասի Պարերգերը, Վաչե Շարաֆյանի «Նե» խառը երգչախմբի եւ զանգակների համար գրված օպուսն ու Աննա Ազիզյանի «Լիր Արքա» գործից՝ «Խեղկատակի մարգարեությունը»: Համերգային ծրագրի երրորդ ենթաբաժնում ներկայացվեց 20-րդ դարի արտասահմանյան խմբերգային արվեստը: Ֆին կոմպոզիտոր, թարգմանիչ ու երգչախմբային երգիչ Յաակո Մանտյարվին «Շեքսպիրյան 4 երգ» ( Four Shakespeare Songs) շարքում արտացոլել է իր՝ էկլեկտիկ-տրադիցիոնալիստի ստեղծագործական հավատամքը, այն է՝ ընկալել տարբեր ժամանակների ազդեցությունները եւ հիմնվել երաժշտական լեզվի ավանդական մոտեցման վրա, զուտ ու ժլատ լինել ամեն նորի հանդեպ: Դանիացի Հանս Շանդլերին բնութագրում են իբրեւ մի կոմպոզիտորի, ով թույլ է տալիս բնությանը հաճույքով ներթափանցել երաժշտարվեստի մեջ, այդպիսի նմուշներից էր «Հովերի» մեկնաբանմամբ ներկայացված «Buji-ja Buj-ju» խմբերգային պատկերը:

Համերգը եզրափակեցին կանադացի կոմպոզիտոր, գրող, շրջակա միջավայրի պաշտպան Մյուրեյ Շաֆերի երկու գործերը «Snowformes», «Maniwanka», որտեղ հեղինակը՝ «ակուստիկ էկոլոգիայի հայրը», հավերժացրել ու հնչյունավորել է բնության մեջ ապրող երկու վիճակները՝ ձյան ու ջրի տարատեսակները, որոնց պարտիտուրները նորագույն նոտային գրաֆիկայի օրինակ են ներկայացնում եւ դրանով չափազանց համահունչ են Վերածննդի վարպետների մոտ հանդիպող տրամաբանությանը: Զառա Հայկովնան գրել է, որ Ֆրանկոֆլամանդական պոլիֆոնիկ դպրոցի «ձայնատարության մշակույթն իր զարգացման մեջ կենտրոնանում է զուտ տեխնիկական խնդիրների լուծման վրա՝ դրանք հասցնելով կատարյալ մաթեմատիկական ճշգրտության...» («Արեւմտաեվրոպական երաժշտության պատմություն», էջ՝ 93):

Զառա Տեր-Ղազարյանը հայ երաժշտագիտական մտքի պայծառ անհատականություններից է: Նա մեծ ինտելեկտով առանձնացող գիտնական մանկավարժ էր, որի խոսքն առանձնանում էր միայն իրեն բնորոշ տաղանդով: Կոնսերվատորիական լսարանում, գիտաժողովներում, պատասխանատու բեմերում, սովորական զրույցներում նա հաստատում էր իր անսովոր ու եզակի ձեռագիրը: Նրա ազդեցիկ կերպարն ու գործը չէր կարող անտարբեր թողնել ժամանակակիցներին: Նրա դասախոսությունները եւ՛ հռետորական էին, եւ՛ լիրիկական պատկերավոր՝ լեցուն ներշնչանքով: Խոսքը դիպուկ էր, ընկալելի, իսկ երաժշտական ստեղծագործություններին տրված գնահատականները անաչառ ու պրոֆեսիոնալ, դիտարկումներն ու դիտողությունները զուտ եւ չափավոր:

Զառա Հայկովնայի գրիչը անտարբեր չէր թողնում դեռեւս ուսանող տարիներին, երբ նրա հոդվածներից մեկը առիթ էր ունեցել կարդալ Պարույր Սեւակը: Մեծանուն բանաստեղծն ու գրականագետը ապագա երաժշտագետի մորը՝ բանասիրական գիտությունների դոկտոր Մերի Սաղյանին ասել էր. «Ձեր դուստրը իմ նման է մտածում: Ի՞նչ հարազատ է ինձ նրա գրիչը»:

Անարձագանք չի մնացել երաժշտագետ Զառա Տեր-Ղազարյանի բեմական խոսքը: Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միությունն իր պատմության ընթացքում հազիվ թե ունենար այնպիսի նախադեպ, թե ինչպես մի երաժշտագետ պարբերաբար ներածական խոսքով էր ներկայացնում գարնանային ու աշնանային պլենումների ամենատարբեր համերգների, հոբելյանական փառատոնների շարքերը: Նրա խոսքով էին ներկայացվում հարազատ կրթօջախի պաշտոնական շնորհավորանքներն ու հանդիսավոր երեկոները: Այս դեպքում հիշում ենք ռուսական թատրոնի եւ կինոյի արտիստ Վենիամին Սմեխովին, որը ներկա



Զառա Տեր-Ղազարյան, Իրինա Տիգրանովա, Միխայիլ Կոկժաեւ



էր Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 90-ամյա հոբելյանի հանդիսավոր համերգին: Այդ օրվա ներածական խոսքը հնչեց Զառա Հայկովնայի կատարմամբ: Համերգից հետո Վենիամին Սմեխովը՝ գրողի, դերասանի, ռեժիսորի, ասմունքողի, դրամատուրգի, հաղորդավարի ու աշխարհի քաղաքացու բացարձակ բարձունքները նվաճած մտավորականն իր թավաձայն ու իմաստուն բասով Զառա Հայկովնային էր հաղորդել իր հիացմունքը. «Ես հայերեն չգիտեմ, բայց ձեր էմոցիոնալ խոսքն ու արտիստիկ կեցվածքն ամեն ինչ հասկանալի դարձրին»:



Ռուդոլֆ Խաչատրյան. «Զառա Հայկովնա»

Ընտանեկան մի պատմություն կա.մտավորականների երկու տոհմի ներկայացուցիչներ Զառա Տեր-Ղազարյանը եւ նրա ամուսինը՝ ականավոր գենետիկ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Հարությունյանը 1983-ին Ռուդոլֆ Խաչատրյանին էին պատվիրել իրենց 6-ամյա դստեր դիմանկարը: Բնական է, որ սեանսը ուղեկցվում էր փոքրիկ Եվայի մայրիկի հոգատար ներկայությամբ ու ամենատարբեր թեմաների մասին զրույցներով: Երբ ավարտում է պատվիրված աշխատանքը, հանկարծ Ռուդոլֆ Խաչատրյանն անսպասելի դիմում է Զառա Հայկովնայի ամուսնուն. «Թույլ տվեք նկարել ձեր տիկնոջը»... Եվ հայ մեծագույն նկարիչներից մեկը, զարմանալի ու առեղծվածային Ռուդոլֆ Խաչատրյանը հավերժացրեց նկարիչ Հայկ Տեր Ղազարյանի դստեր դիմանկարը:

Մի անգամ Զառա Տեր-Ղազարյանն անկեղծացել էր, որ ամեն հայ իր կյանքում անպայման երկու տեղ պետք է գնա. Արեւմտյան Հայաստան եւ Երուսաղեմ: Իր կյանքի նախավերջին ամառը իրականացրեց Երգիրը տեսնելու պարտքը, իսկ Երուսաղեմ հասնել չստացվեց, այդ ճանապարհն անցնելը մենք չտեսանք, բայց վստահ ենք՝ նա այնտեղ է, երկնային արքայությունում...

Զառա Հայկովնան չափազանց շուտ գնաց: Նրա ժամանակը հիմա էր, մեր կողքին, նրա նման մեծի, մասնագետի, մարդու ու մտավորականի կարիքն ունի այսօրվա Հայաստանը...

AZG NEW MSHAKUIT.qxd  06/06/2019  19:18  Page 4



# Բոսֆորի լույսը:

## Փամուքի լուսանկարները «Բալկոնում»

***Ստորեւ ներկայացնում ենք հատվածներ «Los Angeles Review of Books» գրախոսականների պարբերականում վերոնշյալ խորագրի ներքո մայիսի 19-ին հրատարակված ընդարձակ հոդվածից, որի հեղինակն է Դյուկ համալսարանի Մերձավոր Արեւելքի ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար Էրդաղ Գյոկնարը: Վերջերս նա լույս է ընծայել «Օրհան Փամուք: Աշխարհիկություն, անարգանք եւ քոչվորաբանություն» բանաստեղծությունների հատորը (Orhan Pamuk, Secularism and Blasphemy and Nomadologies: Poems): Հիշատակված պարբերականում նա գրախոսել է Փամուքի «Բալկոն» լուսանկարների ալբոմը:***


Օրհան Փամուք


Արա Գյուլեր



Օրհան Փամուքի լուսանկարները արտացոլում են հաճախակի կրկնվող յուրահատուկ պահեր, երբ գրողը կտրվում է գրելու գործընթացից եւ տրվում Բոսֆորի եւ Ստամբուլի խոհական ազդեցություններին: Իր գրածից դժգոհ այդ պահերին, նա լուսանկարներ անելով է սփոփանք գտնում, վերհիշելով Բոսֆորի լուսեղեն համայնապատկերն ու Օսմանյան շրջանի ճարտարապետական հուշարձանները: Իսկ լուսանկարների հետագա դասակարգումը արդեն իր ստեղծագործական մտքի արգասիքն է, որն իր արտացոլումն է գտել Փամուքի 568 գունավոր լուսանկարներ պարունակող «Բալկոն» ֆոտոալբոմում: Այդ լուսանկարները նա արել է 2012-13 թվերին, երբ «Տարօրինակությունը իմ մտքում» վեպը գրելիս տառապում էր մելամաղձոտությունից: Յուրաքանչյուր էջում զետեղված 2-ից 6 լուսանկարները ներկայացնում են 16-րդ դարի Ջահանգիր մզկիթի ձյունածածկ գմբեթը, պատմական Թոփգափու պալատական համալիրի լուսավոր ճակատը, Այա Սոֆիա եւ Կապույտ մզկիթների տպավորիչ տեսարանները: Հատորի սահմանափակ հնարավորությունները թույլ չեն տալիս ըմբոշխնելու որոշ նկարների ամբողջ գեղեցկությունը: Դրանք արժեր ավելի մեծ չափերով տեսնել պատերից կախված:

Փամուքը անդրադառնում է լուսանկարչության սրտառուչ դերին, երբ հատորում համեմատում է իր մոր ընտանեկան ալբոմի լուսանկարները 1890-ականներին Բրիտանական թանգարանին եւ Մ. Նահանգների Կոնգրեսի գրադարանին նվիրված Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հավաքածոյի (51 հսկայական ալբոմներ, որոնք պարունակում են 1.819 լուսանկարներ) հետ: «Դրանք դիտելիս իմ մեջ քանդվում է զգացմունքների կծիկը», խոստովանում է նա, եւ հիշում, որ իր առաջին լուսանկարչական ապարատը նվեր է ստացել, երբ 10 տարեկան է եղել: «Քեմալական Թուրքիայում կամերան եւ լուսանկարչությունը առհասարակ կապվում էին աշխարհիկ եւ արդիական լինելու գաղափարների հետ: Այդ ժամանակ մեր թերությունը դրանցից


Բոսֆորը Փամուքի աչքերով

զուրկ լինելն էր, եւ մարդիկ լուսանկարվելիս հաճախ փորձում էին ավելի աշխարհիկ ու արդիական տեսք ընդունել, քան իրենք իրականում էին», բացատրում է Փամուքը, նրանց այդ «ներկայացուցչական» դիրք ընդունելը հակադրելով թուրքահայ մեծ լուսանկարիչ Արա Գյուլերի բնական լուսանկարներին, որոնք մնում են, ըստ նրա, անգերազանցելի: «Մինչեւ 1950-ականները Ստամբուլի բնական առօրյա կյանքը չէր արտացոլվում լուսանկարներում: Արա Գյուլերի շնորհիվ է, որ այդ «մշակույթը» մուտք գործեց Թուրքիա»:

Փամուքը, ըստ Գյոկնարի, իր «Ստամբուլ: Հիշողություններ քաղաքի մասին» հատորում ներառել է Գյուլերի 200 լուսանկարները, իսկ գրքի վերահրատարակման ժամանակ ավելացրել է եւս 200 լուսանկարներ: Դրանք, Փամուքի համոզմամբ, Ստամբուլի բնակիչներին հատուկ «հուզյունի»` մելամաղձոտության տեսանելի աղբյուրներ են: «Բալկոնում» աներկբայորեն Փամուքի կողքին ներկա է նաեւ Արա Գյուլերը: Վերջինիս մահվան առիթով Փամուքը «Նյու Յորք Թայմսում» գրած իր մահախոսականում նշում է. «Արա Գյուլերի Ստամբուլը իմ Ստամբուլն է: Բոլոր նրանց համար, ովքեր 65 տարի անց են կացրել միեւնույն այդ քաղաքում, բնապատկերը վառ հիշողություններ է արթնացնում: Տարբեր ժամերին արված Գյուլերի լուսանկարները բացահայտում են օր ու գիշեր Բոսֆորին ակնածանքով նայող Ստամբուլի բնակիչների գաղտնիքները»:

«Բալկոնում» լուսանկարները միավորում են գրական տեքստը, հեղինակին ու քաղաքը: Ուշադիր ընթերցողը նաեւ կռահելու է 19 թվի նշանակությունը Փամուքի կյանքում: Հատորում 568 լուսանկարների թվային գումարումը (5+6+8) հավասար է 19-ի: Նաեւ արաբերեն «ուահիդ» (միակը լինելը) բառի տառերի թվային արժեքների գումարն է 19-ը: Նա իր ծնողների միակ զավակն է: Եվ վերջապես Փամուքը 19 տարեկան էր, երբ լրագրող Ջելալ Սալիկը գրել է (այդ մասին Փամուքը հետագայում նշել է իր «Սեւ գիրքը» հատորում) հետեւյալը. «Յուրաքանչյուր լուսանկար ոչ միայն ներկայի սառած պահն է ներկայացնում, այլեւ անցյալի եւ նաեւ ապագայի պահերը, որովհետեւ լուսանկարներ անելը նշանակում է հույս ներշնչել»:

Փամուքը իր ալբոմ-հատորում լուսանկարների վրա է հենվում պատմական գրական եւ արխիվային փաստաթղթեր հայթայթելու նպատակով: «Դրանք գրական գործընթացի անբաժանելի մասն են, որոնք ոչ միայն գրավոր խոսքն են բացահայտում, այլեւ Փամուքի ապրած գրական կյանքի երկվությունը», ավարտում է գրախոսականը Էրդաղ Գյոկնարը:

**Պատրաստեց**
**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**
**(The Arm. Mirror-Spectator)**

# Հայ խորեոգրաֆի պարային համարը Սոֆիայում

Հունիսի 2-ին Սոֆիայի Մշակույթի ազգային պալատում կայացած «Պար, երաժշտություն եւ լույս» խորագիրը կրող համերգում ընդգրկված էր նաեւ «Բալլադ երազանքի մասին» պարային համարը` երեւանցի պարադիր **Արա Ասատուրյանի** բեմադրությամբ, Ֆրեդերիկ Շոպենի երաժշտությամբ (դաշնամուրային կատարումը` **Ռուզաննա Թաշչյանի**): Համարը կատարել են Բուլղարիայի պարարվեստի ազգային ուսումնարանի ուսանողները:

«Բալլադ երազանքի մասին»-ը սոսկ պարային համար չէ, այլ թատերականացված պարային ներկայացում, որը պատկերում է նախկին պարուհու հիշողությունները սեփական փայլուն կարիերայի եւ դժվար ճակատագրի մասին: Այն ստեղծվել է բուլղարաբնակ տաղանդավոր դաշնակահարուհի Ռուզաննա Թաշչյանի` հայ դաշնամուրային մանկավարժության երախտավոր Կեստի Մալխասյանի սանուհու գաղափարով եւ նրա իսկ անձնական պատմության հիման վրա, որի նվագը կարծես միջոց էր` պատմելու այդ պատմությունը:



Արա Ասատուրյանը հայ բալետի երախտավորներ Աշոտ Ասատուրյանի եւ Էլվիրա Մնացականյանի որդին է: Ավարտել է Երեւանի Բրյուսովի անվան լեզվագիտական համալսարանը (անգլերեն լեզու), Ազգային կոնսերվատորիան (դաշնամուր) ու Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտը (բալետմայստերական գործ): Այժմ բեմական շարժում է դասավանդում Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում: Երեւանի պարասեր հասարակությանը հայտնի են նրա պարային բեմադրությունները` «Գիտցեք, որ դեռ կենդանի եմ», «Ո՞ւր է, մահ, հաղթանակը քո», «Աղջիկն ու մահը», «Հայրեններ» եւ այլն: Նա է իրականացրել նաեւ Շուշիում ներկայացված «Կրակե օղակ» եւ «Արծվաբերդ» օպերաների, Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի «Ռոմեո եւ Ջուլիետ», Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Ուսանողական թատրոնի «Օթելլո» եւ «Թույն» ներկայացումների պարային ձեւավորումները: Ասատուրյանը հանդես է գալիս նաեւ որպես դրամատիկական դերասան, Երեւանի «Արմմոնո» թատերական փառատոնում ներկայացրել է «Կարապի երգը», «Ջվարճալի ծերունին», «Խելագարի հիշատակարան» եւ «Ձմեռային ճանապարհ» մենաներկայացումները: Երեւանում նրա կատարած վերջին մեծ բեմադրությունը մայիսին ցուցադրված «Հինգ տառ» բալետային ներկայացումն էր` նվիրված վաղամեռիկ պարող Վահագն Մարգարյանի հիշատակին:




Շնորհավորելով մեր արվեստագետին` մաղթում ենք, որ նրա «Բալլադը» մոտ ապագայում ներկայացվի նաեւ Հայաստանում:

**Ա. Բ.**